ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954



Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(**74**-րդ տարի) **Թիվ-9** (1643) — *Սեպտեմբեր 2020*

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

ՀՅԴ Բիւրօի յայտարարութիւնը *(էջ 1)*

1- Առաջնորդող
Ա. Շ.
Յուրաքանչյուրիս ընտրությունը կարմիր գծի առջև (էջ 1-4)

2- Հարցազրույց
Հարցազրույց ՀՅԴ Բյուրոյի նախագահ Արմեն Ռուստամյանի հետ
Ոչ միացում, ոչ անկախության ճանաչում, առկա վիճակը աշխատում է մեր դեմ (էջ 5-6)

3- Հայրենի եզերք
Միքայել Հաջյան
Մայր հայրենիքի հետ վերամիավորման ուղիով. Արցախի Հանրապետությունը 29 տարեկան է (էջ 7-12)

4- Քաղաքական
Գևորգ Ղուկասյան
Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման գործընթացը (էջ 13-15)

5- Տարածաշրջանային
Վահրամ Էմմիյան
Պէյրութի աղէտը. պատճառներ, հետեւանքներ ու վարկածներ (էջ 16-18)

6- Աշխարհաքաղաքական
Վ. Հ.
Վ. Պուտինը նախապատրաստում է Ռուսաստանը՝ դիմակայելու գալիք մարտահրավերներին (էջ 19-20)

7- ՀՅԴ ծննդյան 130 և հայրենիքում վերընձյուղման 30 ամյակներ
Հրայր Կարապետյան
Հայացք 30 տարի անց(էջ 21-23)

8- Հայրենի եզերք
Կարօ Վ. Մանճիկեան
Քեսապ 2020. իրավիճակը եւ մտորումներ (էջ 24-26)

9- Հայ կյանք
Վարդան Պետրոսյան
Հայեցակարգային հակասություններ կամ հայագիտության «հինգերորդ շարասյունը» (Մաս 1-ին) (էջ 27-30)

10- Ընկերական զրույցներ
Վիգէն Աբրահամեան
Համահայկական տեսլականի տագնապը. հայ համայնքներու համաշխարհային ապակեդրոնացեալ կառոյց (էջ 31-34)

11- Պատմության լուսարձակ
Արմեն Ասրյան
Ղարաբաղի խնդիրը 1918-1920 թթ: Անգլիայի դիրքորոշումը և մեր դասերը (էջ 35-39)
Անի Մելքոնյան
Բաքվի 1918 թ. ինքնապաշտպանությունն ու անկումը և դրա նշանակությունը Հայաստանի Հանրապետության համար (էջ 40-44)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀՅ Դաշնակցութեան Բիւրօն՝ ՀՅԴ հիմնադրութեան 130-ամեակի կապակցութեամբ, յայտարարում է համաներում բոլոր այն նախկին դաշնակցականների նկատմամբ, ովքեր հեռացուել կամ հրաժարուել են ՀՅԴ շարքերից և շարքերից դուրս գտնուած ժամանակ Դաշնակցութեան դէմ չեն գործել:
ՀՅԴ կազմակերպութեանը վերամիանալ ցանկացողները կարող են դիմել իրենց ներկա բնակութեան շրջանի ՀՅԴ մարմնին:

ՀՅԴ Բիւրո
01 Սեպտեմբեր, 2020 թ.

Յուրաքանչյուրիս ընտրությունը կարմիր գծի առջև

Ա. Շ.

Վերջին տասնամյակներին հայոց տոնացույցը հարստացել է հոբելյանական երկու օրերով՝ Հայաստանի և Արցախի անկախության ամրագրմամբ: Այս երկու պատմական իրադարձություններն էլ տեղի են ունեցել 1991 թվականի սեպտեմբեր ամսին: Երկու ձեռքբերումների ճանապարհն էլ սկսվել է նույն ակունքից՝ 1988 թվականին բռնկված Արցախյան ազգային-ազատագրական պայքարից:

Ինչո՞ւ բռնկվեց և ինչո՞ւ հենց տվյալ ժամանակ ընթացք առավ համաժողովրդական այդ շարժումը: Եթե փորձենք պատասխանել նման հարցի, նախ անհրաժեշտ կլինի բացատրել, թե որքանով է օրինաչափ որևէ ժողովրդի ազատ ապրելու իրավունքը: Արցախը քաղաքական նպատակներով մոգոնված Ադրբեջանի գերությանը հանձնելու պարտադրանքի հետ հայությունը, մասնավորապես՝ արցախահայությունը, երբեք չի համակերպվել և քիչ թե շատ նպաստավոր նկատված բոլոր ժամանակներում ընդվզել է:

1988 թվականի փետրվարին Երևանում ծավալված Արցախյան շարժման ղեկավար կազմում տեղի ունեցավ փոփոխություն, որն այն ժամանակ հուզախառով ժողովրդի ուշադրությունը առանձնապես չգրավեց: Այդ ժամանակից, սակայն, շարժման պահանջների մեջ ընդգծվեցին սոցիալ-տնտեսական ու ներքաղաքական հարցերը, շարժումը սկսեց ընդունել հակակրեմլյան-հակախորհրդային ուղղվածություն: Իհարկե, այդ վերջինի համար մենք հատուցեցինք կայսրության ցավոտ հակահարվածներով, որոնք արժեցան և՛ մարդկային, և՛ տարածքային կորուստներ:

1990 թվականի Գերագույն խորհրդի ընտրությունների նախօրյակին համազգային շարժման ղեկավար Լևոն Տեր-Պետրոսյանը «Հայք» թերթում հրապարակած հոդվածում գրում էր, թե Ղարաբաղն այդուհետ լինելու է Հայաստանի բոլոր իշխանությունների խաչը, իսկ նույն տարվա աշնանը արդեն Գերագույն խորհրդի նախագահ Տեր-

Պետրոսյանը նորընտիր խորհրդարանում ասաց, թե Ղարաբաղի հարցն իրենց նախընտրական ծրագրում չի եղել:

Հետագա տարիներին արդեն Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը հրապարակում էր հոդվածներ, որոնցում, կատարելով աշխարհաքաղաքական վերլուծություններ, իր իսկ առաջնորդած պայքարի նպատակի համար կանխագծում էր փակուղային վերջաբան: Գրավոր թե բանավոր ելույթներում նա բազմիցս հայտարարել է, թե ամեն գնով անհրաժեշտ է հասնել խաղաղության: Շատ միամիտ էր պետք լինել չհասկանալու համար, որ այդ «ամեն գնով»-ի առնտրի առարկան Արցախն է: Լևոն Տեր-Պետրոսյանը վարում էր բանակցություններ՝ ըստ, այսպես կոչված, փուլային սկզբունքի, և ճնշում էր գործադրում Արցախի օրվա իշխանությունների վրա՝ ազատագրված տարածքները հանձնելու համար: Ի վերջո, 1997 թվականի նոյեմբերի 1-ին «Հայկական ժամանակ» թերթում նա հրապարակեց «Պատերազմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը» հոդվածը՝ պարզորոշ հայտարարելով, որ եթե ուզում ենք պահել Արցախը, ուրեմն նրա հետ ընտրում ենք պատերազմը: Թերևս սրանով նա հույս ուներ ընդդիմության դեմ հանելու ժողովրդին և պարտադրել

տալու պարտությունը: Ժողովուրդն իսկապես ոտքի ելավ և պահանջեց Լևոն Տեր-Պետրոսյանի և իր առաջնորդած ուժի հեռացումը, որովհետև ինքը վաղուց էր կատարել իր ընտրությունը և հանուն այդ ընտրության կրել էր անասելի զրկանքներ, հատուցել էր մոտ 8000 զավակների կյանքով: Իհարկե, Լևոն Տեր-Պետրոսյանը սեփական նպատակներից ու մտասևեռումներից ցմահ հրաժարվողը չէ, օրինակ՝ 2007 թվականին ևս մեկ անհաջող փորձ կատարեց խորհրդարանական ընտրություններում՝ նույն պլատֆորմով հարաբերական հաղթանակի հասնելու՝ մտածելով, որ ժողովրդի մեջ մեծացած պիտի լինի պարտվողականության կողմնակիցների բանակը: Ինչպես հայտնի է, այդ անգամ էլ փորձն ապարդյուն անցավ:

Արցախյան քաղաքական ռազմավարությանը զուգահեռ՝ դեռևս ժողովրդական շարժման շրջանից Լևոն Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ շրջանառվում էր ազգային, կենսական նշանակության մեկ այլ թեմա: Ժողովրդի ականջին կաթեցվում էր այն դանդաղ ներգործության թույնը, թե Թուրքիան այլևս այն վատ Թուրքիան չէ, այսօրվա Թուրքիան պատուհան է Հայաստանի համար դեպի Եվրոպա և այլն:

Ստանձնելով երկրի իշխանությունը՝ տերպետրոսյանական թիմը միջոցներ ձեռնարկեց, որպեսզի պետական և ոչ պետական քարոզչադաշտից դուրս մղվեն ցեղասպանության, ազգային-ազատագրական պայքարի և անգամ մշակութային բնույթի հակաթուրքական ուղղվածության նյութերը:

Լևոն Տեր-Պետրոսյանը թուրքական կողմի հետ, այսպես ասած, տրամադրությունների շոշափման ընթացքի մեջ էր՝ հանդիպելով, օրինակ, Մոսկվայում Թուրքիայի դեսպան Վոլքան Վուրալի կամ Թուրքիայում հայտնի լրագրող, «Միլիեթ» թերթի աշխատակից Մեհմեդ Ալի Բիրանդի հետ: Իսկ իշխանավարման վերջին շրջանում հայտնի դարձավ, որ նախագահը միջնորդավորված բանակցությունների մեջ է «Գորշ գայլեր» կազմակերպության հիմնադիր-առաջնորդ Ալփարսլան Թյուրքեշի հետ: Իհարկե, շատ բաներ այդ բանակցություններից հայտնի չեն, սակայն այն, ինչ թուրքերը բարձրաձայնում էին հայ ժողովրդի համար, ընդհանուր առմամբ հետևյալն էր՝ եթե ցանկանում ենք պաշտոնական և բարիդրացիական հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ, պետք է մոռանանք ցեղասպանության հարցը, ճանաչենք հայ-թուրքական սահմանը, Ադրբեջանին վերադարձնենք Արցախը և այլն: Իրենք ինչ էին զիջելու՝ հայտնի չէ, երևի իրենց հետ հարաբերություններ հաստատելու պատիվը:

Հայաստանի ՀՀՇ-ական իշխանությունը, իհարկե, «ընդառաջող» որոշակի քայլեր կատարում էր թե՛ քարոզչական դաշտում և թե՛ հալածելով երկրի հակաթուրք ու պահանջատիրական գաղափարախոսության կրող կուսակցությանը: Իսկ ինչպիսի՞ն էր պետական գաղափարախոսությունը:

Ցայսօր հետևողականորեն պահպանելով Թուրքիայի և հայ-թուրքական հարաբերությունների հարցում դիրքորոշումը՝ Լևոն Տեր-Պետրոսյանը վերջերս մեծ աղմուկ հանած կրթական «նոր» չափորոշիչների առիթով որպես ոլորտի, մեղմ ասած, բացասական ուղղվածություն «հայդատական պատմագիտություն» բնորոշումը գործածեց: Իսկ ո՞րն է եղել և մնում Լևոն Տեր-Պետրոսյանի և իր ներկայացրած հոսանքի դավանած «ճիշտ» պատմագիտությունը:

Նորից վերադառնանք այն ժամանակահատվածին, երբ երկրում մենաշնորհային կարգավիճակ ուներ իշխող ուժի գաղափարախոսությունը: Այդ օրերն ապրած մարդիկ լավ պիտի հիշեն, թե ՀՀՇ-ական քարոզչությունը ինչպես էր սևացնում նախորդ դարավերջին ծավալված ազգային-ազատագրական պայքարը, ինչպես էին քննադատվում կամավորական շարժումը, Հայաստանի առաջին հանրապետության իշխանության ամբողջ գործունեությունը և, ի դեպ, նաև բոլշևիկյան բռնությունների դեմ տարած պայքարը: Դաշնակցությունն ուղղակիորեն մեղավոր էր հայտարարվում ցեղասպանության հարցում՝ սրանով եթե չհանելով ոճրագործության պատասխանատվության մեղքը Թուրքիայի վրայից, ապա առնվազն լրջորեն թեթևացնելով այդ մեղքը:

Լևոն Տեր-Պետրոսյանի և իր ներկայացրած հոսանքի պատմագիտական պատկերացումներն ուղղակիորեն կրկնում էին թուրք և բոլշևիկյան հակահայ պատմագիտության թեզերը՝ սկսած դեռևս 19-րդ դարի վերջերից և շարունակված խորհրդային տասնամյակներին: Վերջին տասնամյակներին առկա և նորահայտ փաստաթղթերի հիման վրա հայ պատմաբանների կողմից Հայաստանում հրապարակվել են մի շարք աշխատություններ, որոնք կասկածի տեղ չեն թողնում թուրքական իրարահաջորդ իշխանությունների ու ռեժիմների կողմից ցեղասպանության մանրակրկիտ ու հեռահար ծրագրվածության և այս ուղղությամբ իրականացված տարբեր մակարդակի ու բնույթի գործողությունների կազմակերպված լինելու մասին: Ի դեպ, հենց Հայաստանում այդ անաչառ պատմագրությունը դժվարությամբ, սակայն կարողացել էր իր համար ճանապարհ հարթել դեռևս խորհրդային շրջանում, նկատի չունենալով անգամ այն պատմագիտական և աղբյուրագիտական հսկայածավալ նյութը, որ վաղուց շրջանառության մեջ էր սփյուռքում: Որքանով կարելի է ցեղասպանության հարցում Թուրքիայի միանշանակ պատասխանատվության, ինչպես և այդ ծրագրի դեմ հայության կազմակերպած դիմադրական շարժման բնական ու օրինաչափ լինելու վերաբերյալ եզրահանգումները, հայոց պահանջատիրության հետ կապված խնդիրները կոչել «հայդատական պատմագիտություն»՝ երևի քննարկման խնդիր է: Քննարկման խնդիր չէ, սակայն, այն, որ նույն հարցերում հայությանը մեղադրելը միանշանակորեն թուրք-բոլշևիկյան պատմաշինության արտադրանքն է՝ մեզ համար օտարածին, հակահայ, պարտվողական:

Այս նյութն ընթերցողը հավանաբար տպավորություն կստանա, թե հոդվածը Լևոն Տեր-Պետրոսյանի և մոտակա անցյալին պատկանող իրողությունների մասին է: Շտապեմ ասելու, որ ոչ. մեզ հետաքրքրողը մեր ներկա իրականությունն է՝ իր մտահոգիչ դրսևորումներով: Եվ եթե սկսեցինք հայ-թուրքական պատմական կնճռի առնչությամբ անկախության առաջին տարիներին վերակենդանանալ փորձող խորհրդային պետական-պաշտոնական գաղափարախոսության լուսաբանումից, ապա փաստելու համար, որ այն, ինչին ականատես ենք ներկայումս, իր արմատներով ձգվում է դեպի անցած դարի 90-ականներ և այսօր էլ առնվազն վայելում է այն օրերի «գլխավոր հերոսների» խրախուսիչ վերաբերմունքը: Իր հերթին այսօրվա գլխավոր դերակատարն ու վերաթարմացվող ծրագրերի հերոսը քաղաքական-գաղափարական առումով ձևավորվել է նույն այդ միջավայրում և նույն մտածելակերպի ու արժեհամակարգի կրողն է: Ասվածը սույն տողերի հեղինակի ենթակայական գնահատումների արդյունքը չէ, այլ փաստերի, որոնք վերջին շրջանում դուրս են գալիս ջրի երես: Հիշենք դրա օրինակներից մեկը, որը՝ որպես խմբագրական, հրապարակվել է 2005 թվականին «Հայկական ժամանակ» թերթում՝ «Մոռանալ հերոսական անցյալը» խորագրի ներքո. «Եկեք դադարենք մեր նախնիներին գովաբանել և շատ պրագմատիկ հարց տանք մեզ. իսկ ինչ են այդ նախնիները մեզ ժառանգել, ինչ են թողել իրենց հետևից: Ոչինչ, ավելի քան ոչինչ: Ոչինչ, որովհետև ոչինչը այն է, երբ դու պետք է սկսես զրոյից, իսկ մենք պետք է սկսենք մինուս չգիտեմ քանիսից, որովհետև մեր նախնիները մեզ ժառանգել են ընդամենը ցեղասպանությունների, ստորացումների, դավաճանությունների և անբարոյականության մի այնպիսի պաշար, որը հաղթահարելը, ինչպես պարզվում է, դժվար է, չափազանց դժվար: Ես դատապարտում եմ մեր նախնիներին, նզովում եմ նրանց, որովհետև նրանք ոչինչ չեն արել, որ մենք այսօր ապրենք ավելի արժանապատիվ ու ավելի հպարտ: Մեր նախնիները իրենց սերունդների համար հոգ չեն տարել գոնե այնքան, ինչքան կենդանիներն են հոգ տանում իրենց բնազդով»:

Իրենց ժառանգների համար կենդանիների չափ վաստակ չունեցած նզովյալ նախնիները ժառանգել են նրանց ստորացումներ, դավաճանություններ, անբարոյականություն և... ցեղասպանություններ: Եթե տեղին ու անտեղի հայ ժողովրդին սեր խոստովանող ազգային նոր «առաքյալի» երեկվա գնահատականներն իր անցյալի ու իր նախնիների մասին մի կողմ թողնենք, ապա ինչո՞վ Լևոն Տեր-Պետրոսյանի գաղափարական ժառանգորդը չէ մեկը, ով ի՛ր նախնիներին է մեղադրում «ցեղասպանություններ ժառանգություն» թողնելու մեջ: Գուցե ավելորդ չէ հիշելը նաև, որ Լևոն Տեր-Պետրոսյանի պարտադրած քարոզչության բեմերից մեկը հենց նույն Նիկոլ Փաշինյանի աշխատակցած և գլխավորած թերթերն են եղել:

Այնուամենայնիվ ընդունենք, թե մարդը կարող էր ժամանակի ընթացքում վերափոխվել և կտրել պորտալարը իր գաղափարական անցյալի հետ: Ներկան, սակայն, այս իմաստով շատ ավելի վարդագույն չէ: Նախ անդրադառնանք Արցախի հարցին: Խաղաղասիրական կոչերը, Արցախյան խնդրի համար բոլոր կողմերին բավարարող լուծումներ գտնելու առաջարկությունները, Հայաստանը անարդար և ագրեսիվ կողմ պիտակավորող որակումներին չարձագանքելը, վերջապես՝ Արցախյան պայքարի ղեկավար գործիչների դեմ ծայր առած հետապնդումները «Պատերազմ, թե՞ խաղաղություն» «երգի» շարունակությունը չե՞ն արդյոք:

Կարելի է ըմբռնումով մոտենալ նոր ու երիտասարդ իշխանությունների կողմից համընդհանուր բարեփոխումների ծրագիր իրականացնելու ցանկությանը: Ինչո՞ւ, սակայն, այդ փոփոխություններն ի սկզբանե պետք է ուղղվեին ազգային արժեքների, հայագիտության և մշակույթի դեմ:

Կենտրոնանալով, սակայն, մեր բուն ասելիքի վրա՝ անդրադառնանք կրթական նոր չափորոշիչների անվան տակ թուրքերի հետ համատեղ վերջիններիս կամ այլ օտար աղբյուրների ֆինանսավորմամբ հայոց պատմությունը թուրքանպաստ խմբագրման ենթարկելու փաստին, գրականության ծրագրերն իրենց ազգային և պատմական էությունից ամբողջովին զատելու փորձին: Որ այս դավադրության հեղինակները հրաշալի գիտակցել են իրենց կատարածի ապազգային ու հանցավոր բնույթը, վկայում են թեկուզ այն փաստերը, որ ողջ գործընթացն իրականացվել է գաղտնաբար, կասկածելի կարողության տեր, հանրության համար անհայտ «մասնագետների» կողմից: Գաղտնիք չէ, որ այս իշխանությունն այնքան է կենտրոնացած մեկ անձի ձեռքում, որ արմատական փոփոխությունների ծրագիր, այն էլ՝ օտար միջամտությամբ, չէր կարող նախաձեռնվել առանց վարչապետի գիտության ու հավանության: Այս հարցում մեր ենթադրությունները նույնիսկ ավելորդ են, որովհետև, բարձրացված աղմուկին արձագանքելով, հենց Նիկոլ Փաշինյանը հայտարարեց այն մասին, որ ձեռնարկված բարեփոխումները միանշանակորեն իրականացվելու են: Նոր, այսպես կոչված, կրթական չափորոշիչներին մակերեսային ծանոթությունն իսկ փաստում է, որ դրանք կոչված են մասնավորապես բավարարելու այն պահանջները, որոնք հայկական կողմի առջև դրվում էին դեռևս լևոնտերպետրոսյանական ժամանակներում:

Այսօրվա համընդհանուր փոփոխությունների համար ջանքերը նկատի ունենալով՝ արժե փոքր-ինչ անդրադառնալ նաև այն հարցին, թե ի վերջո ինչ նպատակ է հետապնդվում:

Հայացք նետելով երեսնամյա գործընթացներին՝ ակնառու է դառնում, որ շատ ավելի մեծ խաղադրույք է դրված սեղանին, և խաղի մասնակիցներն էլ շատ ավելին են:

Ճիշտ նույնքան ժամանակ փորձ է արվում Հայաստանը կտրելու Ռուսաստանից, որպեսզի վերջինիս կապող

հայկական խարիսխը կորցրած Կովկասը քշվի այլ ուղղությամբ: 2018 թվականի հոկտեմբերին Հայաստան ժամանած՝ ԱՄՆ նախագահի անվտանգության գծով խորհրդական Ջոն Բոլթոնը շատ պարզորոշ խորհուրդ տվեց (կամ գուցե հրահանգեց) Հայաստանին հրաժարվելու իր պատմական մտայնություններից և փոխելու քաղաքական արևելումները՝ Իրանից ու Ռուսաստանից դեպի Թուրքիա և Ադրբեջան:

Կարելի է պնդել, որ գրեթե 30 տարի Հայաստանին պարտադրվող հայ-թուրքական հաշտությանը հասնելու ծրագրերը հենց նշված վերջնանպատակն են հետապնդում: Նրանք, ովքեր ցանկանում են Հայաստանը և ողջ Կովկասը կտրել Ռուսաստանից, նրանք, ովքեր ցանկանում են Արևելքից ևս լիարժեք դարձնել Իրանի շրջափակումը և Կովկասը դարձնել լայն հենակետ Իրանի դեմ պատերազմի դեպքում, և նրանք, ովքեր ցանկանում են, որ հայ ժողովուրդը մոռանա իր պատմական խնդիրների մասին, լինի բաց ու անպաշտպան իրենց ծրագրերի իրականացման ճանապարհին, այս հարցում լուրջ խոչընդոտ են համարում Հայաստան-Ռուսաստան ռազմավարական դաշինքը: Նրանք մտածում են, որ Հայաստանի հակվածությունը դեպի Ռուսաստան պայմանավորված է հայ ժողովրդի մտահոգությամբ առ թուրքական վտանգը, իսկ եթե հայ ժողովրդի գլխից հանվի պատմական հիշողությունը՝ ցեղասպանության, ազգային դատի և կորուսյալ հայրենիքի վերաբերյալ մտքերը, ապա կվերանա նաև թուրքական վտանգի գիտակցությունը, հետևաբար և ավելորդ կդառնա Հայաստանում ռուսական զորքի ներկայությունը և ռազմավարական համագործակցությունը Ռուսաստանի հետ: Սրա կողքին զիջելով նաև Արցախը՝ Հայաստանն այլևս խնդիր չի ունենա դռները լայն բացելու Ադրբեջանի և Թուրքիայի առջև: Այսպես մտածողների ու աշխարհը վերաձևել ծրագրողների համար տվյալ խնդրի լուծումը միայն մեկ մակարդակի քարոզչաքաղաքական խնդիր չէ: Ամեն ժողովուրդ, այդ թվում՝ և ներկա քաղաքակրթության առաջամարտիկները, առհասարակ պահպանողական է սեփական ավանդույթների, արժեհամակարգերի հարցում: Այդ համակարգերը նրանց ինքնությունն ու ինքնուրույնությունը պահպանող զրահներ են, պատյաններ են, և այդ պատյանը կամ զրահը շատ ուժեղ է նաև հայ ժողովրդի դեպքում: Ըստ էության, հավատքի, մշակույթի և ավանդույթների պատմական շաղախից ձևավորված այդ պատյանն է, որ պատմության թատերաբեմում հայ ժողովրդի գոյությունը պահպանել է վերջին գրեթե երկու հազարամյակների ընթացքում:

Ինչպես ամենուր, այո՛, նաև Հայաստանում կարելի է իշխանության բերել ցանկացած ուժի, բայց երբեք և ոչ մի տեղ դրածո իշխանություններին հնարավոր չէ երկար պահել և այդ երկրում իրականացնել հեռահար հեղաշրջիչ ծրագրեր, եթե գոյություն ունի հակադրություն իշխանության գործունեության և ժողովրդի ինքնությունից բխող սկզբունքների միջև: Հետևաբար խնդիր է դրվում փոփոխելու ժողովուրդների ինքնությունն ու հոգեկերտվածքը: Նրանք, ովքեր ամբողջ աշխարհում աճեցնում են բաց հասարակությունների ցանցը, այդ ցանցում հայտնվողների կարծիքով, բացում են ազատության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կերտման դռները, իսկ նախաձեռնողների խնդիրը հասարակությունները բացելը, նրանց պատյանը, ինքնության ամրոցները փլուզելն ու նրանց անպաշտպան դարձնելն է: Սա է պատճառը, որ նոր ուժերի՝ իշխանության գալուց անմիջապես հետո սկսվեց հարձակումը ազգային եկեղեցու, ազգային կուսակցության, հայագիտության, ազգային կրթության և մշակույթի դեմ:

Մինչև հայագիտության ու ազգային կրթության դեմ հայ-թուրքական դավադրության բացահայտումը գուցե դեռ կարելի էր մտածել, թե երիտասարդ իշխանությունն անգիտակցաբար սխալներ է թույլ տալիս: Այս վերջին փաստով կարմիր գիծ է գծվում ազգայինի ու ապազգայնության միջև, և մեզանից ամեն մեկը պետք է կողմնորոշվի, թե ինքը գծի որ կողմում է: Ըստ էության, այս գիծը եղել է միշտ, անցնում է մեր ողջ պատմության միջով: Ուղիղ հարյուր տարի առաջ այդ գծի առջև հայտնվեցին օտարածին բոլշևիկներն իրենց համախոհների հետ և ազգի մնացած հատվածը: Իմաստուն Դերենիկ Դեմիրճյանը, իր պատմավեպն անվանելով «Վարդանանք», ևս մեկ անգամ գծեց կարմիր գիծը Վարդանանց տեսակի և Վասականց տեսակի միջև, նրանց, ովքեր պատրաստ են դիմանալու, պայքարելու ու մեռնելու վասն հայրենյաց, վասն հավատո, և նրանց միջև, ովքեր պատրաստ են համակերպվելու, հանձնելու, փոխվելու՝ գուցե ապահովելով ֆիզիկական գոյությունը, բայց մեռնելով որպես տեսակ: Այսօր կանգնած ենք նույն կարմիր գծի առջև, և յուրաքանչյուրս պետք է կատարի իր ընտրությունը: ■

Գրիգոր Խանջյան. Վարդանանք

Ոչ միացում, ոչ անկախության ճանաչում, առկա վիճակը աշխատում է մեր դեմ

Հարցազրույց ՀՅԴ Բյուրոյի նախագահ Արմեն Ռուստամյանի հետ

-Ընկեր Արմեն 1991թվականից սեպտեմբերի 2-ը մեր պատմության մեջ արձանագրված է, որպես Արցախի Հանրապետության անկախության օր: Ինչպես եք գնահատում պետականության կայացման ճանապարհով Արցախի անցած ուղին:

Նախ և առաջ պետք է արձանագրել, որ ԼՂՀ հռչակման մասին 1991թ. սեպտեմբերին ընդունված պատմական նշանակություն ունեցող փաստաթղթով ոչ միայն ազդարարվեց հայկական երկրորդ պետության անկախության հռչակումը, այլև ամուր հիմք ստեղծվեց դրան հաջորդած գործընթացի օրինականությունն ու միջազգային և ներպետական իրավական կառուցակարգերին նրա լիարժեք համապատասխանությունն ապահովելու համար:

Ըստ այդմ Արցախի ժողովուրդը ամուր հիմքերի և միջազգային իրավունքի տեսանկյունից անխոցելի քայլերի շնորհիվ իրացրեց սեփական իշխանություններ ձևավորելու իր անօտարելի իրավունքը և արդեն երեք տասնամյակ է ինչ համայն աշխարհին փաստում է անկախ պետություն ունենալու և այն պաշտպանելու իր կամքն ու կարողությունը: Այդ կամքն ու կարողությունը միանշանակ և հստակորեն Արցախի ժողովուրդն արտահայտել է, թե 1991թ. անկախության և թե դրան հաջորդած սահմանադրական հանրաքվեների միջոցով: Այդ հանրաքվեների ամփոփ և հստակ ուղերձը հետևյալն է՝ հակամարտության որևէ կարգավորում կամ ստատուս քվոյի փոփոխություն, որը չի ապահովում Արցախի Հանրապետության անկախ կարգավիճակի և նրա տարածքային ամբողջականության վերականգնման հետ կապված հարցերի առաջնահերթ լուծում անընդունելի է Արցախի ժողովրդի համար:

Այս ողջ ընթացքում, շարունակ գտնվելով պատերազմական և շրջափակման վիճակում, հայ ժողովուրդը կարողացել է բարեհաջող լուծել այս խնդիրը՝ ապահովելով և պահպանելով մեր ազատամարտի հաղթանակը: Եւ սա է մեր սերնդի ամենամեծ ձեռքբերումը: Այս հաղթանակն է, որ պետք է աչքի լույսի պես պահվի և փոխանցվի հաջորդ սերունդներին:

- Ինչ մարտահրավերներ եք տեսնում այսօր Արցախի առջև, ինչպես եք գնահատում ներկա քաղաքական և դիվանագիտական գործընթացները, արդյո՞ք ճիշտ ճանապարհով ենք առաջ ընթանում և որքանով են ներկա քաղաքական-դիվանագիտական գործընթացները ներդաշնակ անցած ճանապարհի և արձանագրված ձեռքբերումների հետ:

Մարտահրավերը հստակ է՝ նախ և առաջ, հիմնախնդրի լուծման հայեցակարգից չշեղվելու համար, հավատարիմ մնալ Հայաստանի անկախության և ԼՂՀ հռչակման մասին հռչակագրերին՝ դրանով Հայաստանին Արցախի միացումը ամրագրել, որպես ռազմավարական նպատակ, իսկ Արցախի անկախության հռչակումը, որպես անհրաժեշտ մարտավարական հանգրվան: Ո՛չ միացում ո՛չ էլ անկախության ճանաչում, առկա վիճակը ոչ միայն չի համապատասխանում վերոնշյալ հռչակագրերին այլև աշխատում է մեր դեմ՝ լինի դա ներսում, թե դրսում: Ներսում դաշտ է թողնում միացման և անկախության միջև հակադրություններ փնտրողների համար, իսկ դրսում առաջացնում է ազատագրված տարածքների նկատմամբ Արցախի ժողովրդի ունեցած լեգիտիմ վերահսկողությունը միջազգայնորեն ամրագրելու խնդիրներ: Հետևաբար դե ֆակտո առկա իրողությունների դե յուրե ամրագրումը՝ հստակ հայեցակարգի շրջանակներում, հրատապ անհրաժեշտություն է և կարևորագույն մարտահրավեր հայկական կողմերի համար:

Հենց այս մարտահրավերը հաղթահարելուն է ուղղված երկու հայկական պետությունների միջև առկա փոխհարաբերությունները ռազմավարական դաշինքի կնքման միջոցով, իրավապայմանագրային մակարդակում ամրագրելու, նախաձեռնությունը: Միջազգային իրավունքի տեսանկյունից այսպիսի դաշինքի լեգիտիմությունը ակնհայտ է: Քանզի ակնհայտ է, որ Արցախի նկատմամբ որևէ ռազմական ագրեսիա կամ սպառնալիք անմիջականորեն ուղղված է նաև համայն հայության ու Հայաստանի դեմ: Ակնհայտ է նաև, որ չեն կարող շարունակաբար միջազգային հանրության կողմից անտեսվել հակամարտության գոտում բնակվող մարդկանց տարրական իրավունքները կամ կասեցվել

հումանիտար ծրագրերի իրականացումը, սոսկ այն պատճառով, որ չի հաջողվել մինչ օրս կարգավորել այդ հակամարտությունը:

Հետևաբար հումանիտար և անվտանգային խնդիրները տարբեր՝ այդ թվում իրավական, մակարդակներում կարգավորելը միջազգային լավագույն պրակտիկային համահունչ գործընթաց է, լիովին արդարացված: Առավել ևս, թուրք ադրբեջանական տանդեմը, և նրա թշնամական էությունը կենսական անհրաժեշտություն են առաջացնում Հայաստան-Արցախ տանդեմի ձևավորման, դրա իրավապայմանագրային ամրապնդման և Հայաստանի, որպես Արցախի անկախության և անվտանգության երաշխավորը լինելու փաստի միջազգային ճանաչման համար:

Այս համոզումն ու գիտակցությունն էր համախմբել անցյալ տարի Ստեփանակերտում անցկացված «Հայաստան-Արցախ ռազմավարական դաշինք» ֆորումի մասնակիցներին, ովքեր բազմակողմանի և խորքային քննարկումների արդյունքում ընդունեցին համապատասխան հռչակագիր: Տավուշի ուղղությամբ Ադրբեջանի վերջերս իրականացրած հերթական ագրեսիան կրկին անգամ ահազանգում է այդ հռչակագրով ազդարարված ռազմավարական դաշինքի գործնականացման հրատապությունը:

-1991թ. սեպտեմբերի 21-ին կայացած ԽՍՀՄ-ից անկախացման հանրաքվեի օրը մենք նշում ենք որպես Հայաստանի անկախության օր: Տոնի առիթով անշուշտ ընդունված է խոսել ձեռքբերումների մասին, ցավոք, հնարավոր չէ շրջանցել այն փաստը, որ այս ճանապարհին մենք ունեցել ենք նաև ձախողումներ ու կորուստներ: Գոյություն են ունեցել անշուշտ առարկայական պատճառներ, ինչպես օրինակ Արցախյան պատերազմը, շրջափակումը, ընդհանուր պետության փլուզումը և այլն, արդյոք սակայն իրացվել են բոլոր հնարավորությունները և բացթողումներն ու սխալները չեն նաև պատճառը, որ գտնվում ենք այսօր այն կետում ուր գտնվում ենք՝ մեր առկա հնարավորություններով:

Ինչպես մարդու գոյության համար շնչառություն է պետք, այդպես էլ ազգի լինելիության համար՝ անկախություն: Տվյալ դեպքում խոսքը մարդ տեսակի, այլ ոչ թե բոլոր շնչավորների մասին է և իր ինքնությանը տեր կանգնող ազգի, այլ ոչ թե ընդհանրապես բնակչության մասին:

Ուստի, ըստ իս, անկախությունը հիրավի հզոր միջոց է միայն այն ազգերի ձեռքում, որոնք ձգտում են, պահելով իրենց տեսակն ու ինքնությունը՝ հասնել կատարելագործման: Մենք այդ միջոցից օգտվել ենք երկարատև ընդմիջումներով և հիմա ներկա սերնդի առաքելությունն է վերականգնել անկախության դերն ու նշանակությունը պետականաշինության և համազգային նպատակների ապահովման գործում: Այդ առումով երեսուն տարին շատ չէ, բայց քիչ էլ չէ՝ նորանկախության գործընթացը ճիշտ ուղղորդելու համար: Դրա համար, ըստ իս, նախ պետք է ներքին համաձայնության հասնել նորօրյա մեր պատմության գլխավոր էջերի անկողմնակալ և ճշգրիտ գնահատման հարցում, որ սերունդներին աղավաղված ու ապակողմնորոշող պատկեր չփոխանցի: Սա իհարկե շատ բարդ ու լուրջ խնդիր է, բայց դրա կարևորությունը հաշվի առնելով հուսով եմ մի օր կարվի: Այդուամենայնիվ, կարծում եմ, որ որոշակի արձանագրումներ կարելի է անել:

Իհարկե ԽՍՀՄ փլուզումը այն գլխավոր պատճառն էր առանց որի անհնար է պատկերացնել նրան մաս կազմող հանրապետությունների անկախացումը: Բայց, ի տարբերություն մյուսների, Հայաստանի անկախությունը ձեռք է բերվել արցախյան ազատամարտի պայմաններում և դժվար չէ պատկերացնել, թե ինչ կմնար Հայաստանի անկախությունից, եթե չլիներ այս հաղթանակը: Հետևաբար անկախության ամենամեծ և պատմական ձեռքբերումը եղել և մնում է Արցախյան ազատամարտի հաղթանակը, որի շնորհիվ այսօր հայոց պետականությունը տարածվում է 42 հազար քառակուսի կիլոմետր տարածքների վրա: Այս ձեռքբերումը անգնահատելի է, սրա նկատմամբ ոչ մի այլ բան չի կարող գերակա լինել: Սա մեր լուսահոգի նահատակների կտակն ու ավանդն էր և անկախության այս սերունդը այն պարտավոր է պահել ու պահպանել, որպես գրավական մեր գալիք սերունդների արժանապատիվ ապագայի: Իսկ ձախողումների գլխավոր պատճառը, ըստ իս, ազգային-պետական ուղեգծից շեղումներն են: Սեպտեմբերի 21-ի հանրաքվեն փաստեց անկախ ապրելու մեր ժողովրդի անսասան կամքը՝ բայց դրա սկիզբը դրվեց 90թ. անկախության մասին հռչակագրով, որն այժմ հազվագյուտ փաստաթղթերից մեկն է, որ ընդունվել է լայն համախոհությամբ, Խորհրդարանի կողմից: Այդ փաստաթուղթն էր ըստ էության, որ հռչակում էր անկախության գործընթացի սկիզբն ու ուղղությունը և ամրագրում ազգային պետական հստակ ուղեգիծ: Առաջին շեղումները հենց մատնանշված այդ ուղղությունից եղան, որն էլ հետագայում հանգեցրեց, թե Արցախի հարցում պարտվողականության, թե երկրի ներսում լուրջ շեղումների ժողովրդավարական և իրավական պետության չափանիշներից: Ցավոք այսօր էլ այդպիսի վտանգները չեն վերացել, կրկին նկատելի են դարձել և օրեցօր ավելի են խորանում:

Եւ կրկին պատճառների պատճառը, ըստ էության նույնն է՝ շեղումը համազգային նպատակներին ուղղված ազգային-պետական ուղեգծից: Ուստի առաջնահերթ խնդիր է շտկելը երկրի զարգացման ուղղությունը և չեզոքացնել այս վտանգները: ■

Մայր հայրենիքի հետ վերամիավորման ուղիով. Արցախի Հանրապետությունը 29 տարեկան է

Միքայել Հաջյան
Քաղաքական վերլուծաբան

Պատմության համար 29 տարին գուցեև անցողիկ ակնթարթ է: Մինչդեռ Արցախի պարագայում այն ունի դարակազմիկ իմաստ ու նշանակություն: Մայր հայրենիքի հետ վերամիավորման վեհ գաղափարը, հանուն որի արցախահայությունը և նրա հետ մեկտեղ համայն հայությունը մեծ զոհողությունների գնով մաքառել են անցած դարասկզբին, դարակեսին և դարավերջին, փառք Աստծո, հետզհետե պսակվում է ակնկալված հաջողությամբ: Ժամանակաշրջանի իրավաքաղաքական հրամայականների պարտադրանքով համաժողովրդական պայքարի «Միացում» կարգախոսը փոխարինվել է Արցախի անկախ պետականության ստեղծման գաղափարով, սակայն դա մարտավարական առաջնահերթության ընտրանք է՝ ի շահ ռազմավարական նպատակի, հետևապես դույզն իսկ չի նվազեցնում նվաճված հաջողության նշանակությունն ու չի մթագնում առաջադրված գաղափարը կյանքի կոչելու հեռանկարային, թե մոտակա տեսլականը:

Չմոռանանք, որ ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարները երբևէ կախարդական փայտիկի զորությամբ ու մեկեն չէ, որ հաղթանակով են պսակվել: Դրանք շատ հաճախ անխուսափելիորեն անցել են հանգրվանային փուլերով, որոնք, մեկմեկու հյուսված, պատճառահետևանքային կապերի տրամաբանությամբ հանրագումարում հանգեցրել են գլխավոր նպատակի իրագործմանը: Նույնը տեղի է ունենում նաև արցախահայության պայքարի պարագայում, և հենց այդ համատեքստում է մեր ժողովուրդը որպես անցումային փուլ դիտարկում ու արժևորում ԼՂՀ հռչակման փաստը 1991 թ. սեպտեմբերի 2-ին և այդ պատմական իրադարձությանը հաջորդած անկախ, ինքնիշխան պետականության կառուցման ողջ գործընթացը, նորաստեղծ երկրորդ հայկական պետության միջազգային ճանաչման հետևողական ու նպատակասլաց ջանքերը, որ համատեղ գործադրում է Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունը:

20-րդ դարավերջի և 21-րդ դարասկզբի այս շրջանը յուրատեսակ աստեղային ժամ է աշխարհասփյուռ հայ ժողովրդի համար՝ հայոց անկախ պետականության վերահաստատման և հարևան երկրների միջև կամայականորեն բաժան-բաժան արված մեր ազգապատկան հողերի վերադարձի հեռանկարով: Իսկ որ պատմական արդարության վերականգնման հայոց համազգային պայքարի՝ Հայ դատի առաջնագիծն անցնում է Արցախ աշխարհով, ոչ մի հայ այլևս չի կասկածում: Ուստի միանգամայն օրինաչափ ու տրամաբանական է, որ Ղարաբաղյան (Արցախյան) շարժման առաջին իսկ օրերից առ այսօր ողջ հայ ժողովրդի սրտացավ ու հոգատար ուշադրությունը սևեռված է Արցախի վրա, քանզի այստեղ՝ Արցախում

է վճռվում հայոց կորուսյալ բնաշխարհի՝ օտարի գերության մեջ հայտնված Արևմտյան Հայաստանի, Նախիջևանի, Աջափնյա Կուրի, Հյու-սիսային Արցախի ճակատագիրը:

Այս տրամաբանությամբ էին մտածում ու գործում բոլոր այն հայորդիները, ովքեր, վտանգելով իրենց կյանքը, խիզախաբար ազատագրել ու պաշտպանել են Արցախը: Ազգային համախմբման նույն այդ գաղափարով են տոգորված այն հայորդիները և հայկական պետական, եկեղեցական, կուսակցական, բարեսիրական և այլ կազմակերպություններ, որոնք մշտապես սատարել են Արցախին:

Արցախի փաստացի անկախությունը, ինչ խոսք, սկիզբ է առել տակավին 1988 թ. փետրվարի 20-ին՝ ԼՂԻՄ պետական իշխանության ներկայացուցչական մարմնի՝ ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման մարզային խորհրդի հիրավի պատմական որոշմամբ, որն ընդունվել է որպես ընտրողների կամքի կատարում և համաժողովրդական պայքարի արտահայտություն: Անդրադառնալով խնդրին ու վերահաստատելով իր այդ որոշումը՝ մարզխորհուրդը համարժեք վճիռներ է ընդունել նաև նույն տարվա հունիսի 21-ի և հուլիսի 12-ի նստաշրջաններում: Կարելի է ասել, որ մարզխորհրդի այդ նստաշրջանները, ինչպես որ արցախահայության խաղաղ հանրահավաքները, ցույցերն ու երթերը, ժողովրդավարության ու հրապարակայնության առաջին իրական դրսևորումներն էին ողջ խորհրդային տարածքում:

Արցախյան շարժման առաջին փուլի՝ 1988-91 թթ. քաղաքական զարգացումների ընթացքի հետ ավելի ու ավելի ակնհայտ էր դառնում ԽՍՀՄ վերջնական կազմալուծման հավանականությունը: Ադրբեջանը հստակ գնում էր իր անկախության հռչակմանը: Իրավիճակը հղի էր անկանխատեսելի շրջադարձերով: Անհրաժեշտ էր ճկուն մար-

տավարություն, որը հնարավորություն կտար նոր ձևավորվող իրավաքաղաքական իրողությունների պայմաններում ապահովելու Արցախի ժողովրդի ազգային-պետական ինքնորոշման իրավունքի իրացումը:

Ուստի 1991 թ. սեպտեմբերի 2-ին գումարվեց ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը՝ բոլոր մակարդակների պատգամավորների մասնակցությամբ: Առաջնորդվելով ինքնավար մարզն Ադր. ԽՍՀ կազմից դուրս բերելու մասին ԼՂԻՄ մարզխորհրդի 1988 թ. փետրվարի 20-ի, հունիսի 21-ի և հուլիսի 12-ի նստաշրջանների ընդունած որոշումներով, հաշվի առնելով Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի 1991 թ. օգոստոսի 30-ի հռչակագիրը «1918-1920 թվականների Ադրբեջանի Հանրապետության պետական անկախության վերականգնման մասին», հիմք ընդունելով ԽՍՀՄ Սահմանադրության համապատասխան դրույթը՝ նստաշրջանը հռչակեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Հարկ է արձանագրել, որ այդ պատմական հռչակագրով հիմնովին ու արմատապես փոխվեց հայ ժողովրդի պատմության ընթացքը: Հետևապես այն, իրավամբ, համահայկական, համազգային է իր բնույթով ու նշանակությամբ՝ ոչ միայն խորհրդանշելով հայոց երկրորդ պետության վերածնունդը, այլև ազդարարելով ոչ հեռու, հնարավոր է՝ տեսանելի ապագայում հայոց պատմական հայրենիքի ամբողջական ազատագրման և Ազատ, Անկախ ու Միացյալ Հայաստանի կերտման նվիրական երազանքի իրականացման մեկնարկը:

ԼՂՀ հռչակման մասին որոշումը, ինչ խոսք, արժանացավ արցախահայության հավանությանը, ինչի ակնբախ հաստատումը դարձավ նույն թվականի դեկտեմբերի 10-ին միջազգային դիտորդների մասնակցությամբ Լեռնային Ղարաբաղում անցկացված հանրաքվեն:

Երիտասարդ հանրապետության քաղաքական դաշտն, այդ ժամանակ, ձևավորման՝ գործող և նոր ասպարեզ իջած ուժերի դասավորման ու

Ստեփանակերտ, 1988թ.

վերադասավորման բուռն ընթացք էր ապրում: Խորհրդային ժամանակաշրջանի միահեծան իշխող կոմկուսի հետ համաժամանակ սկսել էին քաղաքական գործունեություն ծավալել տակավին 1989-ի ապրիլին Արցախում հաստատված և, որպես կուսակցական միավորում, ազգային-ազատագրական շարժմանն ու պայքարին լծված Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, Ժողովրդական ճակատը, Երիտասարդական ճակատը (Յեղակրոններ), առանձին անձանց շուրջ ձևավորված խմբերը և տարածաշրջանային-հայրենակցական ընդգրկման խմբավորումները: Հարկ է նշել, որ արցախահայության համաժողովրդական պայքարի նպատակներին ու խնդիրներին առավել համահունչ էին առանձնապես ՀՅԴ դավանած գաղափարախոսությունն ու ծավալած գործունեությունը: Պատահական չէ, որ նույն դեկտեմբերի 28-ին Արցախում առաջին անգամ անցկացված խորհրդարանական ընտրություններում ընտրողների գերակշիռ մեծամասնությունը քվեարկեց հենց ՀՅԴ թեկնածուների օգտին, ուստի և Գերագույն խորհրդում ընտրված 56 պատգամավորներից 26-ը ՀՅԴ ներկայացուցիչներն էին: Պարտադրված պատերազմական իրավիճակի պատճառով ԼՂՀ օրենսդիր մարմնի թափուր մնացած պատգամավորական տեղերի համար և կամ մարտերի ընթացքում զոհված պատգամավորներին փոխարինելու նպատակով ընտրությունները հաջորդիվ շարունակվեցին նաև հետագա ամիսներին, բայց խորհրդարանի քաղաքական ուժերի տոկոսային հարաբերակցությունը, փաստորեն, չենթարկվեց էական փոփոխության: Այդ իրողությունը հստակ արտացոլվեց նաև նորաստեղծ օրենսդիր իշխանության ղեկավար մարմինների կազմավորման ընթացքում: Արդյունքում՝ Գերագույն խորհրդի 1992թ. հունվարի 6-8-ը գումարված անդրանիկ նստաշրջանում առաջադրված թեկնածուներից խորհրդարանի նախագահ ընտրվեց ազգային-ազատագրական պայքարի ակտիվ գործիչ, ՀՅԴ անդամ Արթուր Մկրտչյանը: Կազմավորվեց նաև ԼՂՀ առաջին կառավարությունը՝ Նախարարների խորհուրդը, կոմկուսի անդամ Օլեգ Եսայանի գլխավորությամբ: Նույն այդ նստաշրջանում ԼՂՀ Գերագույն

խորհուրդը հռչակեց Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության պետական անկախությունը:

Ընդ որում կառավարման համակարգի ձևավորման առաջին քայլերը պետական իշխանության նորաստեղծ մարմինները կատարում էին Ադրբեջանի կողմից բացարձակ շրջափակման և հարաճուն ագրեսիայի պայմաններում: Արցախահայության ինքնորոշման սահմանադրական իրավունքի իրագործման հերթական քայլը դարձյալ ըմբռնում չգտավ Բաքվում: Թե՛ 1988 թ. փետրվարին, թե՛ 1991 թ. սեպտեմբերին, թե՛ նույն թվականի դեկտեմբերին և թե՛ առ այսօր միանշանակ ահաբեկչական էր և ահաբեկչական է մնում Ադրբեջանի պատասխան պահվածքը: Ապացույցներն առավել քան շատ են և անհերքելի:

Վերհիշենք 1988 թ. փետրվարի 20-ի որոշմանն ի պատասխան Աղդամ քաղաքից ադրբեջանական հոծ խառնամբոխի թշնամական քայլարշավը դեպի Արցախ, որ կասեցվեց Ասկերան շրջկենտրոնի մատույցներում:

Վերհիշենք սումգայիթյան ոճրագործությունը քաղաքի շուրջ քսան հազար հայ բնակիչների նկատմամբ, որ իրագործվեց Մոսկվայի հանցավոր թողտվությամբ:

Վերհիշենք հայ բնակչության 1988-89 թթ. ջարդերն ու զանգվածային տեղահանումները Հյուսիսային Արցախից, Գանձակից, Աղսուից, Շամախուց, Վարդաշենից, Խաչմազից, Ադրբեջանի մյուս քաղաքներից ու շրջաններից, որոնք վերածվեցին պետականորեն իրականացվող ցեղասպանական քաղաքականության:

Վերհիշենք Բաքվի հայության կոտորածները 1990 թ. հունվարին, երբ գազանաբարո ամբոխի զոհ դարձան հազարավոր խաղաղ քաղաքացիներ՝ հիմնականում անպաշտպան ծերեր, կանայք ու երեխաներ: Որպես հետևանք՝ Ադրբեջանը հայաթափվեց իսպառ, ընդհանուր առմամբ՝ շուրջ կես միլիոն մարդ, որոնց միակ մեղքն այն էր, որ ազգությամբ հայ էին, տեղահանվեցին իրենց մշտական բնակության վայրերից այն հանրապետությունում, որի կառուցողն ու շենացնողն էին:

Բայց պարզվեց, որ Բաքվի դեպքերը հայերի նախճիրի ամենևին էլ վերջին ակորդը չէին. 1991 թ. ապրիլի վերջերին սկիզբ առավ և մինչև ամառ շարունակվեց արցախահայության հերթական ահաբեկումը՝ «Օղակ» ռազմագործողությունը Գետաշենի ենթաշրջանում և ինքնավար մարզի հարավում՝ Հադրութի ու Շուշիի շրջաններում: Եվ դարձյալ Մոսկվայի, կոնկրետ՝ խորհրդային առաջնորդ Գորբաչովի թողտվությամբ, ավելին՝ խորհրդային զորքերի անմիջական մասնակցությամբ, երբ սպառազեն խորհրդային զորքերը շրջափակելով անելանելի սեղմ օղակի մեջ էին առնում հայկական բնակավայրերը, իսկ ադրբեջանական հատուկջոկատայինները թալանի ելած ամբոխի հետ միասին ներխուժում էին գյուղեր՝ անպատմելի բռնությունների ենթարկելով

ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նախագահ Արթուր Մկրտչյան

բնակչությանը՝ առանց տարիքի ու սեռի խտրության: Հայաթափվեցին ու ամայացան 24 հայկական գյուղեր, ինչի մասին Ադրբեջանի առաջին նախագահ Այազ Մութալիբովը հպարտությամբ պիտի զեկուցեր երկրի խորհրդարանին:

Որպես հիմնախնդրի ուժային լուծման փորձ, 1991 թ. աշնանից սկսած, Ադրբեջանը, փաստորեն, չհայտարարված լայնածավալ պատերազմ պարտադրեց իր անկախ պետականությունը հռչակած Արցախին և նրա ժողովրդին՝ կիրառելով ձեռքի տակ հայտնված խորհրդային մեծաքանակ զենքն ու զինամթերքը, մարտադաշտ նետելով նորաստեղծ ազգային բանակի զորամասերը, ինչպես նաև օգտագործելով դեռևս այդ հանրապետության տարածքում գտնվող խորհրդային զորքերը:

Այսպիսին էր Ադրբեջանի պատասխանը ԼՂՀ ղեկավարության պատրաստակամությանը՝ շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ քննարկելու Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին առնչվող հարցերի ամբողջ համալիրը:

Գազանային և արյունարբու վարքի հերթական հետևանքը Մարտակերտի շրջանի Մարաղա գյուղի հայ խաղաղ բնակչության սպանդն էր 1992 թվականի ապրիլի 10-ին ավելի քան 1000 զինվորով և 20 զրահամեքենայով գյուղ ներխուժած ադրբեջանական «Գուրթուլուշ» կոչվող գումարտակի կողմից, որի բարբարոսությանը զոհ դարձան տասնյակ ծերեր, կանայք ու երեխաներ, իսկ շատերի ճակատագիրն անհայտ է մնում առ այսօր: ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության 1992 թ. ապրիլի 12-ի և ԼՂՀ Ազգային ժողովի մի շարք հայտարարություններում Մարաղայի ողբերգությունը գնահատվել է որպես հայ խաղաղ բնակչության նկատմամբ Ադրբեջանի իրագործած ցեղասպանության ակտ:

Այդ ժամանակաշրջանում Արցախի նորանկախ հանրապետության թիվ մեկ հիմնախնդիրը, բնականաբար, երկրի անվտանգության ապահովումն էր, ինչի կազմակերպման նպատակով ստեղծվեց ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի

կոմիտեն: Ինքնապաշտպանությունն իրականացվում էր կամավորական ջոկատների ուժերով, որոնք համալրվում էին ինչպես տեղացի, այնպես էլ Հայաստանից ու Սփյուռքից Արցախի պաշտպանությանն ի զեն ելած քաջորդիներով: Ինքնապաշտպանության ուժերի կոմիտեի համակարգմամբ՝ կամավորական ջոկատների համախումբ ու հերոսական ջանքերով է, որ, 1991 թ. աշնանից սկսած, կասեցվեց ադրբեջանական բանակի առաջխաղացումը դեպի Արցախի խորքերը, վերացվեցին հակառակորդի հիմնական կրակակետերը Լեռնային Ղարաբաղի տարածքում: 1992 թ. մայիսի 9-ին ազատագրվեց Արցախի վաղեմի մշակութային ու քաղաքական կենտրոն Շուշի բերդաքաղաքը: Իսկ Լաչինի միջանցքի ազատագրմամբ վերջապես ճեղքվեց հանրապետության տևական շրջափակումը: Իրար կապելով Ստեփանակերտն ու Գորիսը՝ արցախցիների համար այն, հիրավի, դարձավ կյանքի ճանապարհ:

Այնուամենայնիվ, հանրապետության սոցիալ-տնտեսական ու ռազմաքաղաքական կացությունը շարունակում էր մնալ անկայուն: Տակավին ընթացքի մեջ էին ԼՂՀ պաշտպանության բանակի կազմավորման աշխատանքները:

Ահա այդ պայմաններում էլ սկսվեց Ադրբեջանի կանոնավոր զինուժի 1992 թ. ամառային ռազմարշավը, որի ժամանակ բռնազավթվեց ԼՂՀ տարածքի ավելի քան 40 տոկոսը, այդ թվում՝ Շահումյանի շրջանն ամբողջությամբ և Մարտակերտի շրջանի զգալի մասը, Հադրութի, Մարտունու և Ասկերանի շրջանների որոշ տարածքներ:

Պահը, իրոք, ճակատագրական էր: Անհրաժեշտ էին արմատական միջոցառումներ: ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության որոշմամբ՝ 1992 թ. օգոստոսից հանրապետության ողջ տարածքում մտցվեց ռազմական դրություն, և ստեղծվեց կառավարման հատուկ մարմին՝ Պաշտպանության պետական կոմիտե, որի ձեռնարկած վճռական միջոցառումների շնորհիվ նույն տարվա վերջերին համեմատաբար կայուն հավասարակշռություն էր ստեղծվել մարտական գործողությունների ամբողջ

գոտում: Հաջողվեց ոչ միայն հուսալիորեն պահպանել պաշտպանական դիրքերը, այլև ձեռնարկել մի շարք փայլուն ռազմագործողություններ: Հիմնականում ազատագրվեցին հանրապետության հյուսիսային տարածքները, վնասազերծվեցին ադրբեջանական ռազմական հենակետերը Լեռնային Ղարաբաղին հարակից շրջաններում, ըստ էության պատմական Արցախից բռնի տարանջատված և հայաթափված տարածքներում:

Ռազմական գործողություններին զուգընթաց շարունակվում էր ԼՂՀ ղեկավարության արտաքին քաղաքական գործունեությունը: Այն ներառում էր քաղաքական-դիվանագիտական բազմազան շփումները հիմնախնդրի խաղաղ կարգավորմամբ շահագրգիռ տերությունների, միջազգային կազմակերպությունների հետ: ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի, ինչպես նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում տարված բանակցությունները հանգեցրին հակամարտ կողմերի շփման գծում անժամկետ հրադադարի ռեժիմի հաստատմանը (Բիշկեկի համաձայնագիր, 1994 թ. մայիս) և Լեռնային Ղարաբաղի՝ որպես հակամարտող կողմի միջազգային ճանաչմանը (ԵԱՀԿ Բուդապեշտի վեհաժողով, 1994 թ. դեկտեմբեր):

Հրադադարի հաստատումից հետո կյանքը հուշեց կառավարման առավել ճկուն ձևի անցման անհրաժեշտությունը: Հիմնադրվեց կառավարման նախագահական ինստիտուտը: ԼՂՀ Գերագույն խորհրդի 1994 թ. դեկտեմբերի 21-ի նստաշրջանի որոշմամբ՝ երկամյա ժամկետով ԼՂՀ նախագահ ընտրվեց Ռոբերտ Քոչարյանը: Հանրապետության նորակազմ կառավարության ղեկավար՝ վարչապետ նշանակվեց Լեոնարդ Պետրոսյանը: Հետագայում՝ սկսած 1996 թվականից, Արցախում նախագահական ընտրություններն անցկացվել են հիմնականում համաժողովրդական քվեարկությամբ (Ռոբերտ Քոչարյան 1996 թ. նոյեմբերի 24, Արկադի Ղուկասյան 1997 թ. սեպտեմբերի 1-ի արտահերթ և 2002 թ. օգոստոսի 11-ի հերթական ընտրություններ, Բակո Սահակյան 2007 թ. հուլիսի 19-ի և 2012 թ. հուլիսի 19-ի հերթական ընտրություններ, Արայիկ Հարությունյան 2020 թ. ապրիլի 14-ի հերթական ընտրություններ) կամ Ազգային ժողովի որոշմամբ (Բակո Սահակյան 2017 թ. հուլիսի 19 - 2020 թ. մայիսի 31, համաձայն ԱՀ նոր Սահմանադրության 168-րդ հոդվածի պահանջի՝ մինչև գործող ԱԺ լիազորությունների ժամկետի ավարտը):

Ռազմական գործողությունների հետևանքով ավերվել էր արտադրական հզորությունների մոտ 85 տոկոսը, գրեթե կիսով չափ ոչնչացվել էր բնակելի ֆոնդը՝ ավելի քան 18 հազար տուն, ավերվել և շարքից դուրս էին եկել 200 նախադպրոցական և դպրոցական հիմնարկներ, շուրջ 170 բուժական օբյեկտներ, ավելի քան 50 կենցաղային սպասարկման ձեռնարկություններ, մշակույթի, կապի հարյուրավոր օբյեկտներ և այլն: Պատերազմական

իրավիճակի և նրա ծանր հետևանքների պատճառով Լեռնային Ղարաբաղն անհամեմատ ետ էր մնացել հետխորհրդային տարածքի երկրների, այդ թվում՝ ՀՀ զարգացման տեմպերից: Մինչդեռ ԼՂՀ առաջընթացի գլխավոր պայմանը նրա ինտեգրումն էր ՀՀ տնտեսությանը: Ուստի, չնայած նրան, որ ռազմական գործողությունների ընթացքում բազմամիլիարդ վնաս էր հասցվել Արցախի տնտեսությանը, հանրապետության իշխանությունները, պատերազմի հետևանքների վերացմանը զուգընթաց, ընտրեցին տնտեսական վերափոխումների ուղին, որոնք նպատակամիտված էին շուկայական հարաբերությունների՝ նոր տնտեսական համակարգի ձևավորմանը: Միևնույն ժամանակ լուրջ ուշադրություն էր դարձվում պետական շինարարության կատարելագործման խնդրին: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության հովանու ներքո նկատելի աշխատանք էր տարվում Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ, բանակցային կարգավորման ուղղությամբ:

Առաջադրվեց երկրի զարգացման ծրագիր՝ պետական շինարարության, սոցիալ-տնտեսական բարեփոխումների հետագա կատարելագործման, ժողովրդավարության ամրապնդման, հասարակական-քաղաքական և տեղեկատվական դաշտերի ձևավորման բաղադրիչներով հանդերձ: Հստակեցվեցին իշխանության ճյուղերի իրավասության ու պատասխանատվության շրջանակները:

Նկատելի աշխատանք է տարվել օրենսդրական դաշտի ձևավորման ու կատարելագործման, միջխորհրդարանական կապերի ամրապնդման, օրենսդիր մարմնի՝ Ազգային ժողովի դերի բարձրացման ուղղությամբ: Գործադիր իշխանությանը հիմնականում հաջողվել է վերականգնել երկրի ավերված տնտեսությունը և այն դնել շուկայական հիմքերի վրա: Ձեռնարկված բարեփոխումների շնորհիվ նոր փուլ է թևակոխել ապապետականացման և սեփականաշնորհման գործընթացը, անհամեմատ թեթևացել է հարկային բեռը, ազատականացվել է ներդրումային դաշտը: Կատարված այդ և մյուս քայլերը մեծապես խթանել են արտաքին և ներքին կապիտալ ներդրումների ծավալների աճը:

Զարգացում է ապրում նաև սոցիալական ոլորտը, հատկապես կրթության և մշակույթի, առողջապահության, բնակչության կենսապայմանների ապահովման ասպարեզներում: Հրադադարից առ այսօր ուշադրության կենտրոնում է տեղահանվածների ու փախստականների վերաբնակեցման խնդիրը:

Այսօր Արցախի Հանրապետությունն ունի հետխորհրդային տարածքի ամենամարտունակ զինված ուժերից մեկը՝ Պաշտպանության բանակը՝ իր բարձր որակավորման զորական կազմով ու սպառազինությամբ, բանակ, որը, վերջնականապես կազմավորված լինելով Շուշիի ազատագրման ընթացքում, ԱՀ և նրա ժողովրդի անվտանգության գլխավոր ու հուսալի երաշխավորն է: Այս անժխտելի իրողությունը վերահաստատվեց մանավանդ 2016 թ. ապրիլյան պատերազմի ընթացքում, երբ ոչ միայն կասեցվեց շփման գծի ողջ երկայնքով ռազմական գործողություն սանձազերծած ադրբեջանական սպառազեն ու մեծաքանակ զորքերի լայնածավալ հարձակումը, այլև կենդանի ուժի ու զինտեխնիկայի զգալի կորուստներ պատճառվեցին թշնամուն:

Երկրի ներքաղաքական կյանքում տեղի ունեցող զարգացումները հավաստում են, որ ԼՂՀ-ում ժողովրդավարացման գործընթացն անշրջելի է: Երևույթի ակնհայտ արտահայտություններից էին, մասնավորապես, ԼՂՀ 4-րդ գումարման Ազգային ժողովի 2005 թ. հունիսի 19-ի ընտրությունները, որոնք առաջին անգամ անցկացվեցին երկակի՝ մեծամասնական և համամասնական ընտրակարգերով, իսկ 2020 թ. մարտի 31-ին՝ արդեն բացառապես համամասնական ընտրակարգով:

Արցախի օրենսդրական դաշտում աննախադեպ նշանակալի իրողություն էր ԱՀ Սահմանադրության ընդունումը 2006 թ. դեկտեմբերի 10-ին՝ համաժողովրդական քվեարկությամբ, որի հիմքով առաջին անգամ 2007 թ. հուլիսի 19-ին անցկացվեցին հանրապետության նախագահի, իսկ նույն տարվա հոկտեմբերի 14-ին՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները: Տասը տարի անց՝ 2017 թ. փետրվարի 20-ին, դարձյալ համաժողովրդական քվեարկությամբ ընդունվեց էապես խմբագրված ու վերափոխված նոր Սահմանադրություն, համաձայն որի՝ հանրապետությունը մինչ այդ գործած կիսանախագահականից անցում կատարեց նախագահական համակարգի: Ի մասնավորի, մայր օրենքի նոր խմբագրության պահանջների հիմքով Արցախում առաջին անգամ հանրապետության նախագահի և Ազգային ժողովի համապետական ընտրություններն անցկացվեցին միաժամանակ և նույն օրը՝ 2020 թ. մարտի 31-ին:

Ի լրումն ասվածի՝ նշենք նաև, որ ԱՀ օրենսդրական դաշտը ներկայումս ընդգրկում է ավելի քան մեկուկես հազար օրենք: Այն կայացած, արժանապատիվ պետությանը հարիր սեփական օրենսդրական ակտերի մի կուռ ամբողջություն է, որն ի զորու է կանոնակարգելու անխտիր բոլոր իրավական հարաբերությունները՝ ինչպես ներպետական, այնպես էլ արտաքին քաղաքական ասպարեզներում: Այս առումով ուշագրավ է նաև, որ, առայժմ չունենալով միջազգային իրավունքի սուբյեկտի կարգավիճակ, ԱՀ-ն, այնուամենայնիվ, միակողմանիորեն միացած է մի շարք միջազգային կոնվենցիաների: Խոսքը վերաբերում է տակավին 2014 թ. մարտին ընդունված «ԼՂՀ միջազգային պայմանագրերի մասին» օրենքի հիմքով հաստատված «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան վավերացնելու մասին», «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին

միջազգային դաշնագիրը վավերացնելու մասին», «Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիան վավերացնելու մասին», «Հնագիտական ժառանգության պահպանության մասին եվրոպական կոնվենցիան վավերացնելու մասին» և այլ օրենքների:

Միևնույն ժամանակ ԱՀ-ն մշտական ներկայացուցչություններ ունի աշխարհի մի շարք տարածաշրջաններում ու երկրներում, ինչպես, օրինակ, Մերձավոր Արևելքում, Միացյալ Նահանգներում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Ավստրալիայում:

Բացի այդ՝ աստիճանաբար զարգանում են միջխորհրդարանական կապերը: Այսպես, անցած տասնամյակներում ստեղծվել ու վերակազմավորվել են այլ երկրների խորհրդարանների հետ Արցախի Ազգային ժողովի բարեկամական խմբերը՝ Արցախ-Լիտվա, Արցախ-Բելգիայի Թագավորության Ֆլանդրիայի խորհրդարան, Արցախ-Եվրախորհրդարան բարեկամական խմբեր, Արցախ-Ֆրանսիա, Արցախ-Բելգիայի օրենսդիրներ, գիտական ու հասարակական ոլորտի ներկայացուցիչներ, բարեկամության շրջանակներ, Արցախ-Հայաստան համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողով և այլն:

Արցախի պետականության կայացման և առաջընթացի ապահովման գործում, անշուշտ, անգնահատելի է Հայաստանի Հանրապետության համակողմանի աջակցությունը, առանց որի՝ դժվար է պատկերացնել արցախահայության գոյապայքարի հաջողությունները՝ երեկ, թե այսօր: Նշանակալից է Սփյուռքի բարոյական, քաղաքական և նյութական աջակցությունը: Ուշագրավ է, որ Արցախ-Սփյուռք տնտեսական հարաբերությունները, ցուցաբերվող մարդասիրական օգնությանը զուգահեռ, աստիճանաբար վերափոխվում են փոխշահավետ համագործակցության:

ՀՀ, ինչպես նաև Հայկական սփյուռքի լոբբիստական լայն աջակցության շնորհիվ է, որ հետևողական ու հարաճուն զարգացում է ապրում ԱՀ միջազգային ճանաչման գործընթացը: Այն տեղի է ունենում տարբեր պետությունների առանձին վարչական միավորների՝ նահանգների, շրջանների և քաղաքների մակարդակներով: Այսպես, Արցախի ինքնորոշման և անկախության իրավունքը պաշտոնապես ճանաչել են Միացյալ Նահանգների ութ նահանգի օրենսդիր մարմինները, երեք քաղաքային խորհուրդներ, Ֆրանսիայի 15 քաղաքային և 1 շրջանային խորհուրդներ, Ավստրալիայի Հարավային Ուելս նահանգի խորհրդարանը, Իսպանիայի Բասկերի երկրի խորհրդարանը, Լիբանանի երկու բնակավայրերի՝ Բուրջ Համուդի և Այնճարի քաղաքային խորհուրդները՝ ընդունելով համապատասխան բանաձևեր ու կոչ անելով իրենց երկրների կառավարման բարձրագույն մարմիններին սատարելու Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ու ժողովրդավարական անկախության ճանաչմանը:

Հնարավոր է՝ ճանաչման գործընթացը դանդաղ է տեղի ունենում: Բայց հիշենք՝ հայտնի են պետություններ, որոնք միջազգային ճանաչման են արժանացել իրենց ստեղծումից տասնամյակներ անց միայն: Մինչդեռ, ինչպես ցույց են տալիս առկա իրողությունը և դրանից բխող ճանաչման գործընթացը, Արցախի Հանրապետությունը լիովին համապատասխանում է «Պետությունների իրավունքների և պարտականությունների մասին» Մոնտեվիդեոյի 1933 թ. կոնվենցիայով սահմանված՝ պետությունների միջազգային իրավասուբյեկտության չափանիշներին: Իսկ այդ չափանիշները հայտնի են: Դրանք են՝ մշտական բնակչություն, որոշակի տարածք, սեփական կառավարություն, այլ երկրների հետ հարաբերությունների մեջ մտնելու կարողություն: Նույն կամ գրեթե նույն դրույթներն են ամրագրված նաև մի շարք այլ միջազգային հիմնարար փաստաթղթերում: Ահա դրանցից ընդամենը մի քանիսը՝ ՄԱԿ-ի Կանոնադրություն, «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր», ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի «Գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախության տրամադրման մասին հռչակագիր», «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր», «Միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագիր» և այլն: Այնպես որ արժե համաձայնել Արցախի վերլուծական շրջանակներում շրջանառվող այն տեսակետին, թե ՄԱԿ-ի անդամ պետությունների կողմից Արցախի Հանրապետության դեռևս չճանաչված լինելու հանգամանքը չի կարող կասկածի տակ դնել այն իրողությունը, որ Արցախը տարածաշրջանում հանդես է գալիս որպես կարևոր ռազմաքաղաքական գործոն:

Ափսոսանք է հարուցում այն հանգամանքը, որ միջազգային հանրությունը, կարծես թե շահագրգռված լինելով ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմամբ, շարունակում է անտեսել, որ դրա ծագման պատճառը հատկապես մարդու իրավունքների և մի ամբողջ ժողովրդի իրավունքների խախտումն էր:

Այնուամենայնիվ, անկախ Արցախյան խնդրի շուրջ աշխարհի վերաբերմունքից, բանակցային գործընթացի զարգացումներից, արցախցին հաստատուն է կանգնած հայրենի հողի վրա. տիրոջ իրավունքով կառուցում է, արարում, երազում, սիրում, ընտանիք կազմում, հարկ եղած դեպքում, զենքը ձեռքին, շփման գծի խրամատներ ելնում, այլ կերպ ասած՝ երկիր է շենացնում ու պահպանում՝ իր և ժառանգների, գալիք սերունդների համար: Նախնյաց օրինակով նա գիտակցում է, որ հայրենի հողն իր վրա ապրողով է սեփական. տատանվեցիր, լքեցիր հողդ՝ այլևս քոնը չէ այն: Քաղցր, թե դառը, բայց սա է միակ ճշմարտությունը: ■

Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման գործընթացը

Գևորգ Ղուկասյան
Քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ, «Երկիր» ռազմավարական ծրագրավորման հիմնադրամի տնօրեն

Ղարաբաղյան հակամարտության կառավարման և կարգավորման ողջ գործընթացում Արցախի Հանրապետության (ԱՀ) անկախության ճանաչման և հակամարտության օբյեկտիվ (առարկայական) հանրահռչակման ուղղությամբ կատարվում են հսկայածավալ աշխատանքներ, որոնք թեև վերջնարդյունքում չեն հանգեցրել ԱՀ՝ որպես միջազգային իրավունքի սուվերեն սուբյեկտի (ենթակայի) ճանաչմանը, այնուամենայնիվ, շոշափում են միջազգային ճանաչման այլ մակարդակներ, ինչպիսիք են ապակենտրոն ճանաչումը, տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) շրջանակներում ապակենտրոն համագործակցությունը և միջխորհրդարանական հարաբերությունները:

Կատարված ու հընթացս իրականացվող աշխատանքներն էականորեն բարձրացնում են Արցախի Հանրապետության միջազգային վարկն ու հեղինակությունը, արտաքին միջավայրում ձևավորում են հակամարտության օբյեկտիվ ընկալում և հող են նախապատրաստում ԱՀ վերջնական ճանաչման մեկնարկի համար: Այս շրջանակներում իրականացվող աշխատանքների ճնշող մեծամասնությունը բաժին է ընկնում Սփյուռքի հայկական կազմակերպություններին, հատկապես ՀՅ Դաշնակցության Հայ դատի հանձնախմբերին ու գրասենյակներին:

ԱՀ միջազգային ճանաչման ուղղությամբ տարվող աշխատանքների՝ վերջնական ճանաչումով պսակումը օբյեկտիվորեն կաշկանդում են նաև հիմնախնդրի բնույթը, միջազգային հնչեղությունը և, որ ամենակարևորն է, թերևս միջնորդական ձևաչափն ու բանակցային տրամաբանությունը: Բանն այն է, որ ԵԱՀԿ նախարարական խորհրդի Հելսինկիի 1992 թվականի մարտի 24-ի որոշմամբ սահմանված ԵԱՀԽ առաքելության (Մինսկի խմբի[1]) համանախագահության ձևաչափում ընդգրկված են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամներից երեքը, և այն անուղղակիորեն ձևավորում է հստակ միջազգային կոնսենսուս (փոխհամաձայնություն)՝ ներառելով մոլորակի ուժային կենտրոններն ու աշխարհաքաղաքական դերակատարներին: ԵԱՀԿ Մինսկի խմբի մանդատի մեջ որևէ կերպ չի մտնում Արցախի Հանրապետության անկախության ճանաչման գործընթացը, ինչը, իր հերթին, դեռևս անհաղթահարելի բարդություններ է ստեղծում իրական ճանաչման ուղղությամբ լոբբիստական աշխատանքներ իրականացնելու, առավել ևս միջպետական բանակցություններ վարելու համար:

Այնուամենայնիվ, անկախական և հանուն ինքնորոշման իրավունքի իրացման աշխարհում ծայր առած գործընթացները ոչ միայն անկասելի են, այլև վիթխարի արդյունքներ են գրանցել: Այսպես, ՄԱԿ-ի անդամ պետությունների թիվը 1945 թվականից առ այսօր աճել է 3.5 անգամ՝ 55-ից դառնալով 193: Այդ պետությունների շարքում են նորանկախ այնպիսի պետություններ, ինչպիսիք են Էրիթրեան (1993 թ.), Արևելյան Թիմորը (2002 թ.), Չեռնոգորիան (2006 թ.), Հարավային Սուդանը (2011 թ.) և այլն:

Արցախի Հանրապետության արտաքին քաղաքական առաջնահերթություններն ու միջազգային ճանաչման գործընթացը

Արցախի Հանրապետության նախագահի ընդհանուր ղեկավարմամբ՝ հանրապետության արտաքին քաղաքական գերատեսչության հիմնական խնդիրներն են ԱՀ արտաքին համալիր քաղաքականության իրականացումը, միջազգային հարաբերություններում Արցախի Հանրապետության շահերի և իրավունքների պատշաճ ու հետևողական ներկայացումը, Արցախի Հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը: Միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ փոխշահավետ և բարիդրացիական հարաբերություններ զարգացնելու Արցախի Հանրապետության այս հավակնությունը էապես սահմանափակված է հանրապետության՝ որպես միջազգային իրավունքի սուվերեն սուբյեկտի ճանաչված չլինելու փաստով: Հայտարարված նպատակներին թեկուզ մասնակիորեն հասնելու համար Արցախի դիվանագիտական ծառայությանը մեծապես օգնում է Հայաստանի Հանրապետության նույն ծառայությունը: Այնուամենայնիվ, դիվանագիտական ծառայությունը տվյալ պետության կայացվածության, սուվերենության և պետական իշխանության գերակայության կարևորագույն ցուցիչներից է: Հետևաբար ՀՀ դիվանագիտության բացահայտ և հաճախակի միջնորդությունները կարող են հակառակ ազդեցություն ունենալ Արցախի միջազգային ճանաչման գործընթացում: Այս դեպքում առանձնահատուկ կարևորվում են հայկական համայնքային կազմակերպությունների՝

որպես հասարակական միջնորդի ու հյուրընկալող պետությունում գործող ճնշման խմբի դերը, նշանակությունն ու տեղը:

Ներկայումս Արցախի Հանրապետությունը մշտական ներկայացուցչություններ ունի Երևանում, Մոսկվայում, Վաշինգտոնում (համատեղությամբ նաև Կանադայում), Փարիզում, Բեռլինում, Սիդնեյում ու նաև Մերձավոր Արևելքում: Ակնհայտ է, որ այսպիսի ներկայացվածությունը ադրբեջանաթուրքական ընդարձակ լոբբիստական ցանցի գործունեության պարագայում արդյունավետ համարվել չի կարող: Էական մեկ այլ խնդիր է այս ներկայացուցչությունների կազմակերպահրավական կարգավիճակը, քանի որ այդ հիմնարկները ընդունող պետությունների կողմից պաշտոնապես չեն ընդունվում որպես ԱՀ ներկայացուցչություններ: Հետևաբար հայկական համայնքային կազմակերպությունները անուղղակիորեն պետք է ստանձնեն և երբեմն ստանձնում են Արցախի ոչ պաշտոնական ներկայացուցչությունների դեր:

Ընդհանրապես կարելի է առանձնացնել Արցախի Հանրապետության միջազգային ճանաչմանն ուղղված արտաքին քաղաքականության՝ որպես անկախական գործընթացի անշրջելիության և դրան այլընտրանքի բացակայության ցուցիչի երեք ուղղություն՝

1. ապակենտրոն համագործակցություն,
2. միջխորհրդարանական դիվանագիտություն,
3. ապակենտրոն ճանաչում:

Ապակենտրոն համագործակցություն

Արցախի հարցով հայկական լոբբիի աշխատանքային հիմնական ուղղություններից մեկը Արցախի և աշխարհի տարբեր երկրների բազում համայնքների միջև ապակենտրոն համագործակցության հաստատմանը նպաստելն ու այդ համագործակցությունը զարգացնելն է: Նման հարաբերությունները էականորեն նպաստում են ուղիղ շփումներով պայմանավորված բարեկամական կապերի ամրապնդմանը տարբեր ժողովուրդների հետ: Նման գործընթացները նպաստում են նաև Արցախի տեղական ինքնակառավարման համակարգի կայացմանը, ինչպես նաև մշակութային, կրթական, սպորտային և առևտրային տարաբնույթ ծրագրերի իրականացմանը:

Այսպիսով՝ ներկա դրությամբ Արցախի տարբեր համայնքների հետ միջհամայնքային ապակենտրոն համագործակցության հուշագրեր են կնքել Ֆրանսիայի 14, ԱՄՆ-ի 5, Լիբանանի 2, Բասկերի երկրի 1 և Բրազիլիայի 1 համայնքներ:

2015 թ. մայիսի 17-ին համագործակցության հռչակագիր է ստորագրվել Ֆրանսիայի Դրոմ դեպարտամենտի (Ռոն-Ալպ տարածաշրջան) և Արցախի Հանրապետության միջև[2]:

Միջխորհրդարանական դիվանագիտություն

Ինչպես վերը նշվեց, ճանաչված չլինելու հանգամանքը մեծապես կաշկանդել է ԱՀ արտաքին քաղաքականությունը և հատկապես դրա դիվանագիտական բաղադրիչը: Համադրված

Հանդիպում ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում

աշխատանքը՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության և լոբբիստական կառույցների ներգրավմամբ, միջխորհրդարանական հարաբերությունների համատեքստում ձևավորել է հետևյալ պատկերը:

2013 թ. փետրվարի 26-ին Լիտվայի Հանրապետության Սեյմասում ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի հետ բարեկամության խումբ: 2017 թ. հուլիսի 5-ին խորհրդարանական բարեկամության խումբն ընդլայնվեց և վերափոխվեց Լիտվա-Արցախ բարեկամության շրջանակի, որին միացել են Լիտվայի խորհրդարանի պատգամավորներ, քաղաքական և հասարակական գործիչներ:

2013 թ. մարտի 19-ին Ֆրանսիայում ձևավորվեց Արցախի հետ բարեկամության խումբ, որում ընդգրկված են քաղաքական գործիչներ, խորհրդարանի պատգամավորներ և սենատորներ:

2014 թ. հոկտեմբերի 15-ին Եվրոպական խորհրդարանում ԱՀ անկախության 23-ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառման ընթացքում հայտարարվեց Արցախի հետ բարեկամության խմբի ստեղծման գործընթացի մեկնարկի մասին:

2017 թ. հոկտեմբերի 18-ին Բելգիայի Թագավորության Ֆլամանդական խորհրդարանում հայտարարվել է Արցախի հետ Բելգիայի ֆլամանդացի պատգամավորների բարեկամության խումբ ստեղծելու մասին:

2017 թ. հոկտեմբերի 20-ին Բրյուսելի Վալոնական խորհրդարանում հայտարարվել է Արցախի հետ Բելգիայի ֆրանսախոս պատգամավորների, հասարակական և գիտական գործիչների բարեկամության շրջանակ ստեղծելու մասին:

Միջազգային ապակենտրոն ճանաչում

Դասական, խորհրդարանական դիվանագիտության և Հայ դատի հանձնախմբերի ու գրասենյակների աշխատանքների շնորհիվ, ինչպես նաև պետականաշինության գործընթացում ձեռք բերված հաջողություններով պայմանավորված՝ որոշակի հաջողություններ է գրանցել նաև ԱՀ միջազգային ճանաչման գործընթացը: Ի տարբերություն նախորդ երկու դեպքերի՝ միջազգային ճանաչման հարցում գործ ունենք եվրոպական ընդամենը մեկ նախադեպի՝ Բասկերի երկրի խորհրդարանի կողմից ի պաշտպանություն ԱՀ ժողովրդի ինքնորոշման իրավունքի 2014 թ. սեպտեմբերի 12-ին ընդունված բանաձևի հետ: Փոխարենը այդ դեպքում միարժեքորեն առաջատարն ամերիկյան

նահանգներն ու քաղաքներն են:

Ընդհանուր առմամբ, ի հավելումն Բասկերի երկրի, Արցախի Հանրապետության անկախությունը ճանաչվել է ամերիկյան 8 նահանգի, 4 քաղաքի, ավստրալիական 1 նահանգի կողմից:

Ուշագրավ է՝ 1999 թ. մարտի 11-ին Եվրոպական խորհրդարանն ընդունել է բանաձև, որում նշված էր, որ Լեռնային Ղարաբաղը հռչակել է իր անկախությունը միութենական հանրապետությունների՝ համանման հայտարարությունների ընդունումից անմիջապես հետո:

2014 թ. նոյեմբերի 3-ին իսպանական ինքնավար նահանգ համարվող Նավարայի խորհրդարանի խոսնակների խորհուրդն ընդունել է հայտարարություն, որում նշված է, որ Լեռնային Ղարաբաղի իշխանությունները պետք է բանակցային ձևաչափի կողմ հանդիսանան, ինչը կարող է որոշիչ լինել ընդհանրապես Արցախի ապագայի հարցում[3]:

Վերոգրյալից մեկնելով՝ կարող ենք փաստել, որ Արցախի միջազգային ճանաչման գործընթացը եռամակարդակ հանրության շրջանում որոշակի հաջողություններ է գրանցել, ունի անընդհատականության միտում և հող է նախապատրաստում հանրապետության լիիրավ ճանաչման համար:

Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման օբյեկտիվ խոչընդոտներ: Եզրակացություններ

Արցախի հարցով միջազգային ճանաչման գործընթացը ոչ միայն արտաքին աշխարհում միանշանակ ընկալվող գործընթաց չէ, այլև առնչվում է օբյեկտիվ բազմաթիվ հանգամանքների, որոնք խստորեն դժվարացնում են հայկական լոբբիստական կազմակերպությունների գործունեությունը:

Առանձնացնենք երեք հիմնական խոչընդոտներ և դրանց անդրադառնանք առանձնաբար.

1. հակամարտության բանակցային ձևաչափն ու բանակցային տրամաբանությունը,
2. թուրք-ադրբեջանական գործոնը,
3. խոշոր պետություններում ինքնորոշման իրավունքի իրացման ընկալումը որպես անջատողականության դրսևորում՝ պայմանավորված ներքին քաղաքական զարգացումներով:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափը՝ մոլորակի ուժային կենտրոնների ներգրավմամբ, անուղղակիորեն կաշկանդում է այլ պետությունների կողմից Արցախի Հանրապետության ճանաչման գործընթացը. խոսքն այս դեպքում լիիրավ, ոչ թե ապակենտրոն ճանաչման մասին է: ԱՀ ճանաչմանը ԵԱՀԿ Մինսկի խումբը, բանակցային մայր ու աշխատանքային փաստաթղթերը չեն անդրադառնում, լավագույն դեպքում խոսվում է կարգավիճակի հստակեցման անհրաժեշտության մասին, այն էլ՝ բանակցային գործընթացի որոշակի փուլում: Հետևաբար այլ պետությունների համար այդքան էլ նպատակահարմար չէ մտնել մի գործընթացի մեջ, որն անխուսափելիորեն հանգեցնելու է եռանախագահ երկրների անթաքույց բացասական վերաբերմունքին: Անկախության ճանաչումն այս դեպքում կարող է դիտվել ոչ ավել, ոչ պակաս բանակցային ձևաչափի արհամարհում անկախությունը ճանաչող պետության կողմից:

ԱՀ ճանաչման գործընթացն անպատճառ հանգեցնելու է նաև ճանաչող պետության ու Ադրբեջանի և Թուրքիայի միջև հարաբերությունների լարմանը և թուրք-ադրբեջանական լոբբիստական կառույցների ջղաձգությանը:

Բոլորովին այլ հարց է այն պետությունների անհանգստությունը, որոնք ներսում ունեն ինքնորոշման խնդրի բարձրացման ներուժ ունեցող խմբեր, օրինակ՝ Կատալոնիան Իսպանիայի պարագայում: Այս դեպքում, մեղմ ասած, դժվար է հավատալ, որ Իսպանիան կամ Իսպանիայի հետ սերտորեն դաշնակցող որևէ պետություն կարող է ճանաչել Արցախի անկախությունը, ինչն անուղղակիորեն կարող է խրախուսել նաև կատալոնական շարժումը:

Վերը շարադրված առարկայական դժվարությունները բացարձակապես չեն կարող ընկալվել որպես Արցախի Հանրապետության անկախության ճանաչման դատապարտելիության արձանագրում: Ավելին՝ ցայսօր ապակենտրոն համագործակցության և ճանաչելիության, ինչպես նաև միջխորհրդարանական հարաբերությունների մակարդակներում արձանագրված հաջողությունները իրատեսական հիմք են նախապատրաստում ճանաչման գործընթացի շարունակականության ապահովման և նոր հաջողությունների համար: Պետք է նկատել, որ Արցախի անկախության գործընթացը, նույնիսկ անկախ բանակցային գործընթացի արդյունքից, անշրջելի իրողություն է, իսկ վերջին տասնամյակներին ՄԱԿ-ի անդամ պետությունների թվաքանակի շեշտակի աճն անուղղակիորեն նախանշում է անկախական գործընթացի այն ուղին, որը սպասում է Արցախի Հանրապետությանը: ■

Օգտագործված աղբյուրներ

1- ԵԱՀԽ Հելսինկիի հանդիպմանը Բելառուսի պատվիրակին հանձնարարվում է Մինսկում հրավիրել համապատասխան համաժողով՝ տասնմեկ պետությունների մասնակցությամբ: Մինսկյան հանդիպումը հակամարտության սրման պատճառով այդպես էլ տեղի չունեցավ, սակայն խմբի անվանումը պահպանվեց:

2- Ֆրանսիայում ադրբեջանական լոբբիի տևական աշխատանքներից հետո՝ 2019 թ. հունիսի 11-ին, Ֆրանսիայի Վալանս, Բուրգ լե Վալանս և Բուրգ դը Պեաժ քաղաքների իրավաբանական վարչությունները ծանուցվել են առ այն, որ Գրենոբլի վարչական դատարանը չեղյալ է հայտարարել Դրոմի դեպարտամենտ-Արցախ, Վալանս-Ստեփանակերտ, Բուրգ լե Վալանս-Շուշի, Բուրգ դը Պեաժ-Մարտունի համայնքների միջև կնքված բարեկամության հռչակագրերը: Հետաքրքրական է, որ այս որոշումն առաջացրել է ֆրանսիացի որոշ համայնքապետերի զայրույթը:

3- Կատարվածին անմիջապես հակադարձեցին տեղի հայկական լոբբիստական կազմակերպությունները, և, ըստ էության, վտանգավոր նախադեպը կասեցվեց. ֆրանսիական և Արցախի մնացյալ համայնքների հարաբերությունները իրավական առումով դեռևս շարունակում են գործել:

Ներկայացված տվյալները վերցված են Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքից:

Պէյրութի աղէտը. պատճառներ, հետեւանքներ ու վարկածներ

Վահրամ Էմմիեան
«Ազդակ» օրաթերթի միջազգային լուրերու խմբագիր

Հիրոշիմայի հիւլէական ռմբակոծման 75ամեակի նշումէն երկու օր առաջ՝ 4 օգոստոսի երեկոյեան ժամը 18:07ին, Պէյրութի նաւահանգիստին մէջ տեղի ունեցաւ հզօր պայթում մը, որ իր ուժգնութեան և աղէտալի հետևանքներուն պատճառով կարգ մը լրատուամիջոցներու կողմէ կոչուեցաւ Պէյրութշիմա, իսկ ուրիշներու կողմէ՝ Պէյրութի Չեռնոպիլը:

43 մեթր խորութեամբ փոս յառաջացուցած պայթումը տեղի ունեցաւ նաւահանգիստի թիւ 12 պահեստանոցին մէջ, ուր ամբարուած էր 2750 թոն ամոնիաքի նիթրաթ՝ քիմիական նիւթ մը, որ, անմեղ պարարտացուցիչ մը ըլլալուն կողքին, նաև ռումբերու պատրաստման մէջ օգտագործուող մահաբեր պայթուցիկ նիւթ մըն է: Մասնագէտներ «Ֆայնանշըլ Թայմզ» օրաթերթին յայտնեցին, թէ ամոնիաքի նիթրաթը մեծ քանակով ու երկար ժամանակով պահեստի մէջ պահուելուն պարագային կը խոնաւնայ (որքան աւելի, երբ նաւահանգիստի մէջ է) և ընդլայնելով միակտուր զանգուածի կը վերածուի, ինչ որ զայն կը վերածէ լարուած ռումբի:

Կարգ մը աղբիւրներ յայտնեցին, թէ Լիբանանի մայրաքաղաքին մէջ արձանագրուած պայթումը, որուն ձայն լսուեցաւ Կիպրոսի մայրաքաղաք Նիկոսիոյ մէջ, փոքր հիւլէական ռումբի մը զօրութեամբ էր, իսկ Յորդանանի երկրաբանական գործակալութիւնը նշեց, թէ ատիկա համազօր էր 4,3 աստիճան ուժգնութեամբ երկրաշարժի: Արձանագրուեցան շուրջ 180 զոհեր, որոնց շարքին՝ 15 լիբանանահայեր, ինչպէս նաև շուրջ 6000 վիրաւորներ և տասնեակներով անյայտ կորածներ:

Պէյրութի նահանգապետ Մարուան Ապուտ նաւահանգիստին վնասները գնահատեց 15 միլիառ տոլար, մայրաքաղաքին մէջ բնակարաններունը՝ 5 միլիառ տոլար, 200 հազար ընտանիքներ տեղահանուեցան, կամ անոնց բնակարանները վնասուեցան: Վնասուեցան նաև 60 հազար խանութներ: Ըստ կարգ մը տուեալներու՝ մայրաքաղաքի շրջանին մէջ 4 հիւանդանոցներ դադրեցան գործելէ, 25ը վնասուեցան: Վնասուեցան նաև 145 պաշտամունքի վայրեր և քաղաքի տարածքին 40 առ հարիւրը:

Այս բոլորը արձանագրուեցան երկիրի մը մէջ, որ կը պայքարի քորոնաժահրի համաճարակին դէմ, և արդէն 1943էն՝ իր անկախութենէն ի վեր տնտեսական ու ելևմտական յոռեգոյն տագնապի մէջ ըլլալով՝ անոր դրամանիշը կորսնցուցած էր իր արժէքին 80 առ հարիւրը, աղքատութեան համեմատութիւնը բարձրացած էր շուրջ 50 առ հարիւրի, իսկ անգործութեանը՝ 35 առ հարիւրի: Լիբանան անցնող մարտին արդէն չէր կրցած վճարել 1,2 միլիառ տոլարի արտաքին պարտատոմսերու

պարտքը և Միջազգային դրամական ֆոնտէն 10 միլիառ տոլարի փոխատուութիւն խնդրած է, սակայն ֆոնտին հետ բանակցութիւնները տակաւին որևէ արդիւնքի չեն հասած: Երկիրի վարչապետ Հասսան Տիապի ղեկավարութեամբ գործող կառավարութիւնը, որ մինչ այդ տոկացած էր այդ բոլորին և անկարգութիւններով ու ճամբաներու փակմամբ ընթացող զանգուածային բողոքի ցոյցերուն, իշխանութիւնը ստանձնելէն շուրջ 200 օր ետք հրաժարեցաւ՝ ի տես երկրին հասած մեծ աղէտին:

9 օգոստոսին Փարիզի մէջ տեղի ունեցաւ Լիբանանի յատուկ նուիրատուներու՝ Պէյրութի և լիբանանցի ժողովուրդի աջակցութեան խորհրդաժողովը՝ կազմակերպութեամբ Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի և հովանաւորութեամբ ՄԱԿին: Փարիզի այս խորհրդաժողովին մասնակցեցան 36 երկիրներ և միջազգային կազմակերպութիւններ:

Խորհրդաժողովէն ետք նախագահ Մաքրոնի գրասենեակը յայտարարեց, որ Լիբանանի անմիջական օժանդակութեան համար տրուած է շուրջ 253 միլիոն եւրոյի (298 միլիոն տոլար) խոստում: Խորհրդաժողովին մասնակիցները համաձայնեցան, որ իրենց օժանդակութիւնները ըլլան արագ, բաւարար և լիբանանցի ժողովուրդի կարիքներուն համահունչ, ինչպէս նաև համակարգուած (ՄԱԿի ղեկավարութեան տակ) և ուղղակիօրէն լիբանանցի ժողովուրդին յանձնուին բարձր մակարդակի ազդուութեամբ ու թափանցիկութեամբ:

Խոստացուած օժանդակութիւնները, փոխան Լիբանանի պետութեան, «ուղղակիօրէն լիբանանցի ժողովուրդին» յանձնելու որոշումը և ազդուութեան ու թափանցիկութեան նշումը Լիբանանի պետութեան շառաչուն ապտակ մըն էին ու պետական ամբողջ համակարգին նկատմամբ անվստահութեան արտայայտութիւն մը: Վարչապետ Հասսան Տիապ 10 օգոստոսին կառավարութեան հրաժարականը

յայտարարելու իր պատկերասփռուած ճառին մէջ խոստովանեցաւ, թէ փտածութեան համակարգը աւելի մեծ է, քան պետութիւնը, «իսկ պետութեան ձեռքերը կապկպուած են այդ համակարգով, որուն կարելի չէ դիմադրել, ինչպէս նաև կարելի չէ անկէ ձերբազատիլ: Այդ փտածութեան օրինակներէն մէկը պայթեցաւ Պէյրութի նաւահանգիստին մէջ»:

Մայրիներու երկրին մայրաքաղաքն ու անոր արուարձանները աւերած պայթումէն ետք Լիբանանի կառավարութիւնը անմիջապէս ձեռնարկեց դէպքի հետաքննութեան: Լիբանանը, սակայն, յարանուանական ու խիստ պառակտուած երկիր է, ուր նուազագոյն դէպքն ու քայլը կը քաղաքականացուին և կը շահագործուին, ուր մնաց, երբ խօսքը այս տարողութեամբ դէպքի մը մասին է:

Արևմտամէտ ընդդիմութիւնը միջազգային հետաքննութիւն պահանջեց՝ անվստահութիւն յայտնելով տեղական իշխանութեան կողմէ հետաքննութեան: Արևմուտքին հակառակորդ ճամբարին պատկանող իշխանամէտ ուժերը իրենց կարգին մերժեցին ընդդիմութեան գաղափարը՝ անվստահութիւն յայտնելով միջազգային հետաքննութեան և հարցականի տակ առնելով անոր անկողմնակալութիւնը՝ հիմնուելով նախադէպի մը՝ նախկին վարչապետ Ռաֆիք Հարիրիի սպանութեան հետաքննութեան ու այդ սպանութեան հարցով ստեղծուած յատուկ Միջազգային դատարանին կազմութեան ու գործունէութեան վրայ, զոր կը նկատեն քաղաքական:

Բոլոր կողմերը գոհացնելու փորձով մը որդեգրուեցաւ միջին լուծում մը՝ հետաքննութիւնը յանձնուեցաւ Լիբանանի Արդարութեան գերագոյն խորհուրդին, ինչ որ կը նշանակէ, թէ Ռաֆիք Հարիրիի սպանութեան հարցով Միջազգային դատարանին վճիռի հրապարակման նախօրեակին գործուած յանցագործութիւնը վտանգաւոր է և կը վտանգէ երկրին ներքին ապահովութիւնն ու կը հարուածէ միջհամայնքային խաղաղութիւնը: Նոյն ատեն լիբանանեան կառավարութեան խնդրանքով պայթումի վայրին մէջ հետաքննութեան կը մասնակցին չորս օտար խմբակներ՝ ֆրանսական, թրքական, ռուսական և ամերիկեան, որոնց երկիրները շահագրգռուած են ներլիբանանեան

զարգացումներով և անոնց շրջանային ազդեցութեամբ: Այլ խօսքով՝ գետնի վրայ հետաքննութեան աշխատանքը միջազգայնացուած է, իսկ անկէ եզրակացութիւն գոյացնելու աշխատանքը կը մնայ ազգային: Հնարք մը, որուն յաջողութիւնը երաշխաւորուած չէ:

Անկախ ատկէ՝ երաշխաւորուած չէ նաև ճշմարտութեան բացայայտումը: Յոյն ողբերգակ Էսքիլես կը նշէ. «Պատերազմի մէջ առաջին զոհը ճշմարտութիւնն է», իսկ Լիբանանի մէջ «պատերազմը» երկու զուգահեռ մակարդակներու վրայ է: Առաջինը՝ ուղղակի՝ լիբանանեան քաղաքական բազմաթիւ կողմերուն միջև, իսկ երկրորդը՝ անուղղակի՝ այդ քաղաքական կողմերուն հովանաւոր օտար պետութիւններուն միջև: Այլ խօսքով՝ այն, ինչ որ պիտի բացայայտուի, իբրև տեսանկիւն պիտի ընկալուի և ոչ թէ իբրև առարկայական ճշմարտութիւն: Ուստի և կարելի չէ բացառել մէկէ աւելի և իրարամերժ «ճշմարտութիւններու» «բացայայտումը»:

Նաւերու և նաւարկումի հարցերով մասնագիտացած «Շիփըրեսթըտ» կայքը կը նշէ, թէ մոլտովական դրօշը բարձրացուցած և 2750 թոն ամոնիաքի նիթրաթով բեռցուած «Ռոսուս» նաւը 23 սեպտեմբեր 2013ին Վրաստանի Պաթում քաղաքի նաւահանգիստէն ճամբայ ելած է դէպի Մոզամպիք և կանգ առած է Մերսինի նաւահանգիստը: «Ռոսուս»ի նաւապետ Պորիս Պորուխով 12 օգոստոսին «Մայատին» պատկերասփիւռի կայանին յայտնեց, թէ Թուրքիոյ մէջ իրեն անյայտ պատճառներով փոխուած է նաւուն անձնակազմը, որ մերժած է Մոզամպիք երթալ: Նաւը ապա մեկնած է Յունաստան, ուր, նաւապետին վկայութեամբ, վառելանիւթով և սննդեղէնով պարենաւորուած է, ապա իրենց թելադրուած է հանդիպիլ Պէյրութ, ուր նաւը գրաւուած է մաքսատուրք չվճարելուն համար, ինչ որ զարմանալի է և հարցականներ կը ստեղծէ: Տիւրզիներու սուրիամէտ «Թաուհիտ Արապի» կուսակցութեան ղեկավար Ուիամ Ուահապ յայտնեց, թէ տուեալները ցոյց կու տան, որ պայթուցիկ նիւթը նաւուն վրայ բեռցուած է Թուրքիոյ մէջ և Լիբանանի ճամբով պիտի ուղղուէր Սուրիա, իսկ Մոզամպիքի պատմութիւնը սուտ մըն է: «Տրամաբանակա՞ն է, որ մէկը երկու միլիոն տոլար արժող ապրանքէ հրաժարի, որպէսզի 50 հազար լիբանանեան ոսկի չվճարէ»,- հարց տուաւ ան:

Զարմանալի է նաև այդպիսի մեծաքանակ վտանգաւոր նիւթի մը՝ ամբողջ 7 տարի ոչ պատշաճ պայմաններու տակ պահուիլը՝ հակառակ բարձրաստիճան տարբեր պետական այրերու և պաշտօնատարներու՝ ատոր ներկայացուցած վտանգէն զգուշացնող շարք մը գրաւոր զեկուցումներուն: Այստեղ յստակ է, որ գոյութիւն ունի անփութութիւն մը, որուն դիտաւորեալ կամ ոչ դիտաւորեալ ըլլալը պէտք է հետաքննութեան ճամբով ճշդուի, և, ըստ այնմ, թերացողները կամ յանցագործները հաշուետուութեան ենթարկուին:

«Հըզպալլա»ի ընդհանուր քարտուղար Մէյիտ Հասան Նասրալլա 7 օգոստոսին, իր պատկերասփռուած խօսքին մէջ ատոր կարևորութիւնը ընդգծելով, դիպուկ կերպով նշեց. «Եթէ պետութիւնը, քաղաքական վերնախաւը, ըլլայ ան իշխանութիւն, թէ ընդդիմութիւն, չկարողացան այս հարցով արդիւնքի հասնիլ և յանցագործները դատել, ապա կարելի է ըսել, թէ պետութիւն կառուցելու յոյս չկայ»:

Պայթումին գլխաւոր պատճառը թերացումն է, պատասխանատուներու դիտաւորեալ կամ ոչ դիտաւորեալ անփութութիւնն ու անհոգութիւնը. այդ մէկը հաստատ է: Մայրիներու երկրին մայրաքաղաքը հարուածած աղէտին երկրորդ պատճառը, սակայն, ունի երկու վարկած՝ արկած կամ խափանարարական արարք: Վերջինիս պարագային ևս գոյութիւն ունի երկու վարկած՝ ականահարում կամ օդային յարձակում: Այստեղ նշենք, որ բազմաթիւ քաղաքացիներ ռմբաձիգի մը թռիչքի ձայնը լսելուն մասին կը վկայեն:

Թուրքիա ահաւոր պայթումէն անմիջապէս ետք առաջարկեց վերանորոգել նաւահանգիստը: Այդ աշխատանքը ստանձնելու պարագային Անգարան իր անուղղակի վերահսկողութեան տակ պիտի առնէ երկրին գլխաւոր նաւահանգիստը, ուրկէ մուտք կը գործէ երկրի ներածումներուն 60 առ հարիւրը: Թուրքիան արդէն յաջողած է մեծ ազդեցութիւն ունենալ Հիւսիսային Լիբանանի, ուստի և այդ շրջանի մայրաքաղաք Թրիփոլիի նաւահանգիստին վրայ, որուն և թրքական Մերսինի նաւահանգիստին միջև յունուար 2019ին ստորագրուած համաձայնութեամբ հաստատուած է նաւարկման ուղղակի գիծ: Մերսին-Թրիփոլի-Պէյրութ նաւահանգիստներու ցանց մը ստեղծելու պարագային Թուրքիան կ'ամրապնդէ Արևելեան Միջերկրականի շրջանին մէջ իր ազդեցութիւնը:

Թուրքիոյ փոխնախագահ Ֆուաթ Օքթայ 8 օգոստոսին Պէյրութ այցելութեան ընթացքին յայտարարեց, որ Մերսինի և Ալեքսանտրեթի «Լիմաք Փորթ Իսքենտերուն» միջազգային նաւահանգիստները լիբանանցիներու ծառայութեան տակ պիտի ըլլան (բնականաբար մինչև Պէյրութի նաւահանգիստի գործունէութեան վերականգնումը): Պէյրութի նաւահանգիստի՝ Մերսինի և սուրիական բռնագրաւեալ Ալեքսանտրեթ նահանգի (Թուրքիա զայն Հաթայ կը կոչէ) նաւահանգիստներով փոխարինումը իր կարգին պիտի նպաստէ Լիբանանի մէջ Թուրքիոյ տնտեսական և անկէ բխող քաղաքական ազդեցութեան աճին:

Պէյրութի նաւահանգիստին պայթումը պատճառ դարձաւ մարդկային մեծ ողբերգութեան, սակայն աղէտ մը ըլլալուն կողքին նաև ստեղծեց ներքին, շրջանային ու միջազգային ռազմավարական ու քաղաքական մակարդակներու վրայ առաւելագոյն շահ ապահովելու և հակառակորդ կամ մրցակից կողմերու վրայ կէտեր արձանագրելու առիթ մը:

Օսմանեան կայսրութեան փառքը վերականգնելու և անոր տարածքին վրայ վերահսկողութիւն

Բեյրութի նավահանգիստը պայթյունից հետո

հաստատելու համար ամբողջ Միջին Արևելքի և Հիւսիսային Ափրիկէի մէջ յարձակողական քաղաքականութիւն վարող և մեծ ու փոքր հարցերու մէջ նախայարձակ կեցուածք որդեգրող Թուրքիան այս պարագային ալ մեծ աշխուժութեամբ ու խանդավառութեամբ ձեռնարկեց Լիբանանի օժանդակութեան մատակարարման՝ Պէյրութ գործուղելով թրքական 6 կողմեր՝ Թուրքիոյ առողջապահութեան նախարարութիւնը, արտակարգ իրավիճակներու վարչութիւնը, Կարմիր մահիկը, Շտապ օգնութեան խորհուրդը, Կրօնական հիմնարկը և երկու այլ թրքական մարմիններ:

Թուրքիան կրնայ Լիբանանի ողբերգութենէն առաւելագոյն շահ ապահովող կողմը ըլլալ և մեծապէս ընդլայնել երկրին ու Արևելեան Միջերկրականի տարածաշրջանին մէջ իր ազդեցութիւնը, եթէ, անշուշտ, Լիբանանի ներքին քաղաքականութեան մէջ մեծ ազդեցութիւն ունեցող գլխաւոր դերակատարները՝ Միացեալ Նահանգները, Ֆրանսան, Սէուտական Արաբիան, Արաբական Միացեալ Էմիրութիւններն ու Իրանը, ինչպէս և նուազ ազդեցութիւն ունեցող Ռուսիան ու Եգիպտոսը անոր արտօնեն:

14 օգոստոսին ֆրանսական ծովուժի ուղղաթիռակիր «Թոներ» մարտանաւի՝ Պէյրութի նաւահանգիստ հասնիլը այդ ուղղութեամբ ֆրանսական յստակ պատգամ մըն է Անգարայի, սակայն ոչ միայն անոր: Իրանի արտաքին գործոց նախարար Մուհամեդ Ժաւատ Զարիֆ, որ նոյն օրը Պէյրութ կը գտնուէր, ֆրանսական մարտանաւի այցելութեան իմաստը լաւապէս հասկնալով, «Մայատին»էն յայտարարեց. «Օտար մարտանաւերու՝ լիբանանեան ծովափերուն մօտ ներկայութիւնը բնական երևոյթ չէ և սպառնալիք է լիբանանցի ժողովուրդին ու անոր դիմադրութեան (այսինքն՝ «Հըզպալլա»ին)»: Մարտանաւի ժամանումով շեփորուող ֆրանսական պատգամը աւելի քան յստակ է. «Բոլորդ ետ կանգնեցէք, Ֆրանսան է լիբանանեան թղթածրարին տէրը»: Բայց և այնպէս, խաղը տակաւին չէ աւարտած...

Վ. Պուտինը նախապատրաստում է Ռուսաստանը՝ դիմակայելու գալիք մարտահրավերներին

Վ. Հ.

Ստացվում է այնպես, որ խոսել Ռուսաստանի մասին նշանակում է խոսել Պուտինի վարած քաղաքականության և իրագործելիք ծրագրերի մասին: Այս անծայրածիր, պաշարներով հարուստ ու բազմազգ երկրի համար միշտ էլ կարևոր է եղել, թե ով է այն ղեկավարում՝ ի տարբերություն այն երկրների, որտեղ կառավարման համակարգը, իրավակարգը, կենսագործունեության սոցիալ-տնտեսական մեխանիզմները այնքան մշակված են, որ, անկախ նրանից, թե ով կգլխավորի տվյալ երկիրը՝ կամազուրկ քաղաքական միջակություն, անհավասարակշիռ հոգեխառնվածքի տեր մարդ կամ թե սեռական ոչ ավանդական կողմնորոշում ունեցող մի անձ, պետական մեքենան կշարունակի իր ընթացքը ինքնակառավարման ռեժիմով և լուրջ վթարի չի ենթարկվի: Ռուսաստանը ինքնակառավարման ռեժիմի չի ենթարկվում, և այն առաջ գլորելու համար հզոր անհատականություն է պետք՝ ուժեղ ձեռքով: Իսկ երբ այդպիսիններին փոխարինելու են գալիս միջակությունները կամ անհավասարակշիռ անձինք, պետությունը վթարվում է, նույնիսկ փլուզվում: Այսպես, ավերված ու անկառավարելի Ռուսաստանը 20 տարում Իոսիֆ Ստալինի ղեկավարությամբ դարձավ արդյունաբերական, միջուկային գերտերություն, իսկ նրան փոխարինած Ն. Խրուշչովը կանգնեցրեց երկիրը միջուկային պատերազմի շեմին, խառնաշփոթ ստեղծեց տնտեսության մեջ: Բարի, բայց կամքից թույլ Լեոնիդ Բրեժնևը երկիրը սուզեց լճացման մեջ, իսկ Արևմուտքի սիրեցյալ ժողովրդավար Գորբաչովը այն հասցրեց փլուզման: Կամակոր, խմիչքի նկատմամբ թուլություն ունեցող Բ. Ելցինը Ռուսաստանը բոլոր ցուցանիշներով դարձրեց երրորդ կարգի, անկառավարելի, մասնատման եզրին հասած երկիր: Քաղաքագետներից շատերը համոզված էին, որ ելցինյան քաոսից երկիրը կարող է դուրս հանել միայն ուժեղ ձեռք ունեցող ղեկավարը, դիկտատորական հակումներով որևիցե գեներալ, օրինակ՝ Ա. Լեբեդը: Բայց եկավ մի համեստ գնդապետ, որին կարգին չէին էլ ճանաչում, նայում էին որպես Ելցինի դրածոյի, օլիգարխների կամակատարի, որպես իշխանության մեջ ժամանակավոր երևույթի: Այդ համեստ գնդապետին 20 տարի պետք եղավ, որպեսզի առանց բռնությունների, գորգոռոցների և զազրախոսության, հետևողական ու համառ աշխատանքով դուրս բերի երկիրը ելցինյան վայրի շուկայական, կիսաքրեական տնտեսվարման ճիրաններից, վերականգնի տարածքային միասնականությունը, կառավարելի դարձնի

Նիկիտա Խրուշչով

նահանգապետերին և բարձրաստիճան չինովնիկներին, սանձահարի օլիգարխիկ կլաններին, որոնք, փաստորեն, զավթել էին պետության իշխանական գործառույթները, գոյացնի պետության կայունությունն ապահովող մեծ պաշարներ, վերջ դնի ահաբեկչությանը, վերականգնի բանակի հզորությունը, բարձրացնի Ռուսաստանի հեղինակությունը միջազգային հարաբերություններում որպես երկրի, որի հետ չեն կարող հաշվի չնստել:

Վ. Պուտինը շատ ավելի իրատեսորեն է ընկալում ժողովրդի բողոքներն ու դրանցից բխող հնարավոր հետևանքները, Ռուսաստանի առջև ծառացած կենսական խնդիրները և առաջարկում է դրանց լուծման ուղիները: Ընդդիմությունը չկարողացավ համարժեքորեն ընկալել և արտահայտել բնակչության պահանջները, առավել ևս չառաջադրեց դրանք հաղթահարելու իրատեսական ծրագրեր, չգլխավորեց երբեմն-երբեմն թափ հավաքող ժողովրդական բողոքի շարժումը: Ինչ վերաբերում է նեոլիբերալիստական ընդդիմությանը, ապա ընտրողները լավ գիտեն, որ նրանց պայքարը ոչ թե ժողովրդի և պետության շահերի համար է, այլ Պուտինի անձի դեմ է և ֆինանսավորվում է արևմտյան հայտնի կենտրոններից: Մարդիկ նաև տեսնում են, որ ՌԴ այսօրվա քաղաքական դաշտում չկա որևէ այլ գործիչ, որն ընդունակ կլինի լրջորեն մրցակցելու Վ. Պուտինի հետ: Ինչպես նշում են ռուսաստանցի դիտորդները, ռուսաստանյան քաղաքական դաշտում տիրող վիճակը տխուր է. իշխող կուսակցության լճացումը (իզուր չէ, որ Վ. Պուտինը չցանկացավ առաջադրվել այդ կուսակցության կողմից, այլ ինքնաառաջադրվեց), կոմկուսի անզորությունը, Ժիրինովսկու կուսակցության անփառունակ ընթացքը դեպի

Գորբաչով և Ելցին

իր վախճանը, աջերին հատուկ այլախոհական սահմանափակությունը, նոր ծրագրերով ու թարմ գաղափարներով օժտված քաղաքական գործիչների պակասը վստահություն չեն ներշնչում ժողովրդին: Ձավեշտալի է, բայց երբ Պուտինը քննադատում է սեփական կառավարությանը, չինովնիկներին թվում է՝ նա իր վրա է վերցրել նաև ընդդիմության գործառույթները: Դա լավ օրից չէ: Չնայած վերը նշված նվաճումներին՝ քիչ չեն, եթե չասենք՝ ավելի շատ են չլուծված սոցիալ-տնտեսական խնդիրները: Ռուսաստանի հասարակությունը փոփոխություններ է պահանջում, և դա շատ լավ գիտակցում է Վ. Պուտինը: Ետ թողնելով ընդդիմությանը՝ նա առաջինն է նշում համակարգային փոփոխությունների անհրաժեշտության մասին, հունավորում է դրանց իրականացման ընթացքը և երկրի հետագա զարգացումը տեսնում է հավակնոտ ազգային ծրագրերի իրագործման մեջ: Դրանք իրականացնելու համար անհրաժեշտ է ապահովել պետական կառավարման, կառավարության և իշխանության բոլոր օղակների աշխատանքի նոր որակ: Այս նպատակով Պուտինը ստեղծել է կադրերի պատրաստման ու դրանց ընտրության նոր մեխանիզմներ, կադրային ռեզերվ և պատրաստվում է հիմնովին փոխելու պետական ծառայողների կազմը:

ՌԴ նախագահի նախաձեռնած սահմանադրական փոփոխությունները իրավական հիմք պետք է ապահովեն նման մասշտաբային միջոցառումների իրականացման և երկրի հետագա հարաճուն զարգացման համար, սկիզբ դնեն զարգացման նոր՝ վճռական փուլի: Նրա ելույթներից ակնհայտ է դառնում, որ անցած 20 տարիները նա դիտում է որպես այդ փուլի նախապատրաստման ժամանակաշրջան: Նշենք նաև, որ պուտինյան ազգային ծրագրերը և դրանց իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները կրում են համակարգային բնույթ, ընդգրկում են պետության և հասարակության կյանքի բոլոր ոլորտները:

Հիրավի հավակնոտ ծրագիր է, բայց և իրատեսական: Սակայն որոշ քաղաքական գործիչներ հարցականի տակ են դնում դրա իրականացումը: Ըստ նրանց, չնայած բնական ու մարդկային մեծ ներուժին, ռազմական հզորությանը, ՌԴ-ն չի կարողանա դիմակայել թե՛ Արևմուտքի, թե՛ Չինաստանի հետ մրցակցությանը: Իսկ որոշ քաղաքագետներ կանխատեսում են, որ, չդիմանալով կոշտ մրցակցությանը, պուտինյան Ռուսաստանը, ինչպես ԽՍՀՄ-ը, չնայած իր հզոր ռազմական ուժին, կփլուզվի ներքին հակասություններից: Հետաքրքիր է, թե որքան ժամանակ անց:

Ինչևէ, Վ. Պուտինը 2020 թ. համարում է սահմանային, իսկ գալիք՝ գլոբալ փոփոխությունների երրորդ տասնամյակը՝ վճռորոշ: Ուստի Ռուսաստանը պետք է պատրաստ ու կարող լինի մրցակցելու նոր աշխարհակարգի, նոր ուժային կենտրոնների և միջազգային հարաբերությունների ձևավորման գործընթացում և ապահովի իր տեղն ու դերը այդ նոր գլոբալ համակարգում, որտեղ նրա հետ պետք է հաշվի նստեն որպես հավասարի:

Այո՛, Վ. Պուտինի ծրագրերը հավակնոտ են: Հավակնոտ են նաև մեր հարևան Թուրքիայի նախագահ Էրդողանի նեոօսմանական ծրագրերը:

Իրադարձությունները տարածաշրջանում զարգանում են շատ արագ, անկանխատեսելի են և անկառավարելի: Կոնֆլիկտներն այստեղ կարող են սրընթաց վերաճել բախումների: Այդպիսի զարգացումներից ապահովագրված չէ նաև Հայաստանը: Եվ թե ինչ հետևանքներ կունենան դրանք մեզ համար, մեծապես կախված է այդ երկու ուժային կենտրոնների՝ Ռուսաստանի և Թուրքիայի ռազմաքաղաքական ու դիվանագիտական կարողությունների հարաբերակցությունից:

Ինչպես և 100 տարի առաջ, Հայաստանը գտնվում է այս պետությունների աշխարհաքաղաքական շահերի դաշտում, որտեղ ճիշտ կողմնորոշվելու համար անհրաժեշտ է հմտորեն հետապնդել սեփական շահերը, վարել ճկուն ու հաշվենկատ քաղաքականություն:

Պուտին և Ելցին

Հայացք 30 տարի անց (մաս 1)

Հրայր Կարապետյան
ՀՀ արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար, մանկավարժական գիտությունների թեկնածու

Շատ կարևոր է արձանագրել, թե ՀՅԴ-ն ինչ քաղաքական ու նաև աշխարհաքաղաքական պայմաններում որոշեց կազմակերպորեն ներկայանալ Հայաստանում:

1988-1990 թթ. Ադրբեջանի տարածքում գտնվող Գարդմանաց աշխարհի 40-ից ավելի հայկական համայնքներ բռնի հայաթափվեցին ու տեղահանվեցին իրենց պատմական բնակավայրերից: Շամխորի, Դաշքեսանի, Գանձակի շրջաններից (որոնց թվում է, օրինակ, հայտնի Չարդախլուն, որը հայտնի է որպես երկու խորհրդային մարշալներ ծնած գյուղ) տեղահանվածների մեջ կային վիրավորներ ու խոշտանգվածներ: Մարդիկ հաճախ կարողացել էին փրկվել՝ թողնելով իրենց ամբողջ ունեցվածքը: Նշված 40-ից ավելի հայկական գյուղերն ազերիների կողմից ենթարկվել էին թալանի ու կողոպուտի, ոչնչացվել էին ու ավերվել հարյուրավոր հայկական բազմադարյան եկեղեցիներ ու մշակույթի արժեքներ: Արցախի Ասկերանի շրջանում ժողովուրդը ետ էր մղել Աղդամի կողմից ազերի բազմահազարանոց խուժանի հարձակումը, դարանակալ հարձակումներ էին տեղի ունենում ճանապարհներին ու բնակավայրերի մատույցներում: Հայաստանի բազմաթիվ շրջաններում՝ Սյունիքում և այլուր, ադրբեջանաբնակ գյուղերից պարբերաբար ոտնձգությունների էին ենթարկվում մոտակա հայկական գյուղերը: Հյուսիսային Արցախում ետ էին մղվել Գետաշենից հյուսիս գտնվող հայկական Կամո, Ազատ գյուղերի վրա ազերի ՕՄՕՆի հարձակումները: Սումգայիթում, Բաքվում և Գանձակում հազարավոր հայեր ենթարկվել էին ցեղասպանության, ողջ մնացածները բռնել էին գաղթի ճանապարհը: Լեռնային Ղարաբաղի և նրա ողջ բնակչության ճակատագիրը հարցականի տակ էր: Մի խոսքով՝ նորից ծառացել էր հայ ժողովրդի գոյատևման համար ինքնապաշտպանության խնդիրը, որին ՀՅԴ-ն բնականաբար պետք է արձագանքեր: Իր արդեն 100-ամյա գործունեության ընթացքում ՀՅԴ-ն, իր գործելակերպին հավատարիմ, միշտ այնտեղ էր, որտեղ կար սպառնալիք հայի գոյությանը: ՀՅԴ վերջին Ընդհանուր ժողովում արդեն որդեգրվել էր «Դեպի Երկիր» կարգախոսը. մնում էր գտնել վերջինիս կենսագործման կազմակերպական ձևերն ու ուղիները:

70-ից ավելի տարիների ընթացքում կուսակցության բացակայության պայմաններում Հայաստանում տարբեր առիթներով և ձևերով միշտ էլ առաջ են եկել ազգային խնդիրների շուրջ ժողովրդական պոռթկումներ (ինչպես 1960-ական թվականներին): Ներշնչված գաղտնի ձևերով բերված դաշնակցական գրականությամբ՝ մերթ ընդ մերթ Հայաստանում գաղտնաբար գործել են կազմակերպություններ, որոնք՝ դաժանորեն ճնշվել, իսկ նրանց անդամները կամ սպանվել, կամ աքսորվել են: Ազգային գաղափարների ու մտածելակերպի սերմանման ու պահպանման

համար մեծ դերակատարություն են ունեցել այնպիսի ստեղծագործողներ ինչպիսիք են Ռաֆֆին, Ա. Իսահակյանը, Հ. Շիրազը, Պ. Սևակը, Կոմիտասը, Մինաս Ավետիսյանը և ուրիշներ:

1980-ականների վերջին Հայաստանում գաղտնի կամ կիսագաղտնի պայմաններում գործում էին մի շարք կազմակերպություններ, որոնք բոլորն էլ ներշնչված էին Դաշնակցության դավանած գաղափարներով: Դրանցից էին «Հայ դատը» (Անդրանիկ Մարգարյան, Հովիկ Վասիլյան և ուրիշներ), «Զանգակատուն» միավորումը (Ռուբիկ Ավետիսյան, Լևոն Թադևոսյան և ուրիշներ), «Միացում» կազմակերպությունը, Ազգային միացյալ կուսակցության հիմքի վրա Պարույր Հայրիկյանի՝ բանտից դուրս գալուց հետո ստեղծված «Ազգային ինքնորոշում» միավորումը: Այդ կազմակերպությունների մի մասը ուղղակիորեն ձևավորվել էր կամ հայտնվել Դաշնակցության ազդեցության շրջագծում՝ դառնալով բուն Դաշնակցության ապագա կառույցի նախահիմքը: Վերջիններիս թվում էին «Հայաստանի ազգային անկախություն» կուսակցությունը (Ռոլանդ Շառոյան, Արտաշես Շահբազյան, Շոթա Քերոբյան և ուրիշներ), «Ազատ Հայք»-ը (Հայկազուն Ալվրցյան, Գարեգին Մխիթարյան, Հարություն Հարությունյան և ուրիշներ), ինչպես նաև «Հայ ուսանողների դաշինքը» (Բագրատ Եսայան և ուրիշներ), և այլն: Այդ կազմակերպությունների մեծ մասը տպագրում էր պարբերականներ՝ ինքնահրատարակության սկզբունքով, որոնք, չնայած Անվտանգության կոմիտեի (ՊԱԿ) ռեպրեսիվ ջանքերին, լայն տարածում էին գտել ժողովրդի մեջ: Հատկապես Արցախյան խնդրի ակտիվացման և բնապահպանական հիմնախնդիրների արծարծման ֆոնին այդ կազմակերպությունները գնալով ստվարանում էին ու ակտիվանում: Այդ կազմակերպությունների հարյուրավոր անդամներ հետագայում անդամագրվեցին ՀՅԴ-ին և իրենց դերակատարությունն ունեցան պայքարի տարբեր ճակատներում: Օրինակ՝ «Զանգակատուն» միավորումը 1987 թ. միաձուլվեց Իգոր Մուրադյանի ղեկավարած

Հրայր Մարուխյան

«Միացում» կազմակերպությանը, որի անդամների մեծ մասը հետագայում դարձավ դաշնակցական: «Զանգակատուն» հանդեսը շարունակեց հրատարակվել որպես «Միացում» ամսաթերթ: «Հայաստանի ազգային անկախություն» կուսակցությունը հրատարակում էր «Հայաստան» պաշտոնաթերթը: Այդ և մի շարք այլ կազմակերպություններ հիմնականում զբաղված էին Հայաստանի և Արցախի վերամիավորման համար ստորագրահավաքներ կազմակերպելով և թռուցիկներ ու քարոզչական բնույթի այլ նյութեր տարածելով:

Արցախյան շարժման սկզբնավորման ու ծավալման գործում պետք է ընդգծել Իգոր Մուրադյանի բացառիկ դերը: Լինելով «Ղարաբաղ» կոմիտեի առաջին առաջնորդը՝ նա անվերապահորեն էր ընդունում ՀՅԴ-ին և համոզված էր, որ Արցախի հարցի լուծման գործում հիմնական դերակատարը հենց նա է լինելու: Այդ համոզմունքը շատ շատերի համար այն ժամանակ եղավ կողմնորոշիչ ու ուղղորդողը դեպի ՀՅԴ-ն:

1980-ականների վերջերին Դաշնակցության կազմակերպական ներկայությունը Հայաստանում նախապատրաստելու համար հայրենիք էր ժամանել ՀՅԴ գործիչների մի ամբողջ համաստեղություն՝ Իրանից, Լիբանանից, Հունաստանից, Կանադայից և այլ երկրներից: Փորձառու, պայքարում կոփված մարդիկ, որոնց թվում էին Խաժակ Տեր-Գրիգորյանը, Հրանտ Մարգարյանը, Կիրո Մանոյանը, Վարանդ Փափազյանը, Արա Դեմիճյանը... Նրանք իրենց հետ բերել էին և ձեռքից ձեռք էին փոխանցում մեծ քանակությամբ ազգային դաշնակցական գրականություն, որի պակասը կար, և այն մեծ արագությամբ յուրացվում էր: Այդ ընկերների հետ յուրաքանչյուր շփումը, նրանց հետ զրույցները «նորաթուխների» համար, հիրավի, իսկական կուսակցական դպրոց էին:

Հայրենիքում Դաշնակցության «վերընձյուղման» գործում (ինչպես ինքն էր անվանում) անգնահատելի ու բացառիկ դեր ունի ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հրայր Մարուխյանը: Նրա ոգևորիչ և միևնույն ժամանակ անմիջական ու խորաթափանց խոսքը շատերի համար եղավ կյանքի կողմնորոշիչ ու պայքարի ոգեկոչող ճառագայթ: Բարդ և դժվարին ճանապարհ էր ենթադրում կազմակերպության «վերընձյուղումը» Հայաստանում: Բնական է, որ նախ շարքերը պետք է համալրեին նրանք, ովքեր Հայաստանում արդեն գործող վերոնշյալ կազմակերպություններում, որպես հասարակական գետնի վրա հանդես եկող գործիչներ, դրսևորել էին իրենց, քիչ թե շատ հաղորդակից էին ազգային գաղափարաբանությանը և ունեին պայքարի որոշակի փորձ: Քիչ չէին նաև հայտնի մտավորականների անդամագրումները ՀՅԴ-ին, ինչպիսիք էին, օրինակ, Ռուբեն Հովսեփյանը, Սոս Սարգսյանը, Ալվարդ Պետրոսյանը, Լորենց Առուշանյանը, Ռազմիկ Դավոյանը, Սեյրան Խաթլամաջյանը, Սարգիս Մուրադյանը և այլք:

Հետաքրքիր էր նաև նախկին «այլախոհների դիրքորոշումը» այդ օրերին: Նրանցից ոմանց թվում էր, թե խորհրդային տարիների իրենց պայքարը և բանտերում ու աքսորավայրերում կրած զրկանքները հաշվի առնելով՝ Հայաստանում ՀՅԴ ղեկավարումն անվերապահորեն կվստահվի իրենց: Չնայած որ նրանց այլախոհական պայքարը կրում էր ՀՅԴ-ի և Հայ դատի անուղղակի ազդեցությունը, նրանք չէին ընկալում Դաշնակցության կանոնակարգային և կարգապահական սկզբունքները, մասնավորապես՝ Դաշնակցության՝ ոչ թե անձի և անհատի, այլ հավաքական գործունեության ու պատասխանատվության սկզբունքը: Շատ այլախոհներ (Պարույր Հայրիկյան, Աշոտ Նավասարդյան, Անդրանիկ Մարգարյան, և այլք) ստեղծեցին իրենց կազմակերպություններն ու կուսակցությունները, որոնց ծրագրերում այս կամ այն կերպ տեղ էին գտել ՀՅԴ ծրագրային սկզբունքները: Եղան նաև այնպիսիք, որոնք շուտ հասկացան ՀՅԴ էությունը և, անդամագրվելով նրան, մինչև վերջ անմնացորդ նվիրվեցին նրա պայքարին (Արցախ Բունիաթյան, Հակոբջան Թադևոսյան և այլք): Անդամագրվածների թվում քիչ չէին նաև մտավորական տարբեր խավերից ներկայացուցիչները՝ դասախոսներ, ուսուցիչներ, բժիշկներ, որոնց շրջանում հատուկ ակտիվություն էր նկատվում: Հայտնի բժիշկ Մելս Պետրոսյանն իր հետ բերեց համակարգի բազմաթիվ ներկայացուցիչների, որոնց ուժերով ՀՅԴ-ին կից գործում էր «Մխիթար Հերացի» բժշկական հիմնադրամը: Արցախյան շարժման ծավալմանը համընթաց մեծացավ հատկապես ուսանողների ու երիտասարդների հոսքը դեպի ՀՅԴ: Հետագայում նրանցից շատերը (Թաթուլ Կրպեյան, Վարդան Բախշյան, Վարդան Դուշման, Արթուր Ղարիբյան, Արթուր Կարապետյան, Պետրոս Ղևոնդյան, Կարոտ և մյուս հերոսները) շարունակողները եղան Դաշնակցության հերոսական ավանդույթների ու ինքնանվիրումի:



Հայաստանում կազմակերպական ներկայության մասին պաշտոնական հայտարարությունից հետո, երբ քաղաքական դիվանը ներկայացնում էին Ռուբեն Հովսեփյանը և տողերիս հեղինակը, սկսվեցին ժողովրդային հանդիպումները գյուղերում ու քաղաքներում՝ ամենուրեք, որոնց շնորհիվ Դաշնակցության շարքերը շրջաններում ևս արագորեն ստվարացան: Սակայն, ինչպես նշում էր Հրայր Մարուխյանը, ՀՅԴ-ն երբեք չպետք է ձգտի դառնալու զանգվածային կուսակցություն, նրա անդամների թիվը չպետք է անցնի հայության մեկ տոկոսը, որովհետև դաշնակցականները գաղափարական ու նվիրյալ, հաճախ զոհաբերությունների պատրաստ կուսակցականներ են, և այդ զոհողությունը պետք է լինի հանուն համայն հայության: Գիտակցվում էր, որ կուսակցությունների ուժը ոչ թե ծավալուն անվանացանկերով է որոշվում, այլ նրանց համակրողների բանակով: Այստեղից էլ ծնվել էր մի կարգախոս՝ «Մեր ուժը մեր համակիրների մեջ է»:

ՀՅԴ կազմակերպական կառույցի կազմավորման գործընթացն ընթանում էր մեծ լայնախոհության պայմաններում:

Դրսևորվում էր նաև մի ծայրահեղություն, երբ արդեն իսկ երդվյալ անդամները, որոնք, ընդգրկված լինելով այս կամ այն մարմնում (այն ժամանակ մի քանի իրարից անկախ կոմիտեներ էին ձևավորվել), ՀՅԴ կազմակերպության ապակենտրոնացման համաձայն, իրենք պիտի որոշեին նոր դիմումների ճակատագիրը, ավելի հաճախ մերժում էին դրանք՝ չափից ավելի մանրակրկիտ ու խիստ մոտեցումներ դրսևորելով, ինչի հետևանքով բազմաթիվ (կարծում եմ՝ նաև արժանավոր) դիմումնագրեր չհաստատվեցին ՀՅԴ-ի կողմից:

Մոտավոր վիճակագրությամբ՝ այն ժամանակ 10 դիմումնագիր ներկայացնողներից մեկն էր միայն, որ արժանանում էր ՀՅԴ-ին անդամագրվելու պատվին:

Շատ կարճ ժամանակահատվածում ՀՅԴ կառույցները տարածվեցին Արցախով և Հայաստանով մեկ, և դա չէր կարող չանհանգստացնել թե՛ հոգեվարք ապրող կոմունիստական ռեժիմին և թե՛ ՀՀՇ-ական, փաստացի իշխանությունն արդեն յուրացրած ուժերին: Ի հայտ էին գալիս ՀՅԴ-ի և ՀՀՇ-ի գաղափարական տարաձայնությունները Արցախի խնդրում, Թուրքիայի նկատմամբ որդեգրած դիրքորոշումների և ներքին քաղաքական մի շարք կարևորագույն հարցերում, որոնք գնալով սրվում էին: Ցավոք, օրվա իշխանությունները ՀՅԴ-ի նկատմամբ որդեգրեցին նույն բոլշևիկյան դավադիր ու նենգ պայքարի ձևն ու մեթոդները, որոնք կիրառվել էին տասնամյակներ շարունակ: Նորից նենգափոխվում էր պատմությունը, նսեմացվում էին ՀՅԴ դերն ու նշանակությունը հայության պայքարի կարևորագույն փուլերում, տարածվում էին վարկաբեկիչ զրպարտանքներ ՀՅԴ-ի, նրա ղեկավարների՝ Հրայր Մարուխյանի, Հրաչ Տասնապետյանի և այլոց վերաբերյալ: Այդ ամենը մատուցվում էր արդեն ՀՀՇ-ական մենիշխանությանը ենթակա պետական քարոզչական և կեղծարար տարբեր միջոցներով (ի դեպ, այս ձեռագիրը դրսևորվում է նաև այսօր):

Օրվա իշխանությունները հասան այնտեղ, որ ստեղծեցին կեղծ կուսակցություն՝ այսպես կոչված «Հայաստանի հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը՝ կասկածելի անցյալ ունեցող մարդկանց ղեկավարությամբ: Երևանի կենտրոնում այդ կուսակցությանը հատկացվել էր մի ներկայանալի գրասենյակ, երբ ՀՅԴ գրասենյակը գտնվում էր Մյասնիկյան փողոցի 2 հասցեում գտնվող կիսանկուղային հարկում: Դաշնակցության անունից մոլորեցված շատ շատերին բաժանում էին ճոխ ձևավորված վկայականներ՝ ՀՅԴ զինանշանով, մինչդեռ ՀՅԴ-ն չուներ անդամատոմս կամ կուսակցական վկայական: Հիշում եմ՝ երբ այդ օրերին մի հրապարակային հանդիպման ժամանակ Հրայր Մարուխյանին այդ ամենի վերաբերյալ հարց տրվեց, նա զրպարտանքների մասին ասաց, որ ճիշտ կողմնորոշվելու համար խորհուրդ կտա նայելու, թե ով է ամբաստանողը, ինչ է իրենից ներկայացնում, և ով է ամբաստանվողը, որոնք են նրա արած գործերը, և ինչպիսին է նրա անցած ճանապարհը. այդ ամենից հետո պարզ կլինի ճշմարտությունը: Այդ մոտեցումն արդիական է նաև այսօր, երբ նույն ձեռագրով նորից փորձ է արվում զրպարտանքի և վարկաբեկման տարբեր եղանակներով (հաճախ կիրառելով արդի տեխնոլոգիական հնարավորությունները) ժողովրդի աչքում նսեմացնելու ՀՅԴ-ին և նրա գործիչներին: Բանը հասավ նրան, որ հետագայում, երբ, ըստ կուսակցությունների մասին ընդունված օրենքի, ՀՅԴ-ն պետք է գրանցվեր, Հայաստանում հարուցվեցին բազմաթիվ «իրավական» խոչընդոտներ (դրսից ղեկավարվելու փաստարկ և այլն), ինչի հետևանքով նախ Արդարադատության նախարարությունում գրանցեցին «ինքնակոչ Դաշնակցությանը», որը, իհարկե, հետագայում կազմաքանդվեց: Շատերը, ովքեր խաբվել էին ու միացել այդ խմբակին, հեռացան նրանից և անդամագրման համար դիմեցին իրական ՀՅԴ-ին:

1990-ականների կեսերին ՀՅԴ գոյությունը Հայաստանում կայացած փաստ էր, և այն իր ներգործուն դերակատարությամբ արժանացավ ժողովրդի մի զգալի հատվածի համակրանքին ու վստահությանը: Երկար ժամանակ հարկավոր չէր, որպեսզի գործով ապացուցվեր, որ ՀՅԴ-ն հավատարիմ է իր փառավոր անցյալին ու պատրաստ է անմնացորդ նվիրումի՝ հանուն Հայաստանի, Արցախի ու հայ ժողովրդի ազատագրական պայքարի:

Քեսապ 2020. իրավիճակը եւ մտորումներ

Կարօ Վ. Մանճիկեան
Սուրիահայութեան օգնութեան և ւ վերականգնումի Քեսապի գործադիր մարմնի ատենապետ

Քեսապ հայաւանը կը գտնուի Միջերկրական ծովուն հարևանութեամբ՝ Սուրիոյ հիւսիս-արևմուտքը՝ Թուրքիոյ կողմէ բռնագրաւուած Իսկէնտէրուն (այժմ՝ Հաթայ) նահանգին սահմանագիծին վրայ: 2014ի մարտ 21ին՝ առաւօտուն, Քեսապի բնակչութիւնը տեղահան կ'ըլլար, երբ յանկարծակիօրէն թրքական բանակի զօրանոցներու ճիշդ տակէն ու անոնց օժանդակութեամբ ահաբեկչական խումբեր՝ «Ահրար ալ Շամ» և անոնց դաշնակից խմբաւորումներ («Ճապհէթ ալ Նուսրա»ի մաս կազմող, թուրքմէն, թուրք, աֆղան, չէչէն, ազերի և այլ զինեալներ), կը ներխուժէին Քեսապ երեք կողմերէ, մինչ բնակչութիւնը (հայ ու ոչ հայ) ազատ մնացած միակ՝ չորրորդ կողմէն կը յաջողէր մազապուրծ դուրս գալ լարուած թակարդէն՝ պաշարումէն, որոնք կը միտէին պատանդ վերցնել շրջանը իր բնակչութեամբ՝ հաւանաբար քաղաքական սակարկումի մտնելով շրջանային ուժերուն հետ, ապա հայաթափել, ինչպէս որ Թուրքիան յաջողած էր Սուրիոյ՝ Թուրքիոյ հետ սահմանագիծին վրայ գտնուող հայաշատ գիւղերը դատարկել հայութենէն:

Քեսապի այս տեղահանութիւնը երրորդն էր մօտ 110 տարուայ ընթացքին: Առաջինը 1909ի Ատանայի կոտորածներուն ընթացքին էր, երբ Քեսապ շրջանի տուներ հրկիզուելէ ետք բնակչութիւնը (բացարձակապէս հայեր), 164 զոհ տալով, կը տեղահանուէր, երկրորդը՝ 1915ին, երբ Մեծ եղեռնը կուլ կու տար անոր 7000է աւելի բնակչութեան 5000ը:

Երրորդ տեղահանութենէ ետք քեսապցիք երեք ամիս (84 օր) կ'ապաստանէին Լաթաքիա, համանուն նահանգին կեդրոնական քաղաքը, 60 քմ Քեսապէն հարաւ, Լիբանան՝ Պէյրութ, և Այնճար ու Հայաստան:

Սուրիոյ ազգային բանակին կողմէ ազատագրուելէ ետք՝ 2014ի յունիս 14ին, Քեսապի բնակչութիւնը սկսաւ տուն վերադառնալ՝ գտնելու իր ընդհանրապէս կողոպտուած և երբեմն կիսաքանդ բնակարաններն ու հաստատութիւնները: Տեղահանութեան այս բռնարարքին զոհերուն թիւը, բարեբախտաբար, չ'անցաւ 6ը (որոնցմէ 2ը՝ հայորդիներ), սակայն քանդուեցաւ անոր ենթակառոյցը, որ շուտով կարելի եղաւ վերականգնել պետութեան կողմէ կամ անոր օժանդակութեամբ, իսկ կողոպտուած հաստատութիւնները (դպրոցներ, եկեղեցիներ, տնտեսական հաստատութիւններ և այլն), խոպան ու անմշակ մնացած պտղատու այգիներն ու անձնական բնակարանները վերականգնելու գործընթացը երկար ժամանակ ու մեծ ճիգ խլեց

բնակչութենէն անցնող վեց տարուան ընթացքին:

Այստեղ միջանկեալ ընդգծենք, որ ոչ միայն Քեսապի «սփիւռքէն» (մասնաւորաբար ԱՄՆ, Գանատա, Արաբական ծոցի երկիրներ և այլն), այլև համայն հայութենէն փութացած օժանդակութիւններուն միջոցաւ կարելի եղաւ կարճ ժամանակի մէջ վերականգնել Քեսապի վարժարանները, հացատուն-փուռը, ժողովրդային սառնարանը (սառնարանի բաժնետիրական ընկերութիւն) և կարգ մը եկեղեցիներ, իսկ անձնական հաստատութիւնները աւելի ուշ վերականգնեցան:

Այս միջանկեալ ընդմիջումին կը փափաքիմ կցել քեսապահայութեան երախտապարտութեան արտայայտութիւնը՝ համայն հայութեան նեցուկին ու օժանդակութեան համար, առանց որուն անկարելի պիտի ըլլար վերականգնումը իրագործուած ծաւալով ու արագութեամբ կատարել:

Կողոպտուած երկրագործական սարքերուն առնչաբար բարեսիրական կողմերէ ստացուեցան թրաքթէօրներ և այլ անհրաժեշտ գործիքներ, որոնք աննշան վարձքի մը փոխարէն, համագործակցականի կարգով ու ոգիով, փոխնիփոխ կը տրուին գիւղատնտեսութեամբ զբաղողներուն, ինչ որ այդ մարզին կապուած անհատներուն ոչ միայն մղեց կալուածները մշակելու գործին, այլև այդ մարդիկը կառչած պահեց հողին:

Յաջորդ տարիներուն կարելի եղաւ վերականգնել վաճառատուներուն և հիւրանոցներուն, ճաշարաններուն, զբօսաշրջութեան ու ամառանոցի ծառայող հաստատութիւններուն մեծ մասը:

Օդափոխութեան եկողներուն թէ մնայուն բնակչութեան խաղաղ գոյակցութիւնը յաճախ

խափանուեցաւ Քեսապէն 20 քմ հեռու գտնուող զինեալ ահաբեկիչ խմբաւորումներուն կողմէ, որոնք յաճախ հրթիռներ տեղացուցին Քեսապի վրայ, սակայն, բարեբախտաբար, առանց կարենալու զոհեր խլել, նոյնիսկ ապրելու, խաղաղ ապրելու կամքը ընկճել:

Սակայն պատերազմական պայմանները, երկրին մէջ տիրող անգործութիւնը՝ մէկ կողմէն, միւս կողմէն՝ աշխատող մարդուժի սակաւութիւնը բազմատեսակ տագնապներ առթեցին, մանաւանդ ժխտական անդրադարձ թողուցին երիտասարդութեան վրայ: Անոնցմէ մէկ մասը, կանչուած զինուորական ծառայութեան, երկարաժամկէտ մնաց (մաս մը ցարդ կը մնայ 8 և աւելի տարի) բանակին մէջ: Ուրիշներ, խուսափելով այս իրավիճակէն, դուրս եկան երկրէն: Այլ շերտ մը ապրուստը ապահովելու նպատակով, գործի փնտռտուքի համար թէ բարձրագոյն ուսման ձգտումով մեկնեցաւ երկրէն: Անշուշտ, այս երևոյթը յատուկ չէ միայն Քեսապին, այլ համասուրիական է: Բարեբախտաբար, Քեսապի հայ երիտասարդութեան հանգրուանները եղան Լիբանան կամ Հայաստան, իսկ ոմանք հասան հեռաւոր երկիրներ՝ Գանատա, Աւստրալիա: Երիտասարդութեան վերոյիշեալ կացութիւնը իր հետքը թողուց ընկերային վիճակի վրայ: Սակաւ դարձան պսակներն ու ամուսնութիւնները՝ խախտելով ընտանիքներ կազմելու բնականոն ընթացքը, ինչ որ իր ժխտական անդրադարձը թողուց Քեսապի հայկական վարժարաններուն թուական պատկերին վրայ: Տասնեակ մը ընտանիքներ լքեցին Քեսապը, որոնց մէկ մասը հասաւ Գանատա, իսկ միւսը՝ Աւստրալիա:

Նախքան 2014ի տեղահանութիւնը Քեսապ հաստատուած էին մի քանի տասնեակ ընտանիքներ՝ գալով մասնաւորաբար մօտակայ Եագուպիէ շրջանէն (Քեսապէն մօտ 100 քմ հեռու՝ Իտլիպ նահանգին մէջ՝ թրքական սահմանին մօտ) կամ տագնապահար Հալէպէն, բռնագրաւուած Ռաքքայէն, նոյնիսկ Տէր-Զօրէն: Անոնք ևս քեսապահայութեան հետ տեղահան եղան. եագուպիահայերուն մեծ մասը վերադարձաւ Քեսապ, իսկ միւսները, ցաւոք, անվերադարձ մեկնեցան այլուր:

Վերոյիշեալներուն Քեսապի մէջ տրուեցան բնակարաններ: Անոնց բնակարանային, կենցաղային, կրթական և այլ հարցերով կեանքի կոչուած էր Սուրիահայութեան շտապ օգնութեան և վերականգնումի Քեսապի գործադիր մարմինը, ուր ներկայացուած էին ժողովուրդին բոլոր հատուածները (միութիւններ, յարանուանութիւններ և այլն):

Քեսապի տեղահանութեան առաջին իսկ օրերէն և ցայսօր այս և նման հարցերով կը շարունակէ զբաղիլ վերոյիշեալ գործադիր մարմինը, որ միաժամանակ իրաւատէրն է իրեն յանձնուած գիւղատնտեսական սարքերուն: Մարմինը կը շարունակէ նպաստաբաժանումի առաքելութիւնը, երբ բարեսիրական կազմակերպութիւններ կը փափաքին օժանդակութիւն հասցնել ժողովուրդին:

Անշուշտ, կան նաև հայկական այլ բարեսիրական կառոյցներ, որոնք իրենց կարգին կ'աշխատին օժանդակել ժողովուրդին՝ հասնելով անոր առողջապահական կարիքներուն (բժշկական տարրալուծարան, շրջուն դարմանատուն-ինքնաշարժ և այլն), ինչպէս նաև կենցաղային այլ նպաստներ մատուցելով:

Սուրիոյ տագնապին հեղինակներէն Արևմուտքը, գլխաւորութեամբ ԱՄՆին, տնտեսական պաշարումի և շրջափակումի ենթարկած է երկիրը՝ պատճառ դառնալով, որ տնտեսական սուր տագնապ յառաջանայ, որմէ զերծ չեն Քեսապն ու քեսապցին:

Սուրիական դրամանիշ լիրան մեծ անկում արձանագրեց օտար դրամանիշներուն համեմատ՝ պատճառ դառնալով, որ սղաճ տեղի ունենայ: Շրջափակումը պատճառ դարձաւ, որ կենսական նիւթերը, վառելանիւթը և այլ անհրաժեշտութիւններ ապահովելու գործընթացը խիստ դժուարութեանց բախի: Պատերազմի տասնամեակի այս հանգրուանին Սուրիոյ տնտեսական գործակից մնացած են արևելեան գործընկերներ Ռուսիան, Չինաստանը, Պարսկաստանը և կարգ մը այլ երկիրներ, որոնք ևս ենթակայ են տնտեսական պաշարումի:

Այս իրավիճակին մէջ զանազան նիւթերու ներածումն ու արտածումը կը բախին զանազան արգելքներու: Այսպէս, գիւղատնտեսական մթերքներու շուկան մնացած է միայն տեղականը. արտածում գրեթէ չկայ, ինչ որ յանգած է գիներու անկման: Քեսապի արտադրած գիւղատնտեսական մթերքները ևս ենթակայ են նոյն ճակատագրին՝ ազդելով ժողովուրդի տնտեսական կարողականութեան վրայ:

Ասոր վրայ բարդուեցաւ 2019ի կլիմայական աղէտը, երբ գարնան կարկուտն ու սառնամանիքը փճացուցին նոր ծաղկած ծառերը, իսկ 2020ին ի յայտ եկած covid-19ի՝ քորոնայի վարակը եկաւ աւելի վատթարացնելու ժողովուրդին նիւթական վիճակը:

Այսօրուան դրութեամբ ժողովուրդը, հետևելով միջազգային թէ շրջանային քաղաքատնտեսական վերիվայրումներուն, կառչած կը մնայ լուսաւոր վաղուան երազային յոյսին: Իսկ վերջերս ԱՄՆի կողմէ «Կայսրի օրէնքի» (Caezer's Law) որդեգրումով, որ կը թէժացնէ ցարդ կիրարկուած շրջափակումը՝ սպառնալով սովի մատնել սուրիացի ժողովուրդը, հարցական կը մնայ, թէ քեսապահայութիւնը (իմա՛ նաև սուրիահայութիւնը) որքան կրնայ տոկալ և չտարուիլ նոր արտագաղթի գայթակղութեան, բան մը, որ վերջին 3-4 տարիներուն կանգ առած էր:

Տնտեսական, պատերազմական իրավիճակն ալ, անշուշտ, իր անդրադարձը թողած է ու պիտի թողու Քեսապի կրթական կեանքին վրայ: Իսկ Covid-19ի վարակը եկաւ աւելի ծանրացնելու վարժարաններուն վիճակը, երբ մանաւանդ կը սպառնայ նաև Քեսապի «սփիւռքին», որ վարժարաններուն գոյատևման գլխաւոր գրաւականն էր:

Մտահոգիչ երևոյթ է Քեսապի «սփիւռքին» մէջ գտնուող, մասնաւորաբար ԱՄՆի և Արաբական ծոցի երկիրներուն մէջ աշխատանքի մեկնած քեսապցիներուն նիւթական դժուարին կացութիւնը: Անոնք իրենց նիւթաբարոյական ներդրումով կը շարունակէին օժանդակել Քեսապի կրթամշակութային կեանքին և կառոյցներուն: Անոնք կ'օգնէին նաև իրենց հարազատներուն: Անոնց տնտեսական ու նիւթական կարողութեանց նահանջը կրնայ սպառնալ Քեսապին, եթէ այս թափով ու ուժականութեամբ շարունակուի այդ նահանջը:

Քեսապ, որ անցեալ դարուն կէսէն ի վեր սուրիահայութեան նախասիրած ամառանոցն էր,

ապա դարձած էր Սուրիոյ համայն ժողովուրդին նախասիրած վայրերէն մին, տեղի կ'ունենային Սուրիոյ հայկական միութիւններուն տարեկան ամառնային ճամբար-բանակումները: Բանակողներուն և անոնց պարագաներուն Քեսապ բարձրանալը Քեսապի հայկական դիմագիծին վրայ գոյն ու քաղցր բոյր կու տայ: Այսօր սուրիահայութեան թիւի նուազումը անպայման իր մուգ շուքը պիտի թողու այդ վառ գոյնին ու քաղցր բոյրին վրայ: Սակայն այսօր Քեսապի մէջ վերոյիշեալ կազմակերպութիւններուն այդ բանակումները վերստին կազմակերպելու կամքը նոր լիցք պիտի պարգևէ վերը նկարագրուած դժուարութիւններուն դէմ պայքարող քեսապահայութեան:

Քեսապի մէջ գործող կազմակերպութիւնները, ՀՕՄի, ՀՄԸՄի, Համազգայինի, ՀԲԸՄի և այլոց մասնաճիւղերը, երբ հանդիպին իրենց բաժնեկից միւս մասնաճիւղերուն, անպայման նոր ուժականութեամբ պիտի լիցքաւորուին:

Այս տողերու աւարտին, որպէս վերջաբան, կը փափաքիմ եզրակացնել, որ, հակառակ 10 տարուան պատերազմի թողած հետքերուն, հակառակ միջազգային թէ շրջանային վերիվայրումներուն և սպառնալիքներուն, Քեսապը՝ իբրև Կիլիկեան հայկական թագաւորութեան վերջին բեկորը, իր վերջին յոյսը, գոյատևումի յոյսը և ապաւէնը կը նկատէ միասնական հայութիւնը, համայն հայութիւնը՝ Սփիւռքի, Հայաստանի ու Արցախի մէջ:

Կ'ընդօրինակեմ ու կը կրկնեմ դաշնակցական մտաւորականին խոսքը. «Սփիւռքը Հայաստանին համար, Հայաստանը Սփիւռքին համար»:

Քեսապ կը գոյատևէ հայրենիքին և Սփիւռքի եղբայրներուն զօրակցութեամբ:

Հայեցակարգային հակասություններ կամ հայագիտության «հինգերորդ շարասյունը» (Մաս 1-ին)

Վարդան Պետրոսյան . ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ

Հանրակրթության հայագիտական բլոկին առնչվող տխրահռչակ չափորոշիչների շուրջ ծավալվող բանավեճ-քննարկումները վերջին շրջանում նոր դրսևորումներով են վերաբացահայտում որոշ գաղափարներ, որոնք այս կամ այն չափով հնչել են նաև նախկինում: Այժմ դրանք ձեռք են բերում առանձնահատուկ հնչեղություն, որովհետև ավելի պարզորոշ են դառնում դրանց աղբյուրը, շարժառիթներն ու նպատակները: Մենք նկատի ունենք, մասնավորապես, ՀՀ առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հակիրճ, բայց հայեցակարգային նշանակության խոսքում տեղ գտած որոշ մտքեր, որոնք ոչ միայն պատմագիտական, այլև, ավելին, գոյաբանական որոշակի հայեցակարգի բաղադրիչներ են, հետևաբար առանձնահատուկ կարևորություն ունեն ինչպես մեր պատմական անցյալի արժևորման, այնպես էլ ապագայի համազգային տեսլականի առումով: Դրանք են.

1) Հայոց պետականությունը 2500 տարեկան է, այսինքն՝ սկիզբ է առնում Երվանդունիների թագավորական հարստության շրջանից:

2) Արդի հայ պատմագիտությունը «հայդատական» է և ոչ մի աղերս չունի ակադեմիական, այսինքն՝ իրապես գիտական պատմագիտության հետ, որի արժեքների կրողներն էին Ն. Ադոնցը, Հ. Մանանդյանը, Ս. Երեմյանը և Գ. Սարգսյանը: Որպես այդպիսին՝ արդի հայ պատմագիտությունը նույն հարթության վրա է խորհրդային ժամանակների «գոռեհիկմատերիալիստական» պատմագիտության հետ[2]:

Նշված հարցերի շուրջ արդեն իսկ հնչել են մի շարք ծանրակշիռ հակադարձումներ, որոնք, մեր կարծիքով, ՀՀ առաջին նախագահի կողմից բարձրաձայնված հարցադրումները շոշափել են միայն պատմագիտական տեսանկյունից, այնինչ, ինչպես նշեցինք, դրանք ունեն նաև այլ հայեցակերպեր, որոնց վերաբերյալ գրեթե ոչինչ չի ասվել: Ուստի ավելորդ չենք համարում մեր տեսակետի շարադրումը վերոհիշյալ հարցադրումների կապակցությամբ:

Ըստ առաջին նախագահի՝ խորհրդային պատմագիտությունը «գոռեհիկմատերիալիստական» էր: Թեպետև խորհրդային ողջ պատամագիտությանը տրվող այդպիսի կտրուկ գնահատականի հետ դժվար է համաձայնվել, բայց նրանում կա ճշմարտության բաժին, ուստի հակադրվելն անիմաստ ենք համարում: Սակայն պիտի նկատի ունենալ, որ խորհրդային (այդ թվում՝ խորհրդահայ) պատմագիտությունը հայ ժողովրդի և հայկական պետականության կազմավորման ժամանակի հարցերում պաշտպանել է նույն տեսակետը, որն ընդունում է նաև ՀՀ առաջին նախագահը: Ինչպես որ վերջինս է հայկական պետականությանը վերագրում 2500-ամյա կենսագրություն՝ նրա կազմից դուրս թողնելով ոչ միայն մ.թ.ա. 3-րդ հազարամյակում Հայկական լեռնաշխարհում ձևավորված հնագույն հայկական պետությունը՝ Արատտան, նրան հաջորդած համեմատաբար փոքր տարբեր պետական կազմավորումները (Գուտի, Հայասա-Ազզի, Արմե-Շուպրիա), այլև Արարատյան (Վանի/Բիայնայի) թագավորությունը կամ Ուրարտուն, այդպես էլ վարվում էր նաև «գոռեհիկմատերիալիստական» հորջորջված խորհրդային պատմագիտությունը, այդ թվում՝ այն, հիրավի, վաստակաշատ պատմաբանները, որոնց մասին հիշատակում է առաջին նախագահը: Այդ ցանկից մենք, այնուամենայնիվ, բացառություն կանենք Ն. Ադոնցի և Հ. Մանանդյանի համար, որոնցից հատկապես առաջինի գիտական կենսագրությունը որևէ կերպ չի առնչվում խորհրդային պատմագիտությանը: Ուստի այն կաշկանդումները, որ հայտնի պատճառներով ունեին խորհրդահայ պատմագիտության ներկայացուցիչները, չունեին Ն. Ադոնցն ու Հ. Մանանդյանը:

Գիտական յուրաքանչյուր դրույթ զգալի չափով իր ժամանակի ծնունդն է, եթե նույնիսկ իր ժամանակից առաջ է անցնում և նոր հուն է բացում գիտության տվյալ բնագավառում: Ասվածը վերաբերում է հատկապես հումանիտար գիտություններին, այդ թվում՝ պատմագիտությանը: Ըստ այդմ, եթե խորհրդահայ պատմագիտությունը հայ ժողովրդի կազմավորման ավարտի և հայկական առաջին պետականության կազմավորման ժամանակի հարցերում, մի կողմից, կաշկանդված էր նախկին ԽՍՀՄ պատմագիտության մեջ ձևավորված կարծրատիպերով, որոնց հիմքում ընկած էին բազմազգ կայսրությանը բնորոշ գաղափարախոսական նկատառումներ, մյուս կողմից, սակայն, նա կրողն էր դեռևս նախախորհրդային շրջանում ձևավորված գիտական պատկերացումների՝ ի դեմս նաև ադոնցյան,

մանանդյանական, իսկ եթե ավելի հեռուն գնանք, կրեչմերյան պատմալեզվաբանության: Վերջինի համաձայն նույնպես, ինչպես և ըստ խորհրդային պատմագիտության, հայ ժողովուրդը եկվոր էր իր պատմական հայրենիքում. նա փոքրասիական տարածաշրջանում հայտնվել էր մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերին՝ «ծովի ժողովուրդների»՝ փռյուգացիների, թրակացիների, խեթերի, թերևս՝ նաև հունական առանձին ցեղախմբերի հետ միասին: Հայ ժողովրդի ծագումնաբանության այդպիսի ըմբռնման հիմքում հնդեվրոպական նախահայրենիքի տեղադրության եվրոպական վարկածն էր, որն ընդհուպ մինչև 20-րդ դարի կեսերն ընդունել է ժամանակի նշանավոր լեզվաբանների ու պատմաբանների ճնշող մեծամասնությունը, այդ թվում՝ հայագետները (Հ. Հյուբշման, Ա. Մեյե, Հ. Պեդերսըն, Հ. Աճառյան, Ն. Ադոնց, Հ. Մանանդյան և ուրիշներ): Այդ առումով բացառություն էր Գ. Ղափանցյանը, որը, լինելով Ն. Մառի դպրոցի ներկայացուցիչ, ի սկզբանե մերժողական դիրք ընդունեց պատմահամեմատական հնդեվրոպական լեզվաբանության և լեզվաբանական այդ ուղղության հետ «համագործակցող» պատմագիտության նկատմամբ (հմմտ. «… հայոց լեզուն իր գերակայող ծագումնաբանական բովանդակությամբ գտնվում է այդ ասիանիկ լեզուների խուռի-ուրարտական, խեթա-լուվիական և վրացական լեզվական խմբերի միջև … Հայերենը խիստ հագեցած է հնդեվրոպական լեզվական բաղադրիչներով, որոնք այդ լեզվին տալիս են խառն ծագումնաբանական բնույթ»)[2]: Հնդեվրոպական նախահայրենիքի եվրոպական վարկածն այսօր էլ հետևորդներ ունի հնդեվրոպաբանության մեջ: Հետևապես հայ ժողովրդի հնագույն պատմության վերաբերյալ գիտական պատկերացումները, 19-րդ դարի վերջերից սկսած, զգալի չափով ձևավորվել են հնդեվրոպական համեմատական լեզվաբանության ազդեցությամբ: Ասվածի ուղղակի հաստատումն են Ն. Ադոնցի հետևյալ տողերը. «Այնուամենայնիվ, անժխտելի է, որ էթնիկական մեծ շարժումները, սեմականներից բացի, ուղղված են եղել հյուսիսից դեպի հարավ»[3]: Ավելի որոշակի. *«Որ հայերն իսկապես եկել են Արևմուտքից,* դրա լավագույն ապացույցն է նրանց լեզուն, որը պատկանում է հնդեվրոպական լեզուների մեծ ընտանիքին և հատկապես նրա *արևմտյան կամ եվրոպական ճյուղին* (ընդգծ. իմն են՝ Վ. Պ.)»[4]: Եթե ընդգծված առաջին միտքը հնդեվրոպական նախահայրենիքի եվրոպական վարկածի ուղղակի հաստատումն է, ապա երկրորդը, որ սկիզբ է առնում թերևս Հ. Հյուբշմանից[5], վաղուց հնացած պատկերացում է, որովհետև դեռևս 20-րդ դարի սկզբներից՝ Մեյե-Պեդերսընի ժամանակներից, հայերենը դասվում է հնդեվրոպական լեզուների արևելյան՝ սատըմ խմբի մեջ, իհարկե, նկատի առնելով, որ այդպիսի խմբերի տարբերակումը բացարձակ չէ[6]: Հնդեվրոպական նախահայրենիքի տեղորոշման հարցում Ն. Ադոնցի հետ համամիտ է նաև Հ. Մանանդյանը. « … այժմյան հայերի նախահայրերը հնդեվրոպական արմենները

Նիկողայոս Ադոնց

են, որոնք Փոքր Ասիայից գաղթել են Հայաստան, հավանորեն, յոթերորդ դարում կամ վեցերորդ դարի սկզբներում մեր թվականությունից առաջ»[7]: Իսկ Փոքր Ասիայում, այդ տեսության համաձայն, հնդեվրոպական արմենների նախնիները, ինչպես արդեն նշեցինք, հայտնվել էին Եվրոպայից «ծովի ժողովուրդների» մեծ գաղթի ժամանակ:

20-րդ դարի առաջին կեսին ինչպես առհասարակ լեզվաբանության, այնպես էլ, մասնավորապես, համեմատական լեզվաբանության նոր ձեռքբերումները նախադրյալներ ստեղծեցին ավանդական հնդեվրոպաբանության մեջ ամրագրված մի շարք պատկերացումների վերանայման, այդ թվում՝ համեմատական լեզվաբանությունը «դասական» հռչակված լեզուների՝ հին հնդկերենի, հին հունարենի և լատիներենի պատանդի կարգավիճակից ազատագրելու համար, որում նա հայտնվել էր դեռևս Ֆ. Բոպի ժամանակներից՝ պատմահամեմատական լեզվաբանության ձևավորման սկզբնական փուլում: Հնդեվրոպական նախաձևերը վերականգնելիս նախկինում լուսանցքային համարված լեզուների (հայերենի, ալբաներենի, փռյուգերենի, խեթա-լուվիական, թոխարական, դարդյան/իմա՝ հնդիրանական – Վ.Պ./ լեզուների և այլն) տվյալների կարևորումը հ.-ե. նախալեզվի հնչույթային և քերականական համակարգերի ճշգրտման առումներով հանգեցրին նաև լեզուների միջև մերձավոր ցեղակցական կապերի մասին ձևավորված պատկերացումների վերանայման[8] և հ.-ե. նախահայրենիքի տեղորոշման հարցերը այլ մեկնակետերով քննելու գաղափարներին: Ամենևին չհետապնդելով հարցի քննությունը համեմատական լեզվաբանության դաշտ տեղափոխելու նպատակ, քանզի սույն հոդվածը նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար, միայն ասենք, որ ինչպես առհասարակ հնդեվրոպաբանության, այնպես էլ հայ ժողովրդի նախահայրենիքի տեղորոշման և որպես էթնիկական հանրույթ՝ կազմավորման ժամանակի առումներով, պատմագիտական, հնագիտական, մշակութաբանական և մարդաբանական նոր նվաճումների կողքին, շրջադարձային նշանակություն ունեցավ խորհրդային լեզվաբաններ Թ. Գամկրելիձեի և Վյաչ. Իվանովի հեղինակած «Հնդեվրոպական լեզուն և հնդեվրոպացիները»



Հակոբ Մանանդյան

(1984) մեծարժեք աշխատությունը, որում առաջին անգամ փորձ արվեց հայեցակարգային մոտեցումով հիմնավորել հնդեվրոպական նախահայրենիքի առաջավորասիական վարկածը[9]: Իհարկե, նրանք այդ վարկածը պաշտպանող առաջին գիտնականները չէին: Հ.-ե. նախահայրենիքի ասիական վարկածն իր տարբերակներով առաջադրվել էր դեռևս պատմահամեմատական լեզվաբանության ձևավորման փուլում՝ 19-րդ դ. առաջին կեսին: Երկրորդ անգամ նույն դարի վերջերին այդ վարկածին վերադարձավ գերմանացի լեզվաբան Ի. Շմիդտը, իսկ 20-ի առաջին կեսին՝ Զ. Ֆայստը: Իսկ Եվրոպան հնդեվրոպացիների նախահայրենիք համարող վարկածը առաջադրել է Ռ. Լեթեմը 1862 թ.[10]: Դեռևս 1967-ին լույս տեսած «Ակնարկներ հայերենի նախագրային շրջանի պատմության» գրքում հօգուտ հ.-ե. նախահայրենիքի ասիական վարկածի արտահայտվել էր նաև ակադ. Գ. Ջահուկյանը[11]: Իհարկե, հետագայում էլ, ընդհանուր առմամբ լինելով նախահայրենիքի ասիական վարկածի կողմնակից, նա ձեռնպահ մնաց այդ տեսակետը լրացուցիչ փաստարկներով հիմնավորելու փորձերից[12]:

Բնական է, որ հայոց պետականությանը 2500-ամյա կենսագրություն վերագրողները չճանաչեն նաև Արարատյան (Վանի/Բիայնայի) թագավորության կամ Ուրարտուի հայկականությունը:

Հայագիտությունը վաղուց է նկատել, որ Բեհիսթունի եռալեզու՝ էլամերեն, հին պարսկերեն, աքադերեն (ավելի ստույգ՝ ասուրաբաբելերեն) արձանագրության մեջ, որ կազմվել է մ.թ.ա. 520 թ. Աքեմենյան տերության հիմնադիր Դարեհ I-ի թելադրանքով, աքադական «Ուրաշտու/Ուրարտու» (Uraštu/Urartu)-ին հին պարսկերեն տարբերակում փոխարինում է «Արմինա/Արմինիա» (Armina/Arminia)-ն, այսինքն՝ Արմենիան: Այդպես Հայաստանն անվանել են օտարները, այդ թվում՝ պարսիկները, դեռևս հին ժամանակներից: Հետևաբար Ուրարտուն, որ Արարատի աքադական տարբերակն է, Հայաստան է, իսկ ուրարտացին էլ՝ հայ: Պիտի ուշադրություն դարձնել այն իրողությանը, որ Բեհիսթունի արձանագրության ժամանակն ընդամենը 6-7 տասնամյակով է հաջորդում ուրարտական պետության կործանմանը (590-585 թթ.), իսկ դա նշանակում է, որ մարդկանց գիտակցության մեջ դեռևս թարմ էին հիշողությունները Ուրարտուի՝ որպես տարածաշրջանի պետական կազմավորման և ուրարտացու՝ որպես այդ պետության բնակչի մասին:

Ամենևին ցանկություն չունենալով հանդես գալու խորհրդահայ պատմագիտության պաշտպանի դերում՝ այնուամենայնիվ, չենք կարող չասել, որ «զոհեհիկմատերիալիստական» որակված այդ պատամագիտության էջերում ուշադիր ընթերցելու դեպքում առնվազն 60-ական թթ. հետո կտեսնենք նաև իրական գիտության և ազգային մտածողության ոչ քիչ դրսևորումներ: Որքան էլ զարմանալի թվա, ասվածը վերաբերում է նաև Ուրարտուի և ուրարտական քաղաքակրթության մեկնաբանություններին: Հմմտ. «… հայ ժողովուրդը կազմավորվել է Հայկական լեռնաշխարհում դեռևս այն ժամանակաշրջանից, *երբ այդ տերիտորիայի վրա և նույնիսկ նրա շուրջը գոյություն չունեին հնդեվրոպական լեզուներով խոսող ցեղեր և ժողովուրդներ (1): Հայ ժողովուրդը իր ֆիզիկական կերպարանքով պատկանում էր արմենոիդ մարդաբանական տիպին, որին պատկանում էին Հայկական լեռնաշխարհի ամբողջ տերիտորիայով տարածված տեղաբնակ խուրրի-ուրարտական ցեղերը (2):* Նույնը պիտի ասել հայերի մշակութային ավանդույթների մասին: *Սակայն լեզվի խնդրում մեծ ներդրում են արել եկվոր հնդեվրոպական տարրերը (3):* Սրանց ցեղային լեզուներն են, որ Հայկական լեռնաշխարհում սկիզբ են դրել հայոց լեզվի ձևավորմանը»[13] (ընդգծ. իմն է՝ Վ.Պ.): Այս տողերի հեղինակը Ս. Տ. Երեմյանն է, իսկ դրանց համար պատասխանատվություն է ստանձնել հատորի խմբագրակազմը, այդ թվում՝ Գ. Սարգսյանը, եթե չասենք՝ նաև «բազմահատորյակի խմբագրական կոլեգիան», որի գոնե մի մասը ժամանակի հայ պատմագիտության երևելիներն էին: Մեր կողմից համարակալված (1) և (2) մտքերը, որոնցում ամրագրվում է Հայկական լեռնաշխահում հայերի բնիկ լինելու դրույթը, վերաբերում են մի հայեցակարգի (պայմանականորեն անվանենք «ազգային»), իսկ (3)-ը՝ մեկ այլ հայեցակարգի (պայմանականորեն անվանենք «ոչ ազգային»): Ըստ իս՝ առաջին երկու մտքերն արտահայտում են հեղինակների՝ հայկականի և այսպես կոչված ուրարտականի նույնական լինելու համոզումը, իսկ (3)-ը տուրք է Հայկական լեռնաշխարհում հայերի եկվորության վարկածին: Պիտի նկատի ունենալ, որ այդ հատորի ստեղծման ժամանակներում Գամկրելիձե-Իվանով տանդեմի՝ հնդեվրոպական նախահայրենիքի առաջավորասիական վարկածը նույնիսկ իր նախնական տեսքով դեռևս առաջադրված չէր: Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ խորհրդային լեզվաբանության և պատմագիտության մեջ բացարձակ տիրապետող էր նախահայրենիքի եվրոպական վարկածը: Եթե նույնիսկ Թ. Գամկրելիձե-Իվանովի վարկածը առաջադրված լիներ, մյուս տեսակետի կրողները հեշտությամբ չէին հրաժարվելու իրենց համոզումներից: Առաջիններից մեկը հ.-ե. նախահայրենիքի նրանց հայեցակարգը, որը նույնիսկ այդ տեսակետին ընդդիմացողների

գնահատմամբ ունի «համալիր» բնույթ[14], քննադատեց Ի. Դյակոնովը[15]:

«Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի 1-ին հատորի հեղինակները, մեր կարծիքով, տվյալ դեպքում գնացել են **անհաշտելիները միմյանց հետ հաշտեցնելու և, ըստ էության, կիսաճշմարտություն ասելու ճանապարհով,** որը հավանաբար միակ հնարավորն էր իրենց ժամանակներում: Պարզապես դոնքիշոտություն կլիներ բացահայտորեն դեմ գնալ պաշտոնականի կարգավիճակի բարձրացված տեսակետին, ըստ որի՝ **Ուրարտուն հայկական պետություն չէր և ուրարտացին հայ չէր,** ու պաշտպանել մի հայեցակետ, որը ապացուցելու ամենից մեծ դժվարությունը «ուրարտական» կոչված արձանագրությունների լեզվի բնույթի հարցն էր: Մանավանդ, երբ դեռևս չկային նաև օտար հեղինակավոր մասնագետների՝ ի նպաստ հ.-ե. նախահայրենիքի առաջավորասիական վարկածի արտահայտված կարծիքներ: Ուստի ոչ պատահականորեն այնպիսի մեծ գիտնական, որպիսին է Գ. Ղափանցյանը, որը հետևողականորեն պաշտպանել է իրենց պատմական հայրենիքում հայերի բնիկ լինելու վարկածը և իր ժամանակի ճանաչված ուրարտագետներից էր, Ուրարտուի էթնիկ նկարագրի, ավելի ստույգ՝ ուրարտացու ծագումնաբանության և ուրարտերենի՝ հայերենի հետ առնչությունների հարցերում նույնպես մնում է ընդհանուր տարածում ունեցող ըմբռնման շրջանակներում[16]:

Վերոշարադրյալից բխում են հետևյալ տրամաբանական հարցադրումները. 1) եթե հայերը հնդեվրոպացիներ են (առնվազն հայոց լեզվի հնդեվրոպական բնույթը այդ մասին է վկայում), իսկ հնդեվրոպացի հայերը ինչ-որ ժամանակ (ընդունված կարծիքի համաձայն՝ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերին) փոքրասիական տարածք են ներթափանցել Եվրոպայից, ապա նրանք միաժամանակ չեն կարող բնիկ լինել Հայկական լեռնաշխարհում, 2) եթե, այնուամենայնիվ, հայերի բնօրրանը Հայկական լեռնաշխարհն է և նրանք խուռի-ուրարտական ցեղերի հետ պատկանում են մարդաբանական նույն՝ արմենոիդ տիպին, ապա եկվորության հնդեվրոպաբանական տեսության համաձայն նրանք չեն կարող հնդեվրոպացի



Արգիշտի առաջինի սեպագիր արձանագրությունը Էրեբունի-Երևանի հիմնադրման մասին. Ք.ա. 8-րդ դար

լինել, որովհետև «պաշտոնական» վարկածը ուրարտացիներին չի համարում հնդեվրոպական ժողովուրդ: Այսինքն՝ ուրարտացիները հայեր չէին, այլ բոլորվին ուրիշ ծագման ժողովուրդ: Ակնհայտ է, որ նշված երկու պատկերացումները անհամատեղելի են, որովհետև դրանք վերաբերում են տարբեր հայեցակարգերի՝ «ազգային» և «ոչ ազգային»: Ինչպես նշեցինք, այդ անհամատեղելի պատկերացումները փորձել են համատեղել «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական (խորհրդային) հրատարակության 1-ին հատորի հեղինակները, որոնք առաջին նախագահի գրառման տրամաբանության համաձայն պիտի դասվեին «գոեեիկմատերիալիստական» պատմագիտության ներկայացուցիչների կարգում, սակայն նրանցից երկուսին՝ Ս. Երեմյանին և Գ. Սարգսյանին, այնուամենայնիվ, նա համարում է ակադեմիական, հետևաբար՝ իրական գիտության ներկայացուցչիներ: Վերոհիշյալ հակասությունը, սակայն, բնորոշ էր ոչ միայն խորհրդահայ պատմագիտությանը: Ըստ էության՝ այն բնորոշ էր նաև նախախորհրդային շրջանի պատմագիտությանը, այդ թվում՝ Ն. Ադոնցի և Հ. Մանանդյանի ուրարտագիտական հայացքներին, իսկ խորհրդահայ պատմագիտությունը զգալի չափով նախախորհրդայինի շարունակությունն էր: ■

Օգտագործված աղբյուրներ

1- Տես «Ilur.am» կայք, 05.08.2020 թ.:

2- Տես Капанцян Г. А., К происхождению армянского языка // նույնի՝ Историко-лингвистические работы, т. II, Ер., 1975, էջ 212-213: Հմմտ. նաև՝КапанцянГр., Хайаса-калибель армян // նույնի՝ Историко-лингвистические работы, т. I, Ер., 1956, էջ 78:

3- Տես Ադոնց Նիկողայոս, Հայաստանի պատմություն, Եր., 1972, էջ 273:

4- Նույն տեղում, էջ 366:

5- Հմմտ. «... թերևս ավելի դյուրին կլիներ հայերենը արիականից, քան եվրոպականից սահմանազատել» (Հյուբշման Հայնրիխ, Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շրջանակներում // նույնի՝ Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 2004, էջ 43-44):

6- Տես ГеоргиевВ. И., Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958, էջ 53-55:

7- Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հտ. I, Եր., 1944, էջ 7:

8- Տես Порциг В., Членение индоевропейской языковой области, М., 1964, էջ 110-117:

9- Տես Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс., Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тбилиси, 1984, էջ 865-870:

10- Տես Сафронов В. А., Проблема индоевропейской прародины, Орджоникидзе, 1983, էջ 35-47, Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 73-74:

11- Տես Джаукян Г. Б., Очерки по истории дописьменного периода армянского языка, Е., 1967,էջ 39:

12- Տես ՋահուկյանԳ. Բ., Հայոց լեզվի պատմություն ... , էջ 75-76:

13- «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, Եր., 1971 թ., էջ 190:

14- Տես СафроновВ. А., նշվ. աշխ.,էջ 46:

15- Տես Дьяконов И. М., О прародине носителей индоевропейских диалектов // ВДИ, 1980, № № 3, 4:

16- Տես Ղափանցյան Գր., Ուրարտուի պատմությունը, Եր., 1940, էջ 12-51,- նույնի՝ Հայոց լեզվի պատմություն. Հին շրջան, Եր., 1961, էջ 33-61:

Համահայկական տեսլականի տագնապը. հայ համայնքներու համաշխարհային ապակեդրոնացեալ կառոյց

Վիգէն Աբրահամեան
«Հորիզոն» թերթի անգլերէն, Ֆրանսերէն հավելվածների և «Հորիզոն գրական» հավելվածի խմբագիր:

Նախորդ յօդուածիս մէջ ըսած էի, որ մեր ձգտումը կրաւորական հայութիւն ունենալ չէ, այլ ներգործական հայութիւն, ուր հայ անհատին ներուժը՝ մտային, հոգևոր թէ ֆիզիկական, պէտք է հնարաւորութիւն ունենայ դրսևորուելու յօգուտ ընդհանրականին, հաւաքականին: Եւ դրսևորուելու համար նախ և առաջ պէտք է հայութիւնը դուրս բերել ամբոխային իրավիճակէն ու զայն դարձնել կազմակերպուած զանգուած: Այս գրութեամբ պիտի փորձեմ ուրուագծել համահայկական կազմակերպուածութեան որոշ հնարաւոր մօտեցումներ:

Պատմականօրէն հայութիւնը միշտ ալ ձևը գտած է իր կազմակերպուածութիւնը պահելու արտաքին յարափոփոխ գործօններու պայմաններուն տակ: Ուրարտուի անկումէն ետք ան պահած է իր ներքին ինքնավարութիւնը հայրենի հողին վրայ, Աքամենեան, Պարթևական թէ Սասանեան կայսրութիւններու, ապա՝ նաև Յունա-հռոմէական ու Արաբական կայսրութիւններու շրջածիրէն ներս: Ան նոյնիսկ իր ինքնավարութիւնը իր հետ տարած է Կիլիկիա, եղած է Բիւզանդական կայսրութիւնը ցնցող պաւղիկեան շարժումներու՝ կեդրոնաձիգ կայսրութեան դէմ ըմբոստութեան ակունքներուն մօտ: Հայոց պատմութեան բազմահազարամեայ էջերը մեծաթիւ վկայութիւններ ունին հայութեան ինքնավարական ձգտումներուն մասին, որոնք, որպէս կանոն, կը բխին ազատութեան տենչէն. մեր ծնունդոցն իսկ կապուած է բռնակալութեան դէմ Հայկի ըմբոստութեան հետ: Վարդանանց պատերազմը ոչ թէ անկախութեան պատերազմ էր, այլ ինքնավարութեան, որ յետոյ հաստատուեցաւ Նուարսակի դաշնագրով: Հայը միշտ ալ ըմբոստ եղած է կեդրոններուն դէմ, նոյնիսկ եթէ իր կեդրոնը ըլլար, ինչպէս էր պարագան Արշակաւանի փորձին: Տեղական ինքնավարութիւնը կենսական, կարելի է նոյնիսկ ըսել՝ ենթագիտակցական պահանջ է հայուն համար:

Արդի հայ իրականութեան ամենայաջող կազմակերպչական փորձը՝ 1860ին որդեգրուած Ազգային սահմանադրութիւնը (որուն ոգիով գրուած են Սփիւռքի «պաշտօնական», այսինքն՝ տեղական պետական իշխանութիւններէն ճանչցուած կառոյցներուն մեծ մասը), իր յաջողութիւնը կը պարտի իր շեշտուած ապակեդրոնացման:

Համահայկական կազմակերպուածութեան որևէ լուրջ փորձ չի կրնար նկատի չառնել այս հանգամանքը, եթէ իսկապէս կ'ուզէ յաջողիլ: Առանց ապակեդրոնացման՝ համահայկական որևէ նախաձեռնութիւն դատապարտուած է ձախողութեան:

Միւս հանգամանքը, որ պէտք է անպայման նկատի առնել, այն է, որ հայութեան կազմակերպուածութիւնը միշտ ալ եղած է փոքր ծաւալներով՝ տուն, գիւղ, գաւառակ... լեռնային ժողովուրդներուն յատուկ աշխարհայեացքով, որոնց համար լեռան միւս

կողմը արդէն իսկ ուրիշ աշխարհ է: Հայութեան միասնութիւնը պատմականօրէն չէ եղած կեդրոնի մը շուրջ համախմբումի ձևով, այլ միշտ եղած է միասնական մշակութային դաշտի մը վրայ գոյակցող բազմաթիւ մեծ ու փոքր կեդրոններու ձևով: Ի վերջոյ, հայուն ազգային ինքնագիտակցութիւնը, ինքզինք հայ համարելու գիտակցութիւնը, անկախ իր բնակավայրէն, չէ ծնած երկու դար առաջ, ինչպէս Արևմուտքի մէջ, երբ Ֆրանսական յեղափոխութիւնը տապալեց Ֆրանսայի թագաւորը, և մի քանի տարի ետք ան փոխարինուեցաւ ֆրանսացիներու կայսրով, այլ երկու հազարամեակ առաջ, երբ Ուրարտուի՝ Բիայնայի (իմա՝ Վանի) արքայի փոխարէն Արտաշիսեանները կոչուեցան հայոց արքաներ, և հայն է, որ իր անունը տուաւ երկրին, ոչ թէ հակառակը: Հայութեան կեդրոնախոյս ձգտումները պատմականօրէն առկայ են նոյնիսկ մեր կառոյցներէն ամենակեդրոնաձիգին՝ եկեղեցական համակարգին մէջ:

Այս երկու հանգամանքներու համատեղումէն կը բխի այն եզրակացութիւնը, որ հայութեան աշխարհասփիւռ զանգուածը կազմակերպելու, համահայկական տարողութեամբ կազմակերպ ազգ ունենալու համար լաւագոյն տարբերակը պիտի ըլլայ հայ համայնքներու համաշխարհային ապակեդրոնացեալ կառոյցի մը ձևաւորումը:

Համայնքը իբրև կազմակերպական մեկնակէտ

Մարդկային զանգուածները դասաւորելու-դասդասելու, ինչպէս դիւանակալները կը սիրեն ըսել, զանազան ձևեր կան: Ընդհանրապէս մարդկութիւնը կազմակերպուած է ընտանիքին շուրջ փոքր՝ ծնողք և զաւակներ, միջին՝ ծնողք, զաւակներ, թոռներ, կամ ընդլայնեալ, ուր կը ներառուին յարակից ճիւղեր ևս, ինչպէս, օրինակ, ծնողներէն մէկուն բազմաթիւ կողակիցները, որոնք կ'ապրին նոյն երդիքին տակ կամ նոյն քարայրին մէջ: Ընտանիքներու համախմբումը կ'ըլլայ գերդաստանը, որուն անդամները

արենակցական կարճ կապերով խմբուած են:

Գերդաստանէն վեր մարդկային կազմակերպութիւնը կրնայ շարունակել ըլլալ արենակցական, ինչ որ կը յանգի անապատային շրջաններու կամ արևադարձային անտառներու մէջ շատ տարածուած ցեղախմբային դրութիւններուն կամ կ'ըլլայ բնակավայրային, երբ կազմակերպուելիք զանգուածը համեմատաբար նստակեաց է: Հայութեան պարագային արենակցական կազմակերպուածութեան շրջանը շատոնց անցած է. նոյնիսկ անոր մէկ նորացեալ փորձը՝ յետեղեռնեան հայրենակցական միութիւններու ծաղկումը, հազիւ երկու սերունդ դիմացաւ: Մենք տեղայնական ենք, և մեր կազմակերպուածութեան ընտանիքէն վեր աստիճանները պիտի ըլլան բնակավայրային բնոյթի:

«Համակարգուած» դրոյթներու սիրահարները բնակավայրերը կ'աստիճանակարգեն՝ թաղ, գիւղ, աւան, քաղաք և այլն, երբեմն նոյնիսկ ծայրայեղութեան երթալով կը փորձեն այդ անուններուն դիմաց դնել որոշ իմաստներ, թուային սահմանումներ, տնտեսական ուղղուածութիւն, օրինակ՝ գիւղը պէտք է ըլլայ գիւղատնտեսական ուղղուածութեան. եթէ յանկարծ ան ճարտարարուեստի կեդրոն ըլլայ, աշխարհ իրար կ'անցնի: «Համայնք» յղացքը աւելի ճկուն է և չունի վերոնշեալ սահմանափակումները մարդոց մտքերուն մէջ:

Բնակավայրային դասական աստիճանակարգումները կրնան (այն ալ խիստ թէականօրէն) պիտանի ըլլալ հայրենի տարածքներուն վրայ, հազուադէպ՝ Սփիւռքի մէջ, որովհետև հայութեան մեծամասնութիւնը այսօր իր բնակավայրը կը բաժնեկցի այլ ազգերու ներկայացուցիչներուն հետ: Նորվեկիոյ հայութիւնը կը հաշուէ շուրջ 2000 հոգի, առաւելաբար կեդրոնացած մայրաքաղաք Օսլոյի մէջ, որ ունի աւելի քան կէս միլիոն բնակիչ: Այսինքն՝ Օսլոյի իւրաքանչիւր 250-300 բնակիչէն միայն մէկը հայ է: Այդ հայերը քաղաքաբնակներ են, բայց Օսլոյի հայ համայնքը միջին մեծութեամբ գիւղի մը չափ է: Սխալ պիտի ըլլար Օսլոյի հայ համայնքը համարել գիւղ, սակայն իր թուաքանակը աւան իսկ չի կրնար համարուիլ բնակավայրերու դասական սահմանումներով:

«Համայնք» յղացքի առաձգականութիւնն ու ճկունութիւնը մեզի պիտի թոյլատրեն հասարակ յայտարարի բերել հայութեան կազմակերպութիւնը իր ամենաէական՝ ամենաստորին մակարդակին վրայ: Աւելին՝ «համայնք» յղացքը արդէն իսկ կիրառական է ամէնուրեք, ներառեալ Հայաստանը: «Համայնք»ը այնքան ճկուն յղացք է, որ կրնայ նաև տրոհուիլ ու միաւորուիլ առանց շփոթանքի: Կրնանք խօսիլ Գանատայի համայնքին մասին, կրնանք նաև խօսիլ Մոնթրէալի համայնքին մասին, որ Գանատայի համայնքին մէկ մասն է, կամ Հիւսիսային Ամերիկայի հայ համայնքին մասին, որուն մաս կը կազմեն Գանատայի և Մոնթրէալի համայնքները, և ամէն մարդ անսխալ կը հասկնայ, թէ ինչի մասին է խօսքը: Նոյնպէս ոչ ոք իրար պիտի խառնէ Երևանի համայնքը, Սարի թաղի համայնքը, որ Երևանի համայնքին մէկ մասն է, և Ապարանի համայնքը, անկախ անոնց չափերէն, ծաւալէն կամ բնակչութեան հիմնական զբաղումէն:

Որպէսզի համայնքը ծառայէ որպէս մեր ուրուագծելիք կառոյցին կազմակերպական հիմնաքար, այսինքն՝ ըլլայ հիմնական համայնք, ան պէտք է լրացնէ մի քանի պայմաններ.

- Ան պէտք է ունենայ որոշակի սահմաններ, որպէսզի բացառուի նոյն տարածքին վրայ երկու համայնքի առկայութիւնը: Տարտամութիւնը մեծագոյն թշնամին է կազմակերպուածութեան:

- Ան պէտք չէ ներառէ այլ համայնքներ, այլապէս հիմնական համայնք չի կրնար համարուիլ: Գանատայի հայ համայնքը հիմնական համայնք չէ, որովհետև ան կը ներառէ Մոնթրէալի, Լաւալի, Թորոնթոյի և այլ համայնքներ:

- Ան պէտք է ունենայ անդամներու նուազագոյն քանակ մը: Նուազագոյն այդ թիւը պարզապէս գաղտնի քուէարկութիւն կայացնելու համար անհրաժեշտ նուազագոյն թիւն է, այսինքն՝ այն սահմանը, որմէ վար հնարաւոր չէ գաղտնի քուէարկութիւն ունենալ, ապահովել քուէարկութեան գաղտնիութիւնը: Օրինակ՝ փորձով գիտեմ, որ երբ քուէարկութեան մը մասնակիցներու թիւը երեք տասնեակէն պակաս է, դժուար չէ կռահել, թէ ով ինչպէս քուէարկած է, և քուէի գաղտնիութիւնը կը դառնայ շատ թէական: Հինգ-վեց ընտանիքներէ բաղկացած համայնք մը, ինչքան ալ հեռու ըլլայ այլ համայնքներէ, և բացառուի այդ ընտանիքներու անդամակցութիւնը գործօն այլ համայնքի մը, չի կրնար կազմակերպական առումով լիարժէք հիմնական համայնք համարուիլ:

- Անհատ հայ մը չի կրնար միաժամանակ երկու հիմնական համայնքներու մաս կազմել: Օրինակ՝ Նորվեկիոյ և Շուէտի սահմանին բնակող հայ մը չի կրնար թէ՛ Նորվեկիոյ, թէ՛ Շուէտի համայնքներուն անդամ ըլլալ, այլ պիտի անդամակցի կա՛մ մէկուն, կա՛մ միւսին:

- Համայնք մը պէտք է ունենայ իր ղեկավար կառոյցը՝ բաղկացած համայնքային ժողովէն և իրմէ ընտրուած ու իրեն համարատու վարչութենէն: Համայնքին անունով հանդէս գալու, ինչպէս նաև համայնքը տարբեր ատեաններու առջև ներկայացնելու իրաւունքները կը պատկանին բացառապէս անոր ժողովին և անկէ ընտրուած վարչութեան: Ոնէ անձ պէտք չէ կարենայ ներկայանալ, օրինակ, Սփիւռքի կամ հայրենիքի այս կամ այն համաժողովին և ըսել, թէ ինք կը ներկայացնէ Չինաստանի Շանկհայ քաղաքի հայ համայնքը, եթէ չունի Շանկհայի հայ համայնքի ժողովին կամ առնուազն վարչութեան կողմէ տրուած լիազօրագիր մը:

- Համայնքի ղեկավարութեան առաջնահերթ և տարրական պարտականութիւնն է... համայնքը ղեկավարել, այսինքն՝ զայն ի մի բերել, անոր հաւաքական կամքը դրսևորելու ատեաններ ձևաւորել, ժողովներ հրավիրել եւ այդ ժողովներէն բխած յանձնարարականները կատարել: Ղեկավարութիւնը պէտք է առնուազն կարենայ համայնքի մարդահամարը կատարել, անոր անդամներուն հետ կապի մէջ ըլլալ և իր պարբերական հաշուետուութիւնը կատարէ համայնքին, որպէսզի կարենայ համայնքի ժողով հրավիրել և յաւակնիլ ղեկավար յորջորջումին:

Այս տարրական կանոններուն վրայ կրնանք երկար

ծաւալիլ, ինչպէս նաև փորձել ուրուագծել անոնց կազմման, տրոհման կամ միաւորման ձևերը, բայց առայժմ բաւականանանք այսքանով:

Համայնքներու հիմքին վրայ բարձրացող ապակեդրոնացեալ շէնք մը

Հայ համայնքներու համաշխարհային ապակեդրոնացեալ կառոյց մը աւելի նման պիտի ըլլայ պետական կառոյցի մը, քան միութենական կազմակերպութեան, որովհետև անոր անդամակցութիւնը կամաւոր սկզբունքով չէ, այլ ակամայ կ'ըլլայ. մէկուն անհատական որոշումը չէ, որ ինք հայ է և ոչ թէ ուրիշ ազգի, ինչպէս որ քաղաքացի մը կամայ թէ ակամայ տուեալ երկրի քաղաքացին է: Մարդ կրնայ կազմակերպութեան մը անդամ գրանցուիլ, յաջորդ տարին միտքը փոխել և ամենայն հանգստութեամբ երթալ կողքի շէնքը և այլ կազմակերպութեան մը անդամակցիլ, սակայն ազգային պատկանելութիւնը աւելի հիմնական է, և դժուար, գրեթէ անկարելի է զայն փոխելը: Հետևաբար մեր կառոյցը պէտք է որոշ չափով պետականանման ըլլայ:

Մէկուկէս դար առաջ, երբ Ազգային սահմանադրութիւնը ներկայացուեցաւ Օսմանեան պետութեան ատեաններուն՝ առ ի հաստատում, վերջիններս անոր յօդուածները մէկ երրորդով կրճատեցին՝ առարկելով, թէ «պետութեան մէջ պետութիւն չըլլար»: Մեր համայնքային կառոյցները միշտ ալ ձգտած են ըլլալու պետականանման:

Իսկ ինչպէ՞ս կ'ըլլայ ապակեդրոն պետական կառոյցը:

Աշխարհի պետականութիւններուն մէջ հազուագիւտ են իսկապէս ապակեդրոն կառոյցները, որովհետև պատմականօրէն, իրենց կազմաւորման բերմամբ իշխանութիւնները իրենց օրինականութիւնը ընդհանրապէս ստացած են սուրի ուժով, և այդ օրինականութիւնը կը կիրառուի վերէն վար հոսքով: Բրիտանական գահի ամբողջ օրինականութիւնը կը բխի 1066ի նորմաններու ներխուժումէն, երբ Ուիլիամ Նուաճողը ամբողջ Անգլիան համարեց իր անձնական ստացուածքը և սկսաւ աւատատիրական սկզբունքներով տարածքներ յատկացնել իր մերձաւորներուն՝ ի կառավարում: Աշխարհի տարածքին բացառիկ են իսկապէս ապակեդրոն երկիրները, անոնք, որոնց պետականութեան հիմերը հաստատուած են ինքնավար համայնքներու համախոհական միաւորմամբ և պետական որոշ պարտականութիւններու բարձրացմամբ այդ համախոհութենէն բխած նոր ատեաններուն, ինչպէս, օրինակ, Զուիցերիոյ պարագան է:

Զարմանալի չէ, անշուշտ, որ հայ իրականութեան ամենաշեշտուած ապակեդրոն կառոյցի՝ Դաշնակցութեան հիմնադիրները Զուիցերիան ունէին որպէս մտապատկեր ապագայ հայկական պետականութեան և ընդհանրապէս մեր կազմակերպեալ կեանքին համար: Անոնցմէ ամենաթունդ ապակեդրոնականը Յոնանն էր (Յովհան Դաւթեան), որ ուսանած էր Զուիցերիա և մօտէն ծանօթ էր անոր դրուածքին ու Ռոստոմի հետ միասին կազմած էր Դաշնակցութեան առաջին կանոնագիրը: Ստորև ներկայացուող հատուածը Ռուբէնի յուշերէն է.

«....1909-ին, երբ Ժընևի մէջ ծանօթացայ Յովհան Դաւթեանին, ան և իր հայացած կինը՝ Հորտանս, կը տառապէին թոքախտէ: Յիշեցի Նիկոլի պատուէրը և հարցուցի Յովհանին մեր նպատակներու և կանոնագրի մասին:

— Ի՞նչ ասեմ քեզ: Մէկ խօսքով ասեմ, որ առանց ֆեդեռասիոնի ոչ մեր երկիրը և ոչ մեր ժողովուրդը կը փրկուին: Ես բան չեմ արել, միայն տեսածս եմ ըմբռնել: Մեր կանոնագիրը պատկերն է ֆեդեռասիոնի իրականացման: Եթէ աւելի ուզում ես հասկանալ, եկած ես Զուիցերիա, շուրջդ նայէ, և դու կը համոզուես: Խաժակը եկաւ և համոզուեցաւ»:

Անշուշտ, պետական թէ պետականանման որևէ ատեան պէտք է ունենայ իր պարտականութիւններն ու լիազօրութիւնները, այսինքն՝ իշխանութիւնը, առանց որոնց՝ ինք անիմաստ կը դառնայ: Շատ էական է որոշելը, թէ ինչ պիտի ընէ այդ ատեանը. բնութիւնը ձրիակերութիւն չի հանդուրժեր: Անիմաստ ատեան մը կը տևէ մինչև մասնակիցներու առաջին յօրանջը: Եթէ հիմնական համայնքը, որ պիտի կազմէ համահայկական կառոյցին հիմնաքարը, չունենայ պարտականութիւններ և լիազօրութիւններ, չունենայ իշխանութիւն, ան անիմաստ պիտի ըլլայ և շատ շուտով պիտի երթայ միանալու բարի նպատակներով ճամբայ ելած անգործնական ծրագիրներու գերեզմանոցին մէջ հանգչողներուն:

Իսկ ինչ կրնան ըլլալ այդ պարտականութիւններն ու լիազօրութիւնները: Անոնք պարզապէս կը բաղկանան տուեալ ժամանակաշրջանի ու հասարակութեան ըմբռնումներէն բխած կէտերէ: Պետական կառոյցներու պարտականութիւնները, իրաւասութիւններն ու լիազօրութիւնները յարափոփոխ են և կը ցոլացնեն իրենց հասարակութիւններու ակնկալիքները իրենց պետականութիւններէն: Օրինակ՝ մինչև 19րդ դար ոչ ոք իր պետականութենէն կ'ակնկալէր զբաղիլ երեխաներու կրթութեամբ, մինչդեռ այսօր չկայ պետութիւն մը, որ թէկուզ երևութապէս հանրակրթութեամբ չզբաղի:

Հոս է, որ երևան կու գայ ապակեդրոն կառոյցներու ամբողջ շքեղութիւնը: Լիազօրութիւններու, պարտականութիւններու և իրաւասութիւններու թուարկումը

շատ աւելի յստակ է ապակեդրոն կառոյցներու պարագային, և անոնք հակադարձ համեմատական են կառոյցի մակարդակի բարձրութեանը: Որքան բարձրանանք ապակեդրոն կառոյցներուն մէջ, այնքան աւելի կը նուազին տուեալ մակարդակին վերապահուած լիազօրութիւնները, պարտականութիւններն ու իրաւասութիւնները, և այնքան աւելի կը բիւրեղանան անոնց ծիրն ու շառաւիղը: Ամենալայն, ամենաանորոշ լիազօրութիւնները կը պատկանին ստորագոյն մակարդակին: Վերին մակարդակներու պարտականութիւններու և լիազօրութիւններու ցանկերուն վրայ երբէք չէք հանդիպիր «և այլն» կամ «և մասամբ նորին» արտահայտութիւններուն. անորոշ, չբանաձևուած իրաւասութիւնները գործ չունին այնտեղ, այլ վերապահուած են ամենաստորին մակարդակին, անոր, որ ամենամօտիկն է հաշուառուին՝ անհատին: Մինչդեռ կեդրոնաձիգ կառոյցներու լիազօրութիւնները, պարտականութիւններն ու իրաւասութիւնները կը յստակեցուին մակարդակներու շղթան ի վար. ստորագոյն մակարդակին կը գտնենք այդ իշխանութեան ընելիքներն ու չընելիքները յստակօրէն թուարկող ցանկեր, իսկ «և այլն» կամ «և մասամբ նորին» արտահայտութիւններով սահմանուած իրաւասութիւնները, լիազօրութիւնները բարձրագոյն մակարդակին են վերապահուած:

Ապակեդրոն կառոյցները շէնքեր են, որոնք կը բարձրանան վարէն վեր՝ իւրաքանչիւր յաւելեալ մակարդակին ունենալով աւելի բիւրեղացած, աւելի յստակացած, աւելի սահմանափակ ընելիքներ, մինչ կեդրոնաձիգ կառոյցները կը կազմուին վերէն վար, որոշ լիազօրութիւններու և պարտականութիւններու «շնորհումով» դէպի ստորին մակարդակներ: Ապակեդրոն կառոյցները երբէք բաց լիազօրութիւններ չեն նախատեսեր վերին մակարդակներուն, այլ միշտ կը յստակեցնեն անոնց պարտականութիւններն ու իրաւասութիւններու սահմանները: Ոչ մէկ ատեն վերին մակարդակի լիազօրութիւնները անսահման են. «բաց քարտի» (carte blanche, blank check) ըմբռնում գոյութիւն չունի ապակեդրոն կառոյցներուն մէջ:

Ապակեդրոն կառոյցներու այս յատկութիւնը կը դիւրացնէ վերին մակարդակի գործադիրներէն հաշուետուութիւն ստանալու աշխատանքը, որովհետև երբ մէկու մը ընելիքը յստակ է, շատ աւելի դիւրին է դատել անոր աշխատանքին արդիւնքը:

Հետևաբար մեր հիմնական համայնքներու ատեանները՝ ժողով և վարչութիւն, օժտուած պիտի ըլլան բոլոր լիազօրութիւններով, որոնք կրնան ունենալ այդ համայնքները իրենց տարածքներուն վրայ, ինչպէս նաև իրենց ուսերուն պիտի կրեն բոլոր պարտականութիւնները, որոնք կը կարծենք, թէ պէտք է համայնքը կրէ՝ բացի այդ լիազօրութիւններէն ու պարտականութիւններէն, որոնց շուրջ յարակից համայնքներու միջև համաձայնութիւն կայացած է, թէ աւելի նպատակայարմար է, որ տուեալ գործը կատարէ մէկ աստիճան աւելի բարձր մակարդակի ատեանը, որ կազմուած է իրե՛նց պատգամաւոր/ներկայացուցիչ/երեսփոխաններէն (անուանումը ճաշակի հարց է) կամ անոնց կողմէ ընտրուած մարմնէն:

Յստակեցնեմ, թէ ինչ կը նշանակէ «.... լիազօրութիւններ, որոնք կրնան ունենալ այդ համայնքները իրենց տարածքներուն վրայ»: Մեր համայնքները, յատկապէս հիմնական համայնքները, լուսնի վրայ չեն գտնուիր, այլ Երկիր մոլորակին, ուր ամեն տարածք կը գտնուի պետականութեան մը հսկողութեան տակ և ենթակայ է անոր կանոններուն: Բնականաբար, հայկական պետականութիւն ունեցող տարածքներուն համայնքները՝ Հայաստանի Հանրապետութիւն, Արցախ և այլն, կը գործեն բացարձակ գերիշխանութեան պայմաններով և ունին բոլոր լիազօրութիւններն ու պարտականութիւնները: Բայց, օրինակ, Սէուտական Արաբիոյ հայ համայնքը չի կրնար յաւակնիլ նոյն լիազօրութիւններուն ու պարտականութիւններուն. անոր ատեաններու իշխանութիւնը շատ աւելի սահմանափակ է: Ուստի շատ կարևոր է յստակեցնել, թէ համայնք մը ինչ սահմանափակումներով կը գործէ, որպէսզի կրնանք ճիշտ կողմնորոշուիլ, թէ վերադաս ինչ ատեաններու կրնայ ուղարկել իր լիազօրները: Որովհետև երբ խնդիր մը յանձնուած է վերադաս ատեանի մը տնօրինման, ստորադաս ատեաններէն այդ խնդրին առնչուող լիազօրութիւններն ու պարտաւորութիւնները՝ իշխանութիւնը, պէտք է ստորադասներէն փոխանցուին վերադասին, իսկ մէկը չի կրնար իր չունեցածը փոխանցել ուրիշին:

Բացարձակ գերիշխանութեամբ հիմնական համայնքներուն վրայ կրնան բարձրանալ պետականութեան բազմաթիւ շերտեր, իւրաքանչիւրը՝ իր յստակօրէն բանաձևուած իշխանութեամբ՝ իրաւասութեանց ու պարտականութեանց դաշտով: Նուազ գերիշխան համայնքներու պարագային, անշուշտ, այդ շերտերը կ'ըլլան շատ աւելի նուազ: Փաստօրէն, որքան հիմնական համայնքը զօրաւոր է, այնքան աւելի բարձր կրնայ ըլլալ իր վրայ բարձրացող շէնքի հատուածը, մինչ շէնքի մէկ այլ հատուած՝ աւելի տկար հիմերով, կը բարձրանայ այնքան, որքան այդ հիմերը կը թոյլատրեն՝ առանց շէնքի ամբողջականութիւնը խախտելու: Անկարելի է նման ճկունութիւն ունենալ կեդրոնաձիգ կառոյցով:

Վերոնշեալ համահայկական ապակեդրոն կառոյցէն առաջին օգտուողը պիտի ըլլան մեր ազատ և անկախ տարածքները՝ Հայաստանն ու Արցախը, որովհետև նման կառոյցի որդեգրումը պիտի պարտադրէ մեր երկու պետականութիւններուն հիմնական վերանորոգման՝ անցեալէն ժառանգուած կեդրոնաձիգ դրուածքները փոխարինելով ծայրայեղ ապակեդրոն կառոյցներով և քաղաքական դաշտէն վերջնականապէս արտաքսելով քայքայիչ «ո՞վ»ի բանավէճերը և զանոնք փոխարինելով հիմնարար «ի՞նչ»ի ու «ինչպէ՞ս»ի հարցադրումներով և բանավէճերով: Այդ մասին՝ աւելի ուշ:

Ղարաբաղի խնդիրը 1918-1920 թթ: Անգլիայի դիրքորոշումը և մեր դասերը

Արմեն Ասրյան
Պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ

Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտությունը և Անգլիայի՝ որպես պատերազմում հաղթանակած դաշնակից երկրների ներկայացուցիչ հաստատվելն Անդրկովկասում ոգևորությամբ ընդունվեցին հայության կողմից: Հայաստանի Հանրապետությունը և ողջ հայությունը լիահույս էին, որ արդարացի լուծում կստանան հայ ժողովրդին հուզող տարածքային խնդիրները: Այդ տարածքների թվում էր հայկական պատմական Արցախը (13-14-րդ դարերից օտարներն սկսեցին այն անվանել Ղարաբաղ, որը հետագայում դարձավ տիրապետող): Բանն այն է, որ դաշնակից երկրները պատերազմի ընթացքում բազմիցս մեծամեծ խոստումներ էին տվել հայերին, բացի այդ՝ հայ ժողովուրդն իր համեստ ներդրումն էր ունեցել գերմանա-թուրքական դաշինքի ջախջախման գործում: Սակայն հայոց հույսերը չարդարացան: Ինչպես նկատել է Հրաչիկ Սիմոնյանը, «պատերազմը շահած դաշնակիցները, ամենից առաջ Անգլիան, մտնելով Կովկաս և փոխարինելով թուրք-գերմանական զավթիչներին, ոչ միայն սատար չկանգնեցին իրենց «փոքր դաշնակցին», այլև բացահայտորեն պաշտպանության տակ վերցրին երեկվա պատերազմական հակառակորդներին, այդ թվում՝ կովկասյան թուրքերին, Ադրբեջանի հայատյաց իշխանություններին....»[1]: Այժմ Անգլիան պատրաստ էր «Թուրքիայի հետ հաստատել բարեկամական հարաբերություններ», իսկ նրա հետ առնչվող ժողովուրդներին թողնել բախտի քմահաճույքին[2]: Այդ կերպ Անգլիան ակնկալում էր Թուրքիայի ձեռքով Կովկասն անջատել Ռուսաստանից և կանխել նրա կողմից Արևելքում իր շահերին սպառնացող վտանգը: Իսկ Անգլիայի ադրբեջանամետ քաղաքականությունը ՀՀ վարչապետներից Ալ. Խատիսյանը բացատրում էր Ադրբեջանը հզորացնելու և նրա նավթն օգտագործելու ձգտումով[3]:

Անգլիական քաղաքականության վրա ազդող կարևոր գործոններից էր նաև այն, որ Անգլիան ավանդաբար Հայաստանը դիտում էր որպես Ռուսաստանի պոտենցիալ դաշնակից, իսկ նորաստեղծ Ադրբեջանը՝ ամենահուսալի պատվար Ռուսաստանի դեմ[4]: Ի դեպ, Ադրբեջանի մուսավաթական ղեկավարները, ձգտելով օգուտ քաղելու ստեղծված նոր իրավիճակից և կատարելով ճիշտ հաշվարկներ, նախ անգլիացիներին հրավիրեցին Բաքու[5] (չնայած որ Անգլիան դրա կարիքը չուներ և չէր էլ սպասում), ապա Խորհրդային Ռուսաստանի դեմ ռազմական գործողությունների համար նրանց տրամադրեցին 4500-անոց զորաջոկատ: Հետևաբար Անգլիայի համար, որի գլխավոր խնդիրներից մեկը Ռուսաստանի ազդեցության թուլացումն էր, անկախ այն բանից, թե Ռուսաստանն ինչպիսին կլիներ՝ բոլշևիկյա՞ն, թե՞ ոչ բոլշևիկյան,

Թուրքիան և Ադրբեջանը մղվում էին առաջին, իսկ Հայաստանը՝ երկրորդ պլան:

1918 թ. նոյեմբերի 17-ից, երբ անգլիական զորքերը մտան Բաքու, Անգլիան՝ հանձին Անդրկովկասում անգլիական ռազմական առաքելության ղեկավար Թոմսոնի, հայտարարեց Ադրբեջանի, այսպես կոչված, տարածքային ամբողջականությունը ճանաչելու մասին՝ դրա տակ, որքան էլ անարդարացի է, նկատի ունենալով նաև Ղարաբաղն ու Զանգեզուրը[6]: Փաստորեն, անտեսվեցին 1918 թ. հուլիսին և սեպտեմբերին գումարված Ղարաբաղի հայության 1-ին և 2-րդ համագումարների որոշումները Ղարաբաղն անկախ վարչաքաղաքական միավոր հռչակելու, Ադրբեջանի իշխանությունը մերժելու և Ղարաբաղի անկախ կառավարություն ստեղծելու մասին[7]: Ղարաբաղի հայությանը և ՀՀ-ին հույս ներշնչելով, թե տարածքային հարցերը վերջնականապես լուծվելու են Խաղաղության կոնֆերանսում, անգլիացիները նշում էին, թե մինչև այդ երկրամասը պետք է ենթարկվի Ադրբեջանի իշխանությանը:

Անգլիայի հակահայկական դիրքորոշումն առաջին անգամ, թերևս, գործնականորեն դրսևորվեց 1918 թ. նոյեմբերի 29-ին դեպի Ղարաբաղ զորավար Անդրանիկի սկսած ռազմարշավի հարցում[8]: Այն բանից հետո, երբ Ղարաբաղի հայության խնդրանքով օգնության շտապող Անդրանիկը, երկօրյա կռիվներում ջախջախելով Զանգեզուրի և Ղարաբաղի արանքում կուտակված թուրք-թաթարական ու քրդական զինված խմբերին, հասել էր Ավդալար գյուղ, որից հետո գրեթե անարգել կարող էր շարժվել Շուշի, Թոմսոնն իր պատվիրակների միջոցով զորավարից պահանջեց «ձեռնպահ մնալ որևէ թշնամական գործողություններից՝ ուղղված թուրքական և ադրբեջանական զորքերի դեմ», և նախազգուշացրեց, որ Շուշի մտնելու դեպքում զորավարն անձամբ պատասխանատու կլինի արյունահեղության համար, և իր հրահանգները չկատարելը «անպայման լրջորեն

Եղիշե Իշխանյան. 1918-1919թթ. Ղարաբաղի ժողովրդական կառավարության առաջին նախագահը

կազդի հայերի հարցի վրա, երբ այն քննարկվի Խաղաղության վեհաժողովում»[9]: Անձնական պատասխանատվությունից երբեք չխուսափած Անդրանիկը, անգլիացիների հետ չընդհարվելու և դրանով իսկ հայոց շահերը չվնասելու մտահոգությամբ, դադարեցրեց արշավանքը և վերադարձավ Զանգեզուր: Իսկ անգլիացիները, թեև խոստացել էին, ոչինչ չարեցին ադրբեջանական հարձակումները Ղարաբաղի հայկական բնակավայրերի վրա կանխելու ուղղությամբ: Ընդհակառակը՝ 1919 թ. հունվարի 15-ին Ղարաբաղի հայությանն ուղղված պաշտոնական հաղորդագրությամբ Անդրկովկասում անգլիական ռազմական առաքելությունն իր լիակատար աջակցությունը հայտնեց նույն օրն Ադրբեջանի կառավարության կողմից Ղարաբաղ-Զանգեզուրի նահանգապետ նշանակված հանցագործ, հայատյաց Խոսրով բեկ Սուլթանովին՝ Ղարաբաղի հայությունից պահանջելով ճշտորեն կատարել նրա բոլոր «օրինական հրամանները»[10]: Եվ սա՝ այն դեպքում, երբ անգլիացիները տեղյակ էին նրա՝ թուրքական գործակալ լինելու իրողությանը:

Հայաստանի կառավարությունը, որքան էլ որ նրա դրությունը ծանր էր, փորձում էր սատարել գոյամարտ մղող Ղարաբաղի հայությանը: 1919 թ. հունվարի 21-ին ՀՀ կառավարությունը Ղարաբաղը և Զանգեզուրը ճանաչեց ՀՀ անբաժան մասեր, որոնք պետք է ղեկավարվեին Զանգեզուր-Ղարաբաղի շրջանային խորհրդի և ՀՀ կառավարության կողմից նշանակված պետական կոմիսարի կողմից՝ ՀՀ օրենքներով[11]: Այս կապակցությամբ այդ ամիսներին Ղարաբաղի ժողովրդական կառավարության նախագահ Ե. Իշխանյանն իր հուշերում գրել է, որ ՀՀ կառավարությունը ցուցաբերում էր դանդաղկոտություն ու զգուշավորություն, և ավելացնում, որ ՀՀ կառավարությունը պետք է ժամանակին փորձառու մի զինվորականի Ղարաբաղում նշանակեր նահանգապետ և միայն որպես ի գիտություն հայտներ դաշնակից զորքերի հրամանատարությանը[12]: Առաջ անցնելով նշենք, որ 1919 թ. ամռանը Զանգեզուր-Ղարաբաղում ստեղծված ծանր դրության կապակցությամբ ՀՀ քաղաքականությունը Ղարաբաղի հարցում քննադատել է նաև Ղարաբաղի ժողովրդական լուսավորության վարիչներից Հակոբ Տերունին՝ նշելով, թե ՀՀ «կառավարութիւնը …. լուրջ, մտածուած ու ծրագրուած վերաբերմունք չունի Զանգեզուր-Ղարաբաղի, մանաւանդ Ղարաբաղի վերաբերեալ: Եթէ Արամը (խոսքը ՀՀ հիմնադիր Արամ Մանուկյանի մասին է - Ա. Ա.) վաղաժամ մեռած չլինէր, վստահ եղիր, այլ վերաբերմունք կը լինէր»[13]: Փոքր-ինչ առաջ անցնելով՝ պետք է ասենք, որ չի կարելի միանշանակ ընդունել ՀՀ կառավարության հասցեին ասված այս քննադատական խոսքերը: ՀՀ ցանկացած ակտիվացման դեպքում Անգլիան սպառնում էր չաջակցել Կարսում և Նախիջևանում նրա իշխանության հաստատմանը: Անառարկելի փաստ է, որ, առանց անգլիական օժանդակության, ՀՀ-ի համար չափազանց դժվար կլիներ, եթե ոչ անհնար, իր իշխանությունը հաստատել այդ երկու երկրամասերում, որոնք ևս ՀՀ-ի համար ունեին ստրատեգիական նշանակություն:

ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշումն անչափ կարևոր էր Ղարաբաղում հայերի ռազմական ոգին բարձրացնելու առումով, բայց անգլիական դիրքորոշման վրա ազդեցություն չգործեց: 1919 թ. հունվարի 28-ին ՀՀ արտգործնախարարությունը բողոքի նոտա հղեց Ադրբեջանի կառավարությանը, որը, ոգևորված Անգլիայի աջակցությունից, լկտիաբար հայտարարեց, թե այդ տարածքներն Ադրբեջանի անբաժանելի մասերն են: Ավելին՝ մեծաքանակ զորքեր կենտրոնացրեց Ղարաբաղի սահմաններին, նույնիսկ զորքեր մտցրեց Խանքենդ[14] ու Շուշի՝ այն նվաճելու համար: Ղարաբաղ էր ժամանել նույնիսկ Ադրբեջանի պաշտպանության նախարարը:

Որքան էլ որ դրությունը ծանր էր, Ղարաբաղի հայությունը տեղի չտվեց: 1919 թ. փետրվարին գումարված Ղարաբաղի հայության 4-րդ համագումարը վճռականորեն բողոքեց Ղարաբաղն իր տարածքը համարելու Ադրբեջանի մտադրության դեմ՝ հայտարարելով, որ Ղարաբաղը երբեք չի ճանաչել ու չի ճանաչում Ադրբեջանի իշխանությունն իր վրա[15]: Անհանգստացած անգլիացիները Շուշիից հեռացրին ՀՅԴ Բաքվի գործիչներին, որոնք Շուշի էին եկել համագումարի աշխատանքներին օժանդակելու համար, իսկ այդ կապակցությամբ հայերի շրջանում առաջացած հուզումները հանդարտեցնելու համար Շուշի բերեցին անգլիական բանակի 200 զինվոր: Ղարաբաղի հայության դիրքորոշումից զայրացած Շուշիի անգլիական առաքելությունը 1919 թ. փետրվարի 28-ին Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդից պահանջեց ընդունել Սուլթանովի իշխանությունը: Ազգային խորհուրդը վճռականորեն անընդունելի համարեց այդ պահանջը և առաջարկեց Ղարաբաղում ստեղծել անգլիական գեներալ-նահանգապետություն՝ համաձայն անգլիական կողմի այն հայտարարության, թե մինչև Խաղաղության կոնֆերանսը Ղարաբաղը չպետք է ենթարկվի որևէ պետության[16]: Սակայն Անգլիան անտեսեց այս առաջարկը և շարունակեց աջակցել Ադրբեջանին:

Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի դիրքորոշումից անհանգստացած ու զայրացած Թոմսոնը 1919 թ. փետրվար-մարտ ամիսներին նրա անդամներին, այդ թվում՝ նաև ղեկավարությանը, հրավիրեց Բաքու: Անշուշտ, Թոմսոնի ակնկալիքը մի կողմից այն էր, որ Բաքվում հեշտ կլիներ ճնշում գործադրել հայ ներկայացուցիչների վրա, մյուս կողմից՝ գլխատված Ղարաբաղի հայությանը հեշտ կլիներ ծնկի բերել: Հենց այդ նպատակով էլ նա Ադրբեջանին թույլատրեց նոր զորքեր տեղափոխել Ղարաբաղ (1919 թ. մարտին Խանքենդում Ադրբեջանն ուներ արդեն 2000 զինվոր, իսկ Շուշիում՝ 1000), իսկ Ղարաբաղի կառավարությանը՝ Հայոց ազգային խորհրդին, արգելեց հայկական ուժեր բերել Շուշի՝ այն անհեթեթ պատճառաբանությամբ, թե իբր դրանից լարվածությունը կմեծանար:

1919 թ. մարտի վերջին գեներալ Թոմսոնին փոխարինած Շատելվորդը Բաքվում ուղղակիորեն հայտարարեց, որ մինչև հարցի վերջնական լուծումը Ղարաբաղը պետք է ճանաչի Ադրբեջանի իշխանությունը, և Ղարաբաղում Ադրբեջանի դեմ ուղղված ցանկացած ելույթ կգնահատվի որպես Անգլիայի դեմ ուղղված քայլ, որից հետո Անգլիան ուղղակի հայերին կստիպի ենթարկվել[17]: Սակայն նույնիսկ հեռավոր Բաքվում, կարելի է ասել պատանդի կարգավիճակում գտնվող Ղարաբաղի պատվիրակները մնացին անդրդվելի՝ նշելով, որ իրենք ռազմական դիմադրություն ցույց կտան բոլորին, ովքեր կփորձեն ներխուժել Ղարաբաղ: Վրդովված Շատելվորդը պահանջեց հրավիրել Ղարաբաղի հայության նոր համագումար՝ այն հույսով, որ նրա մասնակիցների նկատմամբ անմիջական ճնշումների միջոցով կհասնի Ղարաբաղի կողմից Ադրբեջանի իշխանության ճանաչմանը: Սակայն, ի հեճուկս անգլիացիների, 1919 թ. ապրիլին գումարված Ղարաբաղի հայության 5-րդ համագումարը հայտարարեց, որ երբեք չի ընդունի Սուլթանովի իշխանությունը[18]: Ջուր էր անգլիացիներին ուղղված համագումարի տեղեկանքն Ադրբեջանի հակահայկական քաղաքականության և Թուրքիայի դաշնակիցը լինելու մասին: Անգլիացիները, որոնք հստակ գիտեին նաև, որ Ղարաբաղն ու Զանգեզուրը հայկական տարածքներ են, անդրդվելի էին իրենց նպատակադրումներում:

Անգլիան և Ադրբեջանը նաև քայլեր ձեռնարկեցին Ղարաբաղում միասնությունը խախտելու ուղղությամբ, սակայն, բարեբախտաբար, էական հաջողությունների չհասան:

Ղարաբաղում իրենց պլաններն իրագործելու մտադրությամբ՝ անգլիացիները կեղծ լուրեր տարածեցին, թե իբր ՀՀ-ն ճանաչել է Ադրբեջանի իշխանությունը Ղարաբաղի նկատմամբ, սակայն իրականությունն այլ էր: Իրականում 1919 թ. մարտի 28-ին Երևանում Թոմսոնի հետ ունեցած խորհրդակցության ժամանակ ՀՀ վարչապետ Ա. Խատիսյանը հայտնել էր, որ Ղարաբաղի հարցում Հայաստանը մնում է իր տեսակետին[19]: 1919 թ. մայիսի սկզբին Թիֆլիսում կայացած խորհրդակցության ժամանակ Ա. Խատիսյանը, մեկ անգամ ևս

Տեսարան հին Շուշիից

Ղարաբաղը համարելով ՀՀ անբաժան մասը, Թոմսոնին առաջարկեց մինչև Փարիզի խաղաղության խորհրդաժողովում հարցի լուծումը այն վերցնել անգլիական գեներալ-նահանգապետի կառավարման ներքո: Բայց Թոմսոնը մերժեց ինչպես այդ առաջարկը, այնպես էլ թաթարներին զինաթափելու պահանջը: Ավելին՝ խորհրդակցությանը մասնակցող դաշնակից երկրների ներկայացուցիչները ՀՀ կառավարությունից պահանջեցին իր ներկայացուցիչներին հետ կանչել Ղարաբաղից: ՀՀ դիրքորոշումից վրդովված Թոմսոնը հայտարարեց, որ Ղարաբաղի գործերին իր միջամտությամբ Հայաստանը կարծես թե պատերազմ է հայտարարում Անգլիային[20]:

Իրենց հեռագնա պլաններից ելնելով՝ անգլիացիները չէին ցանկանում իրենց դիմագիծն ամբողջությամբ կորցնել ՀՀ-ի ու Ղարաբաղի հայության շրջանում և պարբերաբար նշում էին, թե վիճելի հարցերը վերջնականապես լուծվելու են Խաղաղության կոնֆերանսում, բայց իրականում շարունակում էին աջակցել Ադրբեջանին: Անգլիան ոչ միայն քայլեր չձեռնարկեց 1919 թ. մայիսի վերջին Ադրբեջանի կողմից Ղարաբաղում հարյուրավոր հայերի կոտորածը կանխելու համար, այլև արգելեց Ղարաբաղի շրջաններից օգնության շտապող հայկական 4000-անոց զորագնդի մուտքը Շուշի՝ սպառնալով հակառակ պարագայում Սուլթանովին քաղաքը գրավելու իրավունք տալ: Ավելին՝ անգլիացիները Ազգային խորհրդի ղեկավարությանը հեռացրին Շուշիից՝ կեղծ խոստումներ տալով իրավիճակը կարգավորելու մասին, որից անմիջապես հետո Սուլթանովի ուժերը գրավեցին Շուշիի հայկական թաղամասերի շուրջը ստեղծված հայկական դիրքերն ու զորանոցները:

Անգլիայի և Ադրբեջանի աննախադեպ ռազմաքաղաքական ճնշման պայմաններում Վարանդայի Շոշ գյուղում գումարված Ղարաբաղի հայության 7-րդ համագումարը, երկրամասում խաղաղություն հաստատելու հույսով, 1919 թ. օգոստոսի 22-ին Ադրբեջանի ներկայացուցիչ Սուլթանովի հետ կնքեց 26 կետանոց համաձայնագիր, որով Ղարաբաղի լեռնային մասի՝ Շուշիի, Ջեբրայիլի և Ջևանշիրի գավառները ժամանակավորապես ճանաչեց Ադրբեջանի մաս[21]: Բայց, ինչպես սպասելի էր, Ադրբեջանը չբավարարվեց դրանով և նախապատրաստական քայլեր ձեռնարկեց այն ամբողջովին զավթելու համար:

Այդ օրերին Ղարաբաղից հեռացավ անգլիական

առաքելությունը, որն ամեն ինչ արել էր Ղարաբաղն Ադրբեջանին ենթարկելու համար, իսկ 1919 թ. օգոստոսի 15-ին անգլիական զորքերը սկսեցին հեռանալ Անդրկովկասից՝ մինչև հեռանալը մեկ անգամ ևս փորձելով ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանի վրա ճնշում գործադրելու միջոցով հասնել Ղարաբաղի վրա Սուլթանովի իշխանության ճանաչմանը, սակայն հաջողության չհասան[22]:

Անգլիան, որը շարունակում էր ներկայացուցիչներ պահել Անդրկովկասում, և նրա դաշնակիցները ոչինչ չարեցին նաև 1919 թ. սեպտեմբերի վերջին Ղարաբաղը, Շարուրը, Նախիջևանը հայերից դատարկելու նպատակով Ադրբեջանի ձեռնարկած լայնամասշտաբ հարձակումը կանխելու համար: Միայն հարձակումից օրեր անց՝ ՀՀ դիմումից հետո, Անգլիայի հատուկ հանձնակատար Ուորդրոպն առաջարկեց համատեղ ջանքերով դադարեցնել պատերազմական գործողությունները[23]: Այսքանով հանդերձ՝ անգլիական զորքերի հեռանալն Անդրկովկասից խոր անհանգստություն պատճառեց ՀՀ-ին: Պատճառն այն էր, որ, հետևելով «մտրակի և քաղցրաբլիթի» քաղաքականությանը, նրանք որոշակիորեն զսպում էին նաև Ադրբեջանին ու թուրքերին: Այս հանգամանքը վկայում է, որ ՀՀ դրությունը, ցավոք, ծանր էր ու խոցելի: Սա թերևս խոսում է նաև այն մասին, որ տարածաշրջանում անգլիական զորքերի գտնվելու ընթացքում ՀՀ-ն չէր կարող Ղարաբաղի հարցում դիմել կտրուկ գործողությունների և անտեսել Անգլիայի դիրքորոշումը: Ղարաբաղում ծավալված հետագա զարգացումները մեզ համոզում են դրանում:

1920 թ. փետրվարին ադրբեջանական ողջ բանակը, որն անգլիացիների տևական աջակցության շնորհիվ շոշափելի առավելություն էր ստացել Ղարաբաղում, գրեթե ամբողջությամբ կենտրոնացված էր նրա սահմաններին՝ այն վերջնականապես նվաճելու և տեղի հայությանը կոտորելու համար: Ռազմական գերակշռությունից ոգևորված Սուլթանովը 1920 թ. փետրվարի 19-ին պահանջեց Ղարաբաղը հայտարարել Ադրբեջանի մաս, ինչը փետրվարի 22-ին Շոշ գյուղում գումարված 8-րդ համագումարի կողմից մերժվեց[24]: Սակայն վտանգն օրըստօրե ահագնանում էր: Նախաձեռնությունը թշնամուց խլելու և ջարդերը



Շոշ գյուղը

կանխելու նպատակով մարտի 22-ի լույս 23-ի գիշերը Ղարաբաղի հայությունը զենք բարձրացրեց ադրբեջանական զավթիչների դեմ: Սակայն ուժերն անհավասար էին, և հայերին սպառնում էր աղետ: Ահա այդ ճակատագրական պահին, օգտվելով անգլիական ճնշման շոշափելի թուլացումից, գործին վճռականորեն միջամտեց ՀՀ-ն: Ապրիլի 13-ին Ղարաբաղ մտան Դրոյի և Գարեգին Նժդեհի զորամասերը: Ապրիլի 25-ին Ղարաբաղի հայության 9-րդ համագումարը ոչ միայն մերժեց Ադրբեջանի իշխանությունը, այլև Ղարաբաղը հայտարարեց Հայաստանի մաս[25]:

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ Ղարաբաղի հարցում Անգլիան, ելնելով իր աշխարհաքաղաքական հեռագնա ծրագրերից, որդեգրել էր ակնհայտ ադրբեջանամետ դիրքորոշում: Դա պայմանավորված էր մի կողմից՝ Թուրքիայի եղբայր Ադրբեջանի հակառուսական դիրքորոշումն ամրապնդելու, մյուս կողմից՝ ՀՀ-ին ընդդեմ Ռուսաստանի համագործակցություն պարտադրելու Անգլիայի ձգտումով, քանզի տվյալ ժամանակաշրջանում վերջինիս համար գլխավորը ռուսական վտանգի չեզոքացումն էր: 1920 թ. առաջին ամիսներին, երբ Ռուսաստանն Անդրկովկաս վերադառնալու հայտ ներկայացրեց, Անգլիան ձեռնարկեց բացահայտ քայլեր նաև ՀՀ-ին Խորհրդային Ռուսաստանի դեմ ստեղծվելիք ռազմական դաշինքին մասնակից դարձնելու ուղղությամբ[26]: 1920 թ. փետրվարին Բաքվից Երևան ժամանած անգլիական գլխավոր հանձնակատար Ուորդրոպը ՀՀ կառավարությանը պարզորոշ հայտնեց, որ ով վարում է Ռուսաստանին հակառակ քաղաքականություն, Անգլիայի իսկական բարեկամն է, և «Անդրկովկասի բոլոր հանրապետությունները այժմ ունեն մեկ ու մեծ վտանգավոր թշնամի, և այդ թշնամին Ռուսաստանն է: Այդ թշնամու դեմ է, որ դուք պետք է ուղղեք ձեր բոլոր ուժերը»[27]:

Ուորդրոպը ՀՀ կառավարությանն առաջարկեց Ադրբեջանի և Վրաստանի հետ ստեղծել կոնֆեդերացիա՝ ընդդեմ Ռուսաստանի: ՀՀ կառավարության անդամների այն պնդումներին, թե ՀՀ գլխավոր թշնամին հարավից է, և հարկավոր է առաջին հերթին ապահովել ՀՀ անվտանգությունը հարավից, այն է՝ Թուրքիայից, անգլիացին պատասխանեց, որ ՀՀ սահմանային վեճերը հարևանների հետ երկրորդական նշանակություն ունեն, և գլխավորը հանրապետությունների միությունն է ընդհանուր թշնամու՝ Հյուսիսի դեմ[28]: ՀՀ-ի որդեգրած չեզոքությունն այդ հարցում չընկալվեց Անգլիայի կողմից և չփոխեց նրա վերաբերմունքն իր նկատմամբ: Կարծում ենք՝ նաև այս համատեքստում պետք է դիտարկել այն փաստը, որ Անգլիան ՀՀ իշխանությունը չճանաչեց գրեթե միատարր հայ բնակչություն ունեցող Լեռնային Ղարաբաղի նկատմամբ և փոխարենը ճանաչեց նրա իշխանությունը մահմեդականների բավական մեծ տեսակարար կշիռ ունեցող, թուրքական գործակալներով ու զինվորականությամբ լցված Կարսի

և Նախիջևանի նկատմամբ: Այս կերպ Անգլիան իրենից ուղիղ կախվածության մեջ էր պահում թե՛ ՀՀ-ին, թե՛ Ադրբեջանին՝ անհրաժեշտության դեպքում նրանց իր կամքը պարտադրելու համար: Անգլիան կարող էր երկուսի համար էլ անհաղթահարելի բարդություններ հարուցել:

Այսպիսով՝ 1918-1920/21 թթ. Ղարաբաղի հարցի դրամատիկ զարգացումներից հետևում է, որ՝ 1) Ղարաբաղի, ինչպես նաև հրամայական լուծում պահանջող տարածքային մյուս խնդիրների հայանպաստ լուծումը հնարավոր է միայն ու միայն Հայաստանի ռազմատնտեսական ու գիտատեխնիկական բավարար հզորության դեպքում, 2) երբեք ու երբեք չի կարելի հույսը դնել արդարամտության և պատմականորեն հիմնավորված իրավունքների կամ միջազգայնորեն «երաշխավորված» բանակցությունների վրա, 3) Ղարաբաղի հարցում երբեք չի կարելի գնալ փոխզիջման, քանզի թշնամին դրանով չի բավարարվել և չի բավարարվելու, 4) Ադրբեջանի հետ բանակցությունները պետք է վարվեն «բանակցություն՝ բանակցության համար» սկզբունքով, որպեսզի ՀՀ-ն կեղծ խաղաղասիրությամբ հայտնի խոշոր տերությունների, նաև Ադրբեջանի կողմից չմեղադրվի խաղաղասիրական հակումների բացակայության մեջ, մինչև որ հնարավոր կլինի թշնամուն պարտադրել մեզ ցանկալի պայմանները:

Հ.գ. 1920 թ. ապրիլին Ղարաբաղի այնքան սպասված միավորումը ՀՀ-ի հետ երկար չտևեց. ընդամենը մի քանի օր անց հայությանը պատուհասեց նոր արհավիրք: Տարածաշրջանում իր ազդեցության հաստատման հայտ ներկայացրած Խորհրդային Ռուսաստանը, 1920 թ. ապրիլի 30-ից սկսած, ելնելով իր ռազմաքաղաքական շահերից, որոնցում կենտրոնական տեղ էր զբաղեցնում դաշնակից երկրների կողմից ձևավորվող հակախորհրդային դաշինքից Թուրքիային հեռու պահելու ձգտումը, իր ռազմաքաղաքական ամբողջ ներուժով նեցուկ կանգնեց նրա հովանավորությունը վայելող և նրա միջամտությամբ կամավոր խորհրդայնացած Ադրբեջանին: ՀՀ-ն հարկադրված իր զորքերը հեռացրեց Ղարաբաղից: Չունենալով որևէ իրավասություն և պատմական, իրավական ու ժողովրդագրական հիմք և անտեսելով Ղարաբաղի բնակչության 95 %-ը կազմող հայության կամքը՝ Խորհրդային Ռուսաստանը նախ Լեռնային Ղարաբաղը ճանաչեց Խորհրդային Ադրբեջանի մաս և օկուպացրեց իր զորքերով, ապա ընդամենը կուսակցական մարմին ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի միջոցով 1921 թ. հուլիսի 5-ին որոշեց Լեռնային Ղարաբաղը «թողնել» Խորհրդային Ադրբեջանի կազմում[29], իսկ իրականում բռնությամբ հանձնեց Ադրբեջանին: ■

Ալեքսանդր Խատիսյան

Օգտագործված աղբյուրներ

1. Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Երևան., 1996, էջ 468:
2. Տես Ղարիբյան Ա., Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը 1918-1921 թթ. և Մեծ Բրիտանիան, Երևան., 2012, էջ 61:
3. Տես Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 82:
4. Տես Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան., 1999, էջ 71:
5. Տես Ղարիբյան Ա., նշվ. աշխ., էջ 77:
6. Տես Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 460:
7. Տես Իշխանյան Ե., Լեռնային Ղարաբաղ (1917-1920 թթ.), Երևան., 1999, էջ 202:
8. Տես Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 448:
9. Նույն տեղում, էջ 459-460:
10. Տես Нагорный Карабах в 1918-1923гг., Сборник документов и материалов / Отв. ред. В. А. Микаелян, Ереван., 1992, էջ 62:
11. Տես նույն տեղում, էջ 66:
12. Տես Իշխանյան Ե., նշվ. աշխ., էջ 356:
13. Նույն տեղում, էջ 505:
14. 19-րդ դարում հայկական պատմական Վարարակը թուրք-թաթարների կողմից անվանակոչվել էր Խանքենդի: 1923 թ. այն վերանվանվեց Ստեփանակերտ:
15. Տես Нагорный Карабах в 1918-1923гг., Сборник документов и материалов, с.էջ 79-80:
16. Տես Ղարիբյան Ա., նշվ. աշխ., էջ 94-95:
17. Տես նույն տեղում, էջ 102:
18. Տես Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 67:
19. Տես Нагорный Карабах в 1918-1923гг., Сборник документов и материалов, էջ 140-142:
20. Տես նույն տեղում, էջ 86:
21. Տես Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան., 1993, էջ 339-341:
22. Տես Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 67:
23. Տես նույն տեղում, էջ 73:
24. Տես Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 395:
25. Տես Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Երևան., 1996, էջ 233-234:
26. ՀՀ և Անգլիայի միջև հարաբերությունների մասին մանրամասն տե՛ս Махмурян Г., Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920 гг., Ереван., 2002:
27. Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), Երևան., 2006, էջ 282:
28. Տես Ղուլյան Ց., Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների պատմությունից (1918-1920 թթ.), Երևան., 2009, էջ 304:
29. Տես Нагорный Карабах в 1918-1923гг., Сборник документов и материалов, էջ 649-650:

Բաքվի 1918 թ. ինքնապաշտպանությունն ու անկումը և դրա նշանակությունը Հայաստանի Հանրապետության համար

Անի Մելքոնյան
ԵՊՀ պատմության ֆակուլտետ, ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության անդամ

1918 թ. սեպտեմբերի 14-ին՝ չորսամսյա հերոսական դիմադրությունից հետո, ընկավ հայկական Բաքուն: Գաղտնիք չէ, որ մինչև 20-րդ դարի սկիզբը Բաքուն մեծապես հայկական քաղաք էր, այստեղ քաղաքական և տնտեսական գերակայությունը պատկանում էր հայերին: Իրադարձությունների հետագա զարգացումը աստիճանաբար փոխեց ուժերի հարաբերակցությունը: Այդ գործընթացի վրա առանձնապես մեծ ազդեցություն ունեցան 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունը և դրան հաջորդած ռուսական զորքերի դուրսբերումը ռազմաճակատից, ինչի հետևանքով Թուրքիայի ձեռքերն Այսրկովկասում ազատվեցին, և նա ձեռնամուխ եղավ իր պանթյուրքիստական քաղաքականության իրագործմանը: Ձենք ձեռք բերելու և թուրքական արշավանքին աջակցելու համար կովկասյան թաթարների (կովկասյան թուրքեր) առաջին քայլերից մեկը եղավ ճակատից վերադարձող գնացքների վրա կատարվող ավազակային հարձակումներ գործելը: Հունվարի 9-13-ը «Շամխոր» կայարանում թաթարական հարձակումներին զոհ գնացին ռուսական բանակի բազմաթիվ զինվորներ, ինչպես նաև թալանվեց զենք-զինամթերք: Բաքվի և Թիֆլիսի միջև երկաթուղային կապի շրջափակման պատճառով պատերազմի ավարտին գերմանական ճակատից տուն վերադարձող բազմաթիվ հայ զինվորներ ստիպված էին մնալ Բաքվում, որոնք իրենց դերակատարությունն ունեցան քաղաքի հետագա ինքնապաշտպանության գործում:

Այսրկովկասում պանթյուրքիստական քարոզչության ծավալման և մուսավաթական կուսակցության վարած հակահայ քաղաքականության հետևանքով ստեղծվել էր պայթյունավտանգ թշնամական մթնոլորտ: Դրությունը տագնապալի էր հատկապես Թիֆլիս-Բաքու երկաթուղու շրջանում, որտեղ թուրք ավազակներն առանց որևէ արգելքի սպանում էին հայերին: Մուսավաթը ձգտում էր Բաքվում իշխանությունից զրկելու բոլշևիկներին: Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո բանվորների ու զինվորների՝ Բաքվի ընդլայնված խորհուրդը 1917 թ. նոյեմբերի 2-ին իրեն հայտարարեց բոլշևիկյան կառավարության կողմնակից: Նույն նիստում ընտրվեց նոր գործադիր մարմին՝ Ստ. Շահումյանի նախագահությամբ:

1918 թ. մարտի 30-ին Բաքվում սկսվեցին կռիվներ բոլշևիկյան իշխանության և մուսավաթականների միջև: Երեք օր տևած մարտերն ավարտվեցին ապրիլի 1-ին մուսավաթականների պարտությամբ. երկու կողմից զոհվեց ավելի քան 3000 մարդ:

Առաջին աշխարհամարտի ընթացքում Բաքվի գրավումը թուրքերի համար ուներ տնտեսական, քաղաքական և ռազմավարական նշանակություն: Թուրքերը նպատակ էին հետապնդում Բաքվի գրավումից հետո անցնելու Միջին Ասիա և ստեղծելու թուրանական մեծ պետություն: Մայիսի վերջերին Սարդարապատում, Բաշ-Ապարանում և Ղարաքիլիսայում պարտություն կրելուց ու հազարավոր ասկյարներ կորցնելուց հետո թուրքերն իրենց արշավանքի ուղղությունը փոխեցին դեպի Բաքու և հունիսի կեսերին կենտրոնացան Գանձակում (Գյանջա):

Այդ օրերին Բաքվում Հայոց ազգային խորհուրդը՝ Աբրահամ Գյուլխանդանյանի գլխավորությամբ, և Բաքվի կոմունան՝ Ստ. Շահումյանի գլխավորությամբ, միասնական ճակատ էին կազմել ընդդեմ մուսավաթականների:

Բոլշևիկյան ոչ մեծաթիվ ուժերին այդ օրերին Բաքվում կարող էին հակադրվել միայն երկու կուսակցություններ՝ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը և թաթարական Մուսավաթը: «Դաշնակցությունը հասկանում էր, որ Մուսավաթին հարկավոր է իր բարեկամությունը այն չափով միայն, որ չափով գոյություն ունի բոլշևիկյան սպառնալիքն ու վտանգը: Բոլշևիկներին չեզոքացնելուց հետո Մուսավաթը, երկրորդ հերթին, ասպարեզից վերացնելու էր նաև Դաշնակցությանը: Կասկած չկար, որ նույնը անելու են և բոլշևիկները, երբ Դաշնակցության զինված խմբերի օգնությամբ խորտակեն Մուսավաթը»[1]: Դաշնակցության համար, սակայն, առաջնայինը հայության շահերն ու անվտանգությունն էին, և այդ առումով ավելի ընդունելի էր բոլշևիկյան իշխանությունը, քան մուսավաթականը:

Մայիսի վերջից Գանձակում հաստատված Ադրբեջանի կառավարությունը և մուսավաթական կուսակցությունը մշակում են մի շարք բնակավայրերի, այդ թվում՝ Բաքվի հայերի կոտորածի ծրագիր:

Ստեփան Շահումյան

Բաքվում գտնվող և Դաշնակցություն-բոլշևիկ համագործակցությունը գլուխ բերող Ռոստոմն իրավացիորեն գտնում էր. «Վաղը հենց որ բացուեն Բագուի դռները Ազերբէյջանի բանակի առջև, և տաճիկները տեղատրուեն Բագում, Խան-Խոյսկու ամբոխը և տաճկական բանակը, ձեռք ձեռքի տուած, պիտի սրբեն նաև Բագուի և Գանձակի հայութիւնը, ապա պիտի բարձրանան Ղարաբաղ, պիտի իջնեն Զանգեզուր և Երևանը ոտնատակ պիտի տան»[2]: Բաքվի Հայոց ազգային խորհուրդն ու ՀՅԴ-ն համոզված էին, որ նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը թուրքական վերահաս արշավանքից հեռու պահելու համար պետք էր թուրքերին հնարավորինս երկար պահել Բաքվի դարպասների մոտ: Միաժամանակ հասկանալի էր նաև, որ Բաքվի գրավման դեպքում հայ բնակչության կոտորածն անխուսափելի կլիներ, և հենց այդ պատճառով Բաքվի պաշտպանությանը մասնակցում էր քաղաքի գրեթե ողջ հայությունը: Այդ օրերին Բաքվում գտնվող Հր. Աճառյանը ստանձնեց բանակի շտաբի թարգմանչի գործը: «1918 թ. մայիս-հունիս ամիսներին դե-յուրե Բաքվի կոմունայի բանակին, իսկ դե-ֆակտո Բաքվի Հայոց ազգային խորհրդին և անձամբ Ռոստոմին ենթարկվող 15 հազարանոց հայկական զինուժն իր հերթին ճնշել էր Գանձակի մուսավաթականներին, գրավել Բաքվի նահանգի գրեթե ողջ տարածքն ու մոտենում էր Եվլախ կայարանի մատույցներին: Ստացվում էր, որ Մայիսյան գոյամարտի ու Բաքվի հայկական զինուժի մայիս-հունիսյան առաջխաղացման արդյունքում ձևավորվում է ուժերի մի նոր դասավորություն, որի ռեալ հարաբերակցությունը, վերջիվերջո, հանգեցնելու էր նրան, որ Կոմունայի միջոցով Ռուսաստանից որոշակի քանակությամբ զենք ու զինամթերք ստացող հայկական ուժերը տիրանալու էին ոչ միայն Բաքվին, այլև Գանձակին ու Ղարաբաղին, իսկ ահա թուրքերը՝ աքցանի մեջ հայտնված Երևանին ու նրա շրջակա գավառներին: Հենց սա էր այն ակնհայտ սպառնալիք-մարտահրավերը, որը համաթուրանական ծրագրերով տարված Թալեաթին հարկադրեց ժամանակավորապես հաշտվել Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման փաստի հետ և, դժվարությամբ կոտրելով Երևանի վրա նոր գրոհի կողմնակից Էնվերի դիմադրությունը, օգնություն ուղարկել Իրանի վրայով Գանձակ հասած Նուրի փաշային»[3]:

Թուրքական զորքերը ռազմական գործողությունները սկսեցին հունիսի 15-ին: Հունիսի 16-17-ին տեղի ունեցած մարտերում Համազասպ Սրվանձտյանի ղեկավարած խմբին հաջողվեց փայլուն հաղթանակ տանել: Հայկական ուժերը մինչև հունիսի 26-ը զարգացրին հաջողությունները, հունիսի 27-30-ը թեժ մարտեր ծավալվեցին Գյոգչայի շուրջ, որտեղ հուլիսի 1-ին հաղթանակ տանելուց հետո թշնամին շարժվեց Բաքվի ուղղությամբ: Քաղաքի ինքնապաշտպանության գործը դժվարանում է զինական ուժի, ռազմամթերքի և պարենի սակավության պատճառով: Ռուսաստանից անհրաժեշտ օգնություն ստանալու ակնկալիքով Ստ. Շահումյանը հեռագրեր էր հղում Լենինին: Հուլիսի 20-ի հեռագրում Ստ. Շահումյանը գրում էր. «Դրությունը դառնում է լուրջ: Բաքվի համար զինվորական ուժերի ուղարկումը պետք է ուժեղացվի և արագացվի: Կարգադրություն արեք, որ տեղական սովետները ճանապարհին չկանգնեցնեն Բաքու ուղարկվող զորամասերին: Հաղորդեցեք՝ կարող ենք օգնություն սպասել և ե՞րբ: Կրկնում եմ, անհրաժեշտ է շուտափույթ և լուրջ օգնություն զորքերով»[4]: Շահումյանի այս խնդրանքը, սակայն, մնաց անարձագանք: Իրենց հերթին խոչընդոտներ էին հարուցում նաև ռազմածովային գործերի ժողկոմիսար Տրոցկին և 1918 թ. հուլիսից հյուսիսկովկասյան շրջանի ժողկոմիսար Ստալինը:

Հուլիսի 26-ին Շահումյանը ևս մեկ հեռագիր է հղում Լենինին, որում իր անհանգստությունն էր հայտնում ռազմական օգնության ուշացման կապակցությամբ՝ գրելով. «Թախանձալից խնդրում եմ բոլոր միջոցները ձեռք առնել անմիջապես կանոնավոր զորամասեր ուղարկելու համար: Մեր դեմ կռվում են թուրքական կանոնավոր զորքերը, կան գերմանական հրահանգիչներ»[5]:

Վերջապես հուլիսի 29-ին Լենինը պատասխանում է Շահումյանի հեռագրին. «Զորքեր ուղարկելու համար

միջոցներ ձեռք կառնենք, բայց հաստատապես խոսք տալ չենք կարող»[6]: Լենինի այս պատասխանից պետք է, որ Շահումյանը կռահեր, որ ՌԽՖՍՀ-ի վրա հույս դնելն անիմաստ էր, բայց հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ Շահումյանը շարունակում էր հույսեր կապել Լենինից սպասվող ոչնչով չերաշխավորված օգնության հետ:

Այս օրհասական պահերին էր, որ քննարկվում էր Հյուսիսային Իրանից անգլիացիներին Բաքու հրավիրելու հարցը. «Մտահոգ հայության ֆիզիկական գոյության խնդրով, փորձելով Բաքվի պաշտպանության գործում օգտագործել անգլիացիների զինական ուժերը, Բաքվի Հայոց ազգային խորհուրդը, ՀՅԴ Բաքվի կենտրոնական կոմիտեն, աջ սոցիալիստ-հեղափոխականները (էսէռ) ու սոցիալ-դեմոկրատ մենշևիկների խմբակցությունները որոշեցին ապավինել անգլիացիների օգնությանը»[7]: Բոլշևիկները դեմ արտահայտվեցին այդ որոշմանը՝ գտնելով, որ Բաքվում անգլիացիների հայտնվելը նշանակելու է «….այդ քաղաքի օկուպացիան անգլիական իմպերիալիզմի կողմից, և Բաքու քաղաքը կորչելու է Ռուսաստանի համար»[8]: Մինչդեռ հայության համար այդ օրհասական պահին անգլիացիների օգնությունը խիստ անհրաժեշտ էր, քանի որ, ինչպես նշում է Ս. Վրացյանը. «Դրությունը դառնում էր հուսահատական: Ի՞նչ անել, ո՞ւմ դիմել: Ռուսաստանից հույս չկար…. Մնում էր աղոտ հավանականություն օգնություն ստանալ «երրորդ ուժից»՝ անգլիացիներից….»[9]: Ճակատագրական պահին համաշխարհային հեղափոխության հովերով տարված և ՌԽՖՍՀ տարածաշրջանային շահերով մտահոգված Բաքվի բոլշևիկյան իշխանությունը մոռանում էր թերևս ամենակարևորի՝ քաղաքի հայության անվտանգության և առհասարակ հայ ժողովրդի շահերի մասին: Այս առումով տեղին է Դավիթ Անանունի այն ընդգծումը, որ «Բոլշևիկյան իշխանությունը Բաքվում Ռուսաստանի համար էր աշխատում»[10]: Ի վերջո, Բաքվի խորհրդի հուլիսի 5-ի արտակարգ նիստը որոշում կայացրեց անգլիացիներին քաղաք հրավիրելու մասին:

Բոլշևիկներն անդրդվելի մնացին, ինչի հետևանքով ինքնապաշտպանական ուժերը պառակտվեցին, Բաքվի բոլշևիկյան իշխանությունն ի վերջո լքեց ինքնապաշտպանական ուժերին և հեռացավ քաղաքից. «Հուլիսի 28-ից մինչև 30-ի գիշերները նավերի վրա փոխադրեցին ռազմամթերքը, պարենը, բանկերի ամբողջ դրամը, զանազան ապրանքներ, ամեն ինչ, որ արժեք ուներ: Հուլիսի 30-ին նավերի վրա փոխադրվեցին բոլշևիկ զորքերն ու բոլշևիկ պարագլուխների ընտանիքները: Ապա հապճեպով խորհրդի արտակարգ նիստ գումարեցին, ուր Շահումյանը մի տգեղ ճառով անհաջողությունների ամբողջ պատասխանատվությունը ձգեց մենշևիկ-էսէռների և Հ. Հ. Դաշնակցության ու Հ. ազգ. խորհրդի վրա և հայտարարեց, որ Ժող. գործխորհուրդը հրաժարվում է իշխանությունից ու հեռանում Աստրախան….»[11]:

Աբրահամ Գյուլիսանդանյան

Այս նույն ժամանակ շարունակվում էր թուրքական զորքերի առաջխաղացումը դեպի Բաքու: Հուլիսի 31-ին թուրքերն արդեն մոտեցել էին Սումգայիթին:

«Բաքվի շուրջ ստեղծված այդ օրհասական օրերին, հուլիսի վերջերին Հյուսիսային Կովկասից Աստրախանի վրայով Բաքվի պաշտպաններին օգնության են հասնում անվանի ռազմիկներ Սեբաստացի Մուրադը (Մուրադ Խրիմյան), Սեպուհը (Արշակ Ներսիսյան) և Ստեփան Ծաղիկյանը»[12]: Բոլշևիկների փախուստից հետո ստեղծվեց նոր իշխանություն՝ Կենտրոնական Կասպիի կառավարությունը (Բաքվի դիկտատուրան), որի կազմում ընդգրկվեցին սոցիալիստ հեղափոխականներ Վելունցն ու Ումանսկին, դաշնակցականներ Առաքելյանն ու Մելիք-Յոլչյանը և երեք նավաստիներ Կասպից ծովի նավատորմիղից: Դիկտատուրայի առաջին գործը եղավ ռազմանավեր ուղարկելն ու բոլշևիկներին և նրանց տարած ավարը հետ բերելը: Նավերը վերադարձվեցին, բոլշևիկները բանտարկվեցին:

Օգոստոսի առաջին օրերին տեղի ունեցած հերոսական մարտերում զոհվեց Սեբաստացի Մուրադը, Բաքվի ինքնապաշտպանական ուժերը մեծ կորուստների գնով կարողացան կանխել թշնամու առաջխաղացումը և անցնել նրա թիկունք, ինչի հետևանքով «….թուրքերը, մարտի դաշտում թողնելով շուրջ 1000-ից ավել սպանված, հետ շպրտվեցին Բաքվից ավելի քան 40 կմ հեռու գտնվող Այլաթ կայարան»[13]:

Օգոստոսի 5-ին Բաքու հասան անգլիացիները, որոնց զինուժի թիվը մինչև օգոստոսի 19-ը հասավ 2700-ի, որից «200-ը հետ գնաց, իսկ 150-200 հոգին կռիվներում սպանվեց կամ գերի ընկավ»[14]: Բաքու հասած անգլիական ուժերը ղեկավարում էր գնդապետ Ստոքսը, հետագայում՝ նա և գեներալ Դենստերվիլը:

Մեկ ամսվա ընթացքում Բաքուն ամբողջովին շրջափակվել էր ցամաքից՝ արտաքին աշխարհի հետ կապ պահպանելով միայն Կասպից ծովի շնորհիվ: Սեպտեմբերի 1-ին զինվորականության մի մասը դիկտատուրային առաջարկեց Բաքուն հանձնել թուրքերին: Հարցը քննարկվեց կառավարության նիստի ընթացքում և մերժվեց, ավելին՝ դիկտատուրան

«….պահանջեց, որ անգլիացիք մեկնեն ճակատ՝ սպառնալով, հակառակ պարագային, թնդանոթի կրակի բռնել նրանց նավերը: Անգլիացիները համակերպվեցին: Կռիվները շարունակվեցին անընդհատ. թշնամին դանդաղ, բայց հաստատուն քայլերով մոտենում էր քաղաքին»[15]:

Բաքվի պաշտպանությունը տևեց մինչև սեպտեմբերի 14-ը, երբ անգլիացիները սկսեցին թողնել իրենց դիրքերը և նավ նստել՝ հետևելով հայ բոլշևիկների օրինակին:

«Հայերը մնացին մենակ: Դիկտատուրան սկսեց պատվիրակություն պատրաստել հաշտության բանակցությունների համար: Մյուս կողմից, նավերն էին թափվում ժողովուրդն ու զինվորները. զորամասերը քայլ առ քայլ նահանջում ու հավաքվում էին ծովափին: Որոշ մասեր, սակայն, չկարողացան հեռանալ դիրքերից ու մինչև վերջին փամփուշտը կվելուց հետո կոտորվեցին կամ գերի ընկան»[16]:

Հայոց ազգային խորհրդին ոչինչ չէր մնում անելու, բացի հայ բնակչությանը տարհանելու մասին մտածելուց: Սեպտեմբերի 15-ին սկսվեց բնակչության տարհանումը, որն իրականացվեց 60 շոգենավերով, 20-ը՝ զորքի, 40-ը՝ բնակչության համար: Հր. Աճառյանի վկայությամբ՝ այդ շոգենավերը «….լիքն էին փախստականներով, մեծ ու փոքր, կին ու երեխա, զինվոր ու քաղաքացի: Բոլորն էլ փախչում են: Գնում ենք այդպես խմբով, իրար հետ միասին, կարծես պար բռնած ծովի վրա, մինչ մեր ետևում վառվում է քաղաքը....»[17]: Հրաչյա Աճառյանին վստահվել էր առաջինը տարհանված 600 որբերին Իրան հասցնելու պատասխանատու գործը: Նա մեծ պատասխանատվությամբ կատարեց այն: Բաքվի 100.000 հայ բնակչությունից հնարավոր եղավ տարհանել 50.000-ին: Վրացյանի վկայությամբ՝ «Սեպտ. 15-ի առավոտյան Ազգ. խորհրդի անդամները,

Ռոստոմ



Հայ զինվորները Բաքվի պաշտպանական դիրքերում. 1918թ. օգոստոս

ինքնապաշտպանության կազմակերպիչներն ու ղեկավարները, զինվորներն ու բնակչության մի մասը նավերով հեռացան Բաքվից …. Վերջին նավ նստողն էր Բաքվի հերոսամարտի ոգին՝ Ռոստոմը՝ մոայլ, ընկճված ու հուսաբեկ….»[18]:

Սեպտեմբերի 15-ի կեսօրին թուրքական զորքը մտավ Բաքու: Երեք օրվա ընթացքում սպանվեց 30.000 հայ: Ինչ վերաբերում է Բաքվի 26 կոմիսարներին, ապա անգամ ինքնապաշտպանական ուժերին թշնամու դեմ մենակ թողնելը չփրկեց նրանց. «….Անդրկասպյան էսէռական իշխանությունը և անգլիացիները սեպտեմբերի 20-ին, Կրասնովոդսկից 207 վերստ հեռավորության վրա, Ախչա–Կույմա և Պերևալ կայարանների միջև, ավազուտներում, նրանց գնդակահարեցին: Կոմիսարներից 8-ը հայեր էին՝ Ստեփան Շահումյանը, Գրիգոր Ղորղանյանը (Կորգանով), եղբայրներ Արսեն և Թադևոս Ամիրյանները, Սուրեն Հովսեփյանը, Բաղդասար Ավագյանը, Արմենակ Բորյանը և Արամ Կոստանդյանը»[19]: Մինչդեռ իրադարձությունները և Բաքվի ինքնապաշտպանությունը կարող էին այլ ավարտ ունենալ, եթե Բաքվի կոմունան ճակատագրական պահին չլքեր քաղաքի պաշտպաններին:

Միանգամայն հասկանալի է, որ Բաքվի կոտորածները ծրագրել և իրականացնում էր «Իթթիհատ»-ի ղեկավարությունը՝ Հայոց ցեղասպանության գլխավոր հանցագործներից Բեհաէդդին Շաքիրի գլխավորությամբ, որը նշանակվել էր Բաքվի ոստիկանապետ:

Բաքվի ինքնապաշտպանության նշանակությունը

Ինչպես արդեն ասել ենք, Բաքվի ինքնապաշտպանական ուժերի ղեկավար Ռոստոմն իրավացիորեն գտնում էր, որ որքան երկար կարողանան թուրքերին գամված պահել Բաքվի շրջակայքում, այնքան Հայաստանի

Հանրապետությունը հնարավորինս հեռու կպահեն թուրքական վերահաս հարձակման վտանգից՝ ժամանակ շահելով մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը: Բաքվի պաշտպանների չորսամսյա հերոսական դիմադրության շնորհիվ քաղաքը գրաված թուրքական զորամասերը մեծաթիվ կորուստների գնով գամված մնացին Բաքվի շրջանում, և Թուրքիան չկարողացավ օղակել ՀՀ-ն ու իրագործել արևելահայության բնաջնջման պանթուրքիստական ծրագիրը: Իրադարձությունները ցույց տվեցին, որ իրատեսական էր Ռոստոմի՝ «Արամի հետ «երկու ձեռքով» խաղալու մարտավարությունը»[20]: Այդ մարտավարության էությունն այն էր, որ «Երևանում գտնվող և առերևույթ Բաթումի պայմանագիրը հարգող Արամը և Բաքվում գտնվող, սակայն քաղաքից հայկական ուժերի դուրսբերման՝ Բաթումի պայմանագրով նախատեսվող ՀՀ պարտավորության կատարումից հրաժարվող Ռոստոմը, ձևով հակադրվելով իրար, բովանդակությամբ նույն խաղն էին առաջ տանում: Նրանք գիտակցում էին, որ որքան ձգձգվի Բաքվի դիմադրությունը, այնքան կհետաձգվի Երևանի վրա թուրքական բանակի գրոհը»[21]:

Բաքվի ինքնապաշտպանության գլխավոր արդյունքը, հազարավոր հայերի ֆիզիկական փրկությունից զատ, նաև Հայաստանի՝ փոքրիկ և արտաքին աշխարհի հետ գրեթե կապ չունեցող հանրապետության գոյության ապահովումն էր, մի փաստ, որի համար, Բաքվի պաշտպաններից բացի, պետք է արժանին մատուցել ժամանակի երկու մեծագույն գործիչներին՝ Ռոստոմին և Արամին, քանզի անհնար է խոսել Բաքվի ինքնապաշտպանության նշանակության մասին և չնշել, որ «Արամ-Ռոստոմ տանդեմը համապատասխանաբար Երևանում ու Բաքվում, արտաքուստ հակադրվելով իրար, հրաշալի կերպով գիտակցեց ու փայլուն կերպով կանխեց թղթի վրա հաշտության արձանագրություններ ստորագրելու և ապա «հաջորդ ցատկը» կատարելու Թուրքիայի ավանդական (և այսօր էլ շարունակվող) քաղաքականության էությունն ու նպատակները: Գիտակցեց ու կանխեց թուրք-ադրբեջանական աքցանի մեջ Հայաստանը խեղդելու այն ծրագիրը, որը բացահայտվեց միայն Բաքուն գրավելուց հետո 1918 թ. սեպտեմբերին թուրքական «Ենիգյուն» թերթում տպագրված «Միացյալ» կամ «Մեծ Ադրբեջանի» քարտեզի տեսքով»[22]: Իսկ հետագա իրադարձությունները դասավորվեցին ի նպաստ Հայաստանի Հանրապետության, որովհետև Առաջին աշխարհամարտում պարտված Թուրքիան հոկտեմբերի 30-ի Մուդրոսի զինադադարով դուրս եկավ պատերազմից և հետ քաշեց իր ուժերը Այսրկովկասից, ինչի արդյունքում Հայաստանի տարածքն ընդլայնվեց՝ հասնելով մինչև 1914 թ. գոյություն ունեցող ռուս-թուրքական սահմանագիծը:

Բաքվի ինքնապաշտպանության գլխավոր դասը դարձյալ միասնությունն ու սեփական ուժերի վրա հույս դնելն է: Պատմությունը «եթե»-ներ չի սիրում, բայց դժվար չէ կռահել, թե ինչպիսի ընթացք կունենային իրադարձությունները հետագա 2 տարիների ընթացքում, և ինչպիսին կլիներ այսօր ուժերի հարաբերակցությունը տարածաշրջանում, եթե Շահումյանն ու Բաքվի կոմունարները ժամանակավորապես մոռանային Խորհրդային Ռուսաստանի շահերի մասին, չջլատեին ինքնապաշտպանական ուժերը, և ի վերջո՝ Բաքուն չգրավվեր թուրքերի կողմից…

Օգտագործված աղբյուրներ

1- Հատված Հովհաննես Քաջազնունու՝ 1923 թ. ապրիլին Հ. Յ. Դաշնակցության արտասահմանյան մարմինների խորհրդաժողովին ներկայացրած զեկուցագրից., http://www.aniarc.am/2015/08/24/baku-arf-musavat-bolsheviks-1918/ (մուտք՝):
2- Արամ Մանուկյան. ազգային և պետական գործիչը (Հոդվածների ժողովածու), Եր., 2010, էջ 63:
3- Նույն տեղում, էջ 60:
4- Ստեփանյան Գ., Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Բաքվի նահանգում 1918-1920 թվականներին, http://hpj.asj-oa.am/2586/1/2008-3(31).pdf (մուտք՝), էջ 36:
5- Նույն տեղում, էջ 37:
6- Նույն տեղում:
7- Նույն տեղում:
8- Նույն տեղում, էջ 37-38:
9- Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 177:
10- http://hpj.asj-oa.am/2586/1/2008-3(31).pdfՍտեփանյան Գ., նշվ. Աշխ., էջ 38:
11- Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 138:
12- http://hpj.asj-oa.am/2586/1/2008-3(31).pdf Ստեփանյան Գ., նշվ. աշխ., էջ 38:
13- Նույն տեղում, էջ 39:
14- Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 181:
15- Նույն տեղում:
16- Նույն տեղում, էջ 182:
17- Աճառյան Հ., Կյանքիս հուշերից, Եր., 1967, էջ 346-347:
18- Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 182:
19- http://hpj.asj-oa.am/2586/1/2008-3(31).pdf Ստեփանյան Գ., նշվ. Աշխ., էջ 42:
20- Արամ Մանուկյան. ազգային և պետական գործիչը (Հոդվածների ժողովածու), էջ 62:
21- Նույն տեղում, էջ 62-63:
22- Նույն տեղում, էջ 65:

Օգտագործված գրականության եւ նյութերի ցանկ

ա) Գրականություն

1. Աճառյան Հ., Կյանքիս հուշերից, Եր., 1967:
2. Արամ Մանուկյան. ազգային և պետական գործիչը (Հոդվածների ժողովածու), Եր., 2010:
3. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993:

բ) Համացանցային նյութեր

1. http://www.aniarc.am/2015/08/24/baku-arf-musavat-bolsheviks-1918/
2. http://hpj.asj-oa.am/2586/1/2008-3(31).pdf

Հայաստանի անկախության հռչակագիրը

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը, արտահայտելով Հայաստանի ժողովրդի միասնական կամքը, գիտակցելով իր պատասխանատվությունը հայ ժողովրդի ճակատագրի առջև համայն հայության իղձերի իրականացման և պատմական արդարության վերականգնման գործում, ելնելով «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» սկզբունքներից և միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերից, կենսագործելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը, հիմնվելով 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման վրա, զարգացնելով 1918 թվականի մայիսի 28-ին ստեղծված անկախ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ավանդույթները, խնդիր դնելով ժողովրդավարական, իրավական հասարակարգի ստեղծումը,

ՀՌՉԱԿՈՒՄ Է

անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը:

1. Հայկական ԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն, կրճատ՝ Հայաստան: Հայաստանի Հանրապետությունն ունի իր դրոշը, զինանշանը և հիմնը:

2. Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան պետություն է՝ օժտված պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ, լիիրավությամբ: Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում գործում են միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները:

3. Հայոց պետականության կրողը Հայաստանի Հանրապետության ժողովուրդն է, որն իր իշխանությունը իրագործում է անմիջականորեն և ներկայացուցչական մարմինների միջոցով՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների հիման վրա: Հանրապետության ժողովրդի անունից հանդես գալու իրավունքը պատկանում է բացառապես Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին:

4. Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող բոլոր քաղաքացիների համար սահմանվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը: Արտերկրի հայությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունք ունի: Հայաստանի Հանրապետության քաղաքացիները գտնվում են նրա պաշտպանության և աջակցության ներքո: Հայաստանի Հանրապետությունը ապահովում է իր քաղաքացիների ազատ ու իրավահավասար զարգացումը՝ անկախ ազգությունից, ռասայական պատկանելությունից և դավանանքից:

5. Հայաստանի Հանրապետությունը իր անվտանգությունը և սահմանների անձեռնմխելիությունը ապահովելու նպատակով ստեղծում է Գերագույն խորհրդին ենթակա սեփական զինված ուժեր, ներքին զորքեր, պետական և հասարակական անվտանգության մարմիններ: Հայաստանի Հանրապետությունը ունի ԽՍՀՄ սպառազինության իր մասնաբաժնի իրավունքը: Հայաստանի Հանրապետությունն ինքն է որոշում իր քաղաքացիների զինվորական ծառայության կարգը: Այլ երկրների զորամիավորումները, նրանց ռազմական բազաները և շինությունները կարող են տեղաբաշխվել Հայաստանի Հանրապետության տարածքում միայն նրա Գերագույն խորհրդի որոշմամբ: Հայաստանի Հանրապետության զինված ուժերը կարող են օգտագործվել միայն նրա Գերագույն խորհրդի որոշմամբ:

6. Հայաստանի Հանրապետությունը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, վարում է անկախ արտաքին քաղաքականություն, անմիջական հարաբերություններ է հաստատում այլ պետությունների, ԽՍՀՄ ազգային-պետական կազմավորումների հետ, մասնակցում է միջազգային կազմակերպությունների գործունեությանը:

7. Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունները, նրա ժողովրդի սեփականությունն է: Դրանց տիրապետման, օգտագործման և տնօրինման կարգը որոշվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով: Հայաստանի Հանրապետությունը ունի ԽՍՀՄ ազգային հարստության, այդ թվում՝ ոսկու պաշարների, ալմաստի և վալյուտային ֆոնդերի մասնաբաժնի իրավունք:

8. Հայաստանի Հանրապետությունը սեփականության բազմաձևության հիման վրա որոշում է իր տնտեսավարման սուբյեկտները և կարգը, հիմնում սեփական դրամ, ազգային բանկ, ֆինանսավարկային համակարգ, հարկային և մաքսային ծառայություններ:

9. Հայաստանի Հանրապետությունը իր տարածքում ապահովում է խոսքի, մամուլի, խղճի ազատություն, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների իրավահավասարություն, իրավապահ մարմինների և զինված ուժերի ապաքաղաքականացում:

10. Հայաստանի Հանրապետությունը ապահովում է հայերենի՝ որպես պետական լեզվի գործառությունը հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում, ստեղծում կրթության, գիտության և մշակույթի սեփական համակարգ:

11. Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին:

12. Սույն հռչակագիրը հիմք է ծառայում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մշակման, իսկ գործող Սահմանադրության մեջ՝ փոփոխությունների և լրացումների կատարման, պետական մարմինների գործունեության, հանրապետության նոր օրենսդրության մշակման համար:

1990թ. օգոստոսի 23-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ընդունեց Հայաստանի անկախության մասին հռչակագիրը:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ը ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

ԴՐՕՇԱԿ